Ժամանակակից միջազգային իրադրությունը ձեռք է բերել նոր սրակ, որը բնութագրվում է երկու հավամարտ համակարգերի բախումներից միջպետական հարաբերությունների նոր մոդելին անցումով: Այս մոդելի ձևավորումը տեղի է ունենում համընդհանուր միջուկային սպառնալիքի նվազման ֆոնի վրա՝ ուղեկցվելով աշխարհի տարբեր մասերում տարածաշրջանային, սպառնալիք-էթնիկական, կրոնական և այլ բնույթի հակամարտությունների հետևանքով տեղի ունեցող ռազմական բախումների մակարդակի բարձրացմամբ: Որպես կանոն, պինված բախումները նախորդում են տեղային պատերազմներին, իսկ դրանք իրենց հերթին նպաստում են համաշխարհային պատերազմների հրահրմանը, ռազմավորձագաշտ են դառնում սպառնալիքային նորագույն նրմուշների, ռազմական գործողությունների վարման նոր մեթոդների ու ձևերի փորձարկման համար (Բուալիան, Գերմանիան՝ Իսպանիայում 1936 — 1939 թթ.):

Ի տարբերություն համաշխարհային պատերազմից, **տեղային պատերազմն ընդգրկում է համեմատաբար փոքր թվով պետություններ և սահմանափակ աշխարհագրական շրջան** (տարածաշրջան): Սակայն ցանկացած դեպքում տեղային պատերազմը բնութագրվում է առնվազն մեկ պատերազմող երկրի որոշակի վիճակով՝ պետական կառույցի հաստատությունների գործունեության որոշում արմատական փոփոխություններով: Տեղային ռազմական իրադրության տարատեսակ է **ռազմական (գինված) բախումը**, որի բնորոշ գիծը *պինված ուժերի որոշ սահմանափակ քանակակազմի գործողու-*

*թյուններն են*, այն դեպքում, երբ երկրի բնակչության մյուս մասն ապրում է խաղաղ կյանքով: Այդ իսկ պատճառով նույն տեղային պինված իրադրությունը մասնակից պետության (կամ մի խումբ պետությունների) համար կարող է դիտվել որպես տեղային պատերազմ (օրինակ՝ Բուլղարիա և Իրաքի համար 1991 թ. հունվար-փետրվարին), իսկ այլ պետությունների համար՝ որպես պինված բախում:

Ներքին և արտաքին հակասությունները հարթելու նպատակով պինված ուժերի կիրառման միջազգային պրակտիկայով պայմանավորվեց պատերազմների դասակարգման ևս մեկ հատկանիշ՝ պատերազմական գործողությունների վարման ինտենսիվությունը: Այսպիսի մոտեցման հիմքում դրված է պինված ուժերի կիրառման փորձը. ԱՄՆ-ի՝ Վիետնամում, Գրենադայում, Պանամայում, ԽՍՀՄ-ի՝ Աֆղանստանում, Մեծ Բրիտանիայի՝ Ֆոլկլենդյան կղզիներում, Հարավսլավիայում, նախկին ԽՍՀՄ հանրապետությունների՝ ներպետական հակամարտությունների լուծման ժամանակ:

Վերջին տարիներին արտասահմանյան մամուլում ռազմական բախումների նկատմամբ դրսևորվում են նոր մոտեցումներ, ըստ որոնց պինված պայքարի ժամանակակից ձևերը բաժանվում են երեք խմբի՝ բարձր, միջին և ցածր ինտենսիվությամբ:

*Բարձր ինտենսիվության բախումների* թվին դասվում են պետությունների կամ նրանց դաշնադրությունների միջև հսկայական մատչաբեր պատերազմները, որոնցում պատերազմող կողմերը որոշակի քաղաքական նպատակ-

ների հասնելու համար օգտագործում են իրենց տրամադրության տակ եղած ուժերն ու միջոցները, ներառյալ միջուկային և վանգվածային խոցման այլ զինատեսակներ:

*Միջին ինտենսիվությամբ բախումների* թվին դասվում են չափավոր ինտենսիվությամբ տարածաշրջանային դաշնադրային պատերազմները, լայնամասշտաբ տարածաշրջանային ինտերվենցիաները, ինչպես նաև միջին մասշտաբի տարածաշրջանային ճգնաժամների լարված փուլում տեղի ունեցող պատերազմական գործողությունները:

*Ցածր ինտենսիվությամբ բախումների* թվին դասվում են սահմանափակ բնույթի քաղաքական գործողությունները, որոնք կիրառվում են որոշակի քաղաքական, տնտեսական և հոգեբանական նպատակների հասնելու համար:

ՆԱՏՕ-ի ռազմավարական նշանակություն ունեցող դաշնադրությունը ներկա փուլում հավատարիմ է մնում երկու տիպի պատերազմների վտրման իր հայեցակարգին՝ *համընդհանուր և սահմանափակ*՝ ավելի հաճախ սովորական միջոցների կիրառմամբ: Տարածաշրջաններում համընդհանուր կամ սահմանափակ միջուկային պատերազմների առաջացման հավանականությունը համարվում է փոքր: Համընդհանուր կամ սահմանափակ պատերազմի ծագման առավել հավանական պատճառ կարող է լինել առանձին երկրների միջև տարածաշրջանային ընդհարումների վերաճումը անմիջական, ավելի մեծամասշտաբ վիճված բախման:

Անհրաժեշտ է նկատի ունենալ սովորական պատերազմների մի առանձնահատկություն. դա այն է, որ ի հայտ են եկել զինված բախումների կանխման և կարգավորման ուղղությամբ սկզբունքորեն նոր հնարավորություններ: Նըման բախումների հավանականության որոշումը, ինչպես նաև ճգնաժամային իրադրության հետագա վարգայման հսկողությունը, վարգայման վաղ փուլում քաղաքական-դիվանագիտական, տնտեսական և այլ ոչ պատերազմական

միջոցների համակցությամբ դրանք չնվորացնելու նպատակով, կարող է հիմք դառնալ ռազմական բախումների վերացման համար:

**Ռազմավարական տեսակետից պատերազմը զինված ուժերի այնպիսի գործողությունների համախումբ է, որոնք իրագործվում են հակառակորդին ջախջախելու, նրա տնտեսական բազան քայքայելու, տարածքը գրավելու նպատակով և վերջին հաշվով՝ նրան հարկադրելու քաղաքական բանակցություններ վարելու հաջողությամբ հանդես եկած կողմի համար շահավետ պայմաններով կամ անվերապահորեն ընդունելու հաղթանակած կողմի հետպատերազմյան պայմանները:**

Վերջին ժամանակներս հնարավոր պատերազմների ռազմավարական բընույթի գնահատման գործում դրսևորվում են նոր մոտեցումներ: Դա պայմանավորված է այն բանով, որ ՆԱՏՕ-ի անդամ մի շարք պետություններում աշխատանքներ են տարվում ռազմական ենթակառուցյների վերակողմնորոշման ուղղությամբ. նախկին ԽՍՀՄ-ի դեմ լայնամասշտաբ պատերազմի փոխարեն նախապատրաստվում են տեղային և տարածաշրջանային ռազմական բախումների: Այս կապակցությամբ ճըլզգրտվել են ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ռազմավարության հիմնական սկզբունքները, որոնցից ամենագլխավորներն են.

— միջուկային զենքի սպառնադիքի տակ հուսալի ռազմավարական զսպումը՝ Կուգակցված Եվրոպայում մարտավարական միջուկային զենքի քանակի նվազեցմամբ,

— սահմանափակ ուժերով ներկայությունը աշխարհի կարևորագույն տարածաշրջաններում և դրանց անհապաղ արդյունավետ արձագանքումը ճգնաժամային իրավիճակներին,

— զինված ուժերի խոշոր Կորսիւըմբերի արագ վերակազմավորման ունակության ապահովումը:

Ցանկացած պատերազմի բովանդակությունն ու առանձնահատկությունները համակարգային տեսակետից գնահատելու նպատակով ռազմագիտութ-



յան մեջ գոյություն ունի «պատերազմի բնույթ» հասկացությունը, որը բնորոշվում է որպես պատերազմի առավել էական բնութագրերի և ցուցանիշների համախումբ և արտացոլում է նրա սույիալ-

պատերազմի վարման մեթոդներն ու ձևերը, պատերազմի հնարավոր պարբերացումն ու հիմնական փուլերի բովանդակությունը, ռազմական գործողությունների առանձնահատկությունները,



Տեղային պատերազմ. Աֆղանստան, 1981 թ.  
 («Combattre, Photographs of Magnum Photos», Paris, 1998)

քաղաքական ու ռազմավարական (ռազմատեխնիկական) բովանդակությունը:

*Սույիալ-քաղաքական բովանդակությունը* բացահայտելիս վերլուծության են ենթարկվում այն հարցերը, որոնք կապված են առաջին հերթին պոտենցիալ վրտանգի գլխավոր աղբյուրների, հնարավոր հակառակորդների և դաշնակիցների որոշման ու գնահատման և պատերազմում նրանց ռազմաքաղաքական նպատակների պարզորոշման հետ:

*Ռազմավարական (ռազմատեխնիկական) առումը* բացահայտելիս վերլուծվում են հակամարտող կողմերի հընարավոր ռազմավարական նպատակների ու խնդիրների բովանդակությունը, ագրեսորի կողմից պատերազմի սանձազերծման պայմաններն ու մեթոդները, կիրառվելիք զենքի առավել հնարավոր տեսակները, պատերազմի մասշտաբներն ու ռազմական գործողությունների թափը,

դրանցից սպասվող հետևանքներն ու պատերազմի հնարավոր տևողությունը:

Այժմ ռազմավարական վերլուծության ենթարկենք պատերազմի բովանդակությունը բնութագրող ցուցանիշները:

**Ռազմավարական նպատակը** ռազմական գործողությունների նախանըշված (պլանավորված) արդյունքն է, որին հասնելը ընդհանուր առմամբ պատերազմի կամ նրա առանձին փուլերի ընթացքում պետք է բերի ռազմաքաղաքական և ռազմավարական իրադրության արմատական փոփոխության:

Տեղային պատերազմների (բախումների) ժամանակ ռազմավարական նպատակները սովորաբար կրում են սահմանափակ բնույթ: Դրանք չեն հետապնդում հակառակորդին լիովին ջախջախելու նըպատակ և, որպես կանոն, սահմանափակվում են նրան որոշակի վնասի պատճառումով: Վերջին 40 տարիների ընթաց-

քում տիպական են նաև այնպիսի ռազմավարական նպատակները, ինչպիսիք են պետական ու ռազմական կառավարման կազմավորումը, հակառակորդի տնտեսական և պաշտպանական ներուժի քայքայումը, նրա ռազմավարական նշանակություն ունեցող կարևորագույն շրջանների գրավումն ու հսկողության տակ առումը, տվյալ քաղաքական վարչակարգի փոխարինումը այլ վարչակարգով և այլն:

Արդի պայմաններում ռազմավարական նպատակի բովանդակություն կարող են լինել.

ա) հակառակորդի պինված ուժերի ջախջախումը ռազմական գործողությունների թատերաբեմում (ՌԳՖ) կամ կարևոր ռազմավարական ուղղություններում,

բ) նրա տարածքի կենսականորեն կարևոր, որպես կանոն՝ պզալի մակերեսով, շրջանների գրավումը,

գ) տնտեսական, ռազմական և այլ բնագավառներում հակառակորդին այնպիսի վնասի պատճառումը, որի դեպքում կտրուկ նվազում է նրա դիմադրողականությունը, և այլն:

**Ռազմավարական խնդիրները** որոշակի կոնկրետ պահանջներ են պինված ուժերի միաժամանակյա կամ հաջորդական այնպիսի գործողությունների նկատմամբ, որոնք ուղղված են ռազմավարական նպատակների իրականացման: Ռազմավարական խնդիրները, կարծես, մանրամասնում և պարզորոշում են որոշակի ռազմավարական նպատակը.

ա) ըստ իրականացման փուլերի,

բ) նշելով օբյեկտների նկատմամբ պինված ուժերի գործառնվող ջանքերը,

գ) պարուրելով նրա հատուկ տարածական ու ժամանակային շրջանները:

Ռազմավարական խնդիրները որպես ամբողջություն վերցված ռազմավարական նպատակի բովանդակության կոնկրետացումն են, այսինքն՝ տվյալ նպատակին հասնելու միջոցների սահմանումը:

**Պատերազմի սկզբի պայմաններ** ստեղծվում են ռազմաքաղաքա-

կան իրադրության լարվածության աստիճանը: Ռազմական գործողություններն սկսվելուց անմիջապես առաջ չափազանց կարևոր է նաև որոշել ագրեսիայի հնարավոր օբյեկտի հակադրման բնույթը: Ռազմաքաղաքական իրադրության սրման պայմաններում ռազմական գործողությունների սկսվելուն կարող է նախորդել տարբեր տևողությամբ սպառնալից ժամանակամիջոց:

**Պատերազմի սանձազերծման մեթոդ** հասկացության տակ նկատի է ունեցվում ագրեսորի կողմից գործադրվող հնարների (գործելակերպի) ամբողջությունը, մասշտաբը և պինված ուժերի կիրառման կարգը հարձակման պահին, ինչպես նաև նրա կողմից կիրառվող զենքը:

Շատ դեպքերում պատերազմներն սկսվել են մի պետության կողմից մյուսի վրա հանկարծակի հարձակմամբ: Ինչպես ցույց է տալիս փորձը, հարձակման պահը և նրա պինված ուժերը ավելի հաճախ անմարտունակ են լինում ու ըսկը պրենական շրջանում անհաջողության են մատնվում: Պատմությանը հայտնի են շատ օրինակներ, երբ պատերազմի (բախման) ելքը վճռվել է առաջին իսկ հանկարծակի հարվածով (1967 թ. արաբա-իսրայելական պատերազմը, ԱՄՆ-ի ներխուժումը Գրենադա 1983 թ. և Պանամա 1989 թ., Իրաքի ագրեսիան Բուվեյթում 1990 թ.):

Տեղային պատերազմների (բախումների) հանկարծակի սանձազերծման հետ մեկտեղ հայտնի են նաև դեպքեր, երբ որոշ իրադարձություններ վերաճում են ռազմական գործողությունների: Այդ դեպքերում պատերազմները սովորաբար ծագում են մեծ երկրի ներսում հակամարտող քաղաքական խմբավորումների նախնական ընդհարումների հետևանքով (Հարավային Վիետնամը, Կոնգոն, Անգոլան, Աֆղանստանը, Եթովպիան), տարածքային վեճի կամ սահմանային միջադեպի հետևանքով (Հնդկաստանը և Պակիստանը, Չինաստանը և Վիետնամը, Իրաքը և Իրանը, Եթովպիան և Սոմալին), գաղութարար երկրների պինված ուժերի և գաղութների ա-

զատարար ուժերի հակամարտության հետևանքով (Անգլիան՝ Օմանում, Ֆրանսիան՝ Ալժիրում, Պորտուգալիան՝ Անգոլայում), հետադիմական ուժերի կողմից ինքնիշխան պետության վրա սկզբնական հարձակման հետևանքով, որը ագրեսոր պետության կողմից նախապատրաստված է եղել իր տարածքում կամ հարակից պետության տարածքում (ԱՄՆ-ը՝ ընդդեմ Գվատեմալայի և Կուբայի):

Արդի պայմաններում պատերազմի սանձազերծման առավել տիպական մեթոդների թվին կարելի է դասել հետևյալները.

1. ՌԳԹ-ում մշտապես ծավալված ընդհանուր նախանշանական պորախմբավորումների հանկարծակի հարձակումը,

2. ՌԳԹ-ում ԶՈՒ-ի նախապես մոբիլիզացված և ծավալված խմբավորումների հարձակումը: Հանկարծակի հարձակումը սովորաբար սկսվում է օդային հարձակողական գործողությամբ, որի ընթացքում հակառակորդի ՀՕՊ-ի ճընշումից հետո մի քանի հզոր ավիացիոն և հրթիռային (կամ հզոր հրթիռահրետանային) հարվածներ են հասցվում դիմակայող զորքերի պաշտպանության ողջ խորությամբ՝ բարձր ճշգրտության պինատեսակների լայն կիրառմամբ:

3. Չի բացառվում նաև պատերազմի սանձազերծումը սահմանային միջադեպեր հրահրելու միջոցով՝ ռազմաձևակառուցի հետագա ընդլայնմամբ և մարտի մեջ գլխավոր ուժերի ներգրավմամբ:

4. Նախկինի պես արտակարգ վրտանգավոր մեթոդ է մնում հանկարծակի միջուկային հարձակումը:

**Կիրառվող զենքի** տեսակետից պատերազմը կարող է լինել *միջուկային* կամ *սովորական*: Վերջին դեպքում ռազմական գործողություններն իրականացվում են առանց միջուկային զենքի կիրառման: Վերլուծելով պատերազմում կիրառվելիք հնարավոր պինատեսակների հարյը՝ անհրաժեշտ է որոշել.

1. ագրեսորի կողմից միջուկային զենքի և վանգվածային խոցման այլ միջոցների կիրառման հավանականությունը,

տեսակը և մասշտաբները ռազմական գործողությունների հենց սկզբից,

2. այն ծայրահեղ պայմանները, որոնց դեպքում սովորական միջոցներով մղվող պատերազմի ընթացքում պատերազմող կողմերից մեկը կարող է կիրառել վանգվածային խոցման զենք,



Ռուսական զինվորը Չեչնիայում.  
Գրոզնի, 1995 թ.  
(«Red Cross, Red Crescent», № 1, 1996)

3. նոր ֆիզիկական սկզբունքների վրա հիմնված պինատեսակների կիրառման հավանականությունը, հնարավոր ժամկետները, պայմաններն ու մասշտաբները,

4. սովորական զենքի հնարավորությունների մեծացման ուղղություններն ու միտումները:

Պատմական փորձը վկայում է, որ եթե պատերազմում են առավել վարգապած պետություններ՝ հիմնականում կիրառելով կանոնավոր պինված ուժեր, ապա կիրառվում են նաև մարտական տեխնիկայի ու սպառազինության ժամանակակից նմուշներ՝ բացառությամբ միջուկային զենքի (Կորեայի, արաբա-

խրայելական, իրանա-իրաքյան, Պարսից ծոցի պատերազմները):

Մի այլ խմբում կարելի է միավորել այն պատերազմներն ու բախումները, որոնցում կողմերից մեկը կիրառում է պինված ուժերի «դասական» խմբավորումներն ու պինված պայքարի ժամանակակից միջոցները (պատերազմները Վիետնամում, Ալժիրում, Անգոլայում, Աֆղանստանում):

Երրորդ խումբը կազմում են այն պատերազմները, որոնք մղվում են կանոնավոր պորթերի մեջ չընդգրկված կազմավորումների և պարտիզանական ջոկատների կողմից՝ հնապեմ պինատեսակների նմուշների հազվադեպ կիրառությամբ (քաղաքայինական պատերազմները Հարավարևելյան Ասիայում և Աֆրիկայում 1950—1960 թթ.):

Տեղային պատերազմների ու բախումների պատմությունը վկայում է, որ դրանք մղելու համար սովորաբար բավարար են եղել ազրեսոր պետության՝ խաղաղ ժամանակների համար նախատեսվող պինված ուժերի սպառազինությունը, տեխնիկան ու նյութական միջոցները: Այն դեպքերում, երբ ազրեսորն իր առջև դնում էր խնդիրների բացառապես նեղ շրջանակ, տեղային մարտական գործողություններում ներգրավվում էր պինված ուժերի փոքր մասը՝ ընդամենը մի քանի պորամիավորում (պորամաս): Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում այս նպատակների համար հաճախ կիրառվում էր 82-րդ օդադեսանատային դիվիզիան՝ ուժեղացման ուժերի և միջոցների ոչ մեծ լրակազմով (Գվատեմալայում, Գոմինիկյան Հանրապետությունում, Գրենադայում, Պանամայում):

**Ըստ մասշտաբների** ժամանակակից պատերազմներն ընդունված է բաժանել համաշխարհային և տեղային պատերազմների:

Համաշխարհային պատերազմի դեպքում հակամարտող կողմերի դերում հանդես են գալիս պետությունների դաշնադրությունները՝ իրենց պինված ուժերով հանդերձ: Այդպիսի պատերազմը մղվում է վճռական նպատակներով,

ընդգրկում է երկրագնդի պետությունների պզալի մասը և շոշափում է համաշխարհային հանրության մեծաթիվ երկրների շահերը:

Հնարավոր է նաև պատերազմների մի այլ՝ *տարածաշրջանային*, տեսակ: Այդպիսի պատերազմներում որպես հակամարտող կողմեր կարող են հանդես գալ մի շարք պետություններ, այդ թվում նաև արդյունաբերական առումով առավել պարզացած երկրները: Տարածաշրջանային պատերազմի տիպական օրինակ է 1991 թ. Պարսից ծոցում մղված պատերազմը:

Պատերազմի մասշտաբով է էապես որոշվում ռազմական գործողությունների տարածքային թափը: Արդի պայմաններում ռազմական գործողությունները կարող են ծավալվել բոլոր ֆիզիկական ոլորտներում, այդ թվում նաև տիեզերական տարածությունում:

Ներկայումս ի հայտ է եկել պատերազմների ես մի տեսակ, որն առանձնանում է մասնակիցների սոցիալ-քաղաքական կազմով: Դրանք պետության հետ չառնչվող պատերազմներն են: Պատերազմների այս տեսակն իր իրավական ձևակերպումն ստացավ ՄԱԿ-ի կանոնադրության ընդունումով: Այդ փաստաթուղթի 42-րդ հոդվածը սահմանում է, որ եթե խաղաղ միջոցներն անպոր են լուծելու հակամարտությունը, ապա միջազգային հանրությունը ՄԱԿ-ի հովանու ներքո (իսկ դա ոչ պետական կառույց է) «միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու նպատակով» կարող է ձեռնարկել օդային, ծովային կամ ցամաքային ուժերի այնպիսի գործողություններ, որոնք կհամարվեն այդ նպատակների համար անհրաժեշտ: Ըստ քաղաքական նպատակների բնույթի այսպիսի պատերազմները կարող են սահմանվել որպես միջազգային խաղաղության վերահաստատմանն ուղղված պատերազմներ:

Պատմությունը ցույց է տալիս, որ ռազմական գործողությունների ծավալի առումով տեղային պատերազմներն ու

բախումները սովորաբար սահմանափակված են լինում մեկ-երկու հարակից պետությունների տարածքով և ծովերի ափամերձ ջրատարածություններով: Բացառություն են կազմում Հնդկաչինի և Մերձավոր Արևելքի տարածաշրջաններում տեղի ունեցած պատերազմները, որոնց ժամանակ մարտական գործողությունները ծավալվել էին երեք և ավելի պետությունների տարածքներում:

**Ռազմական գործողությունների մասին** խոսելիս պետք է նշել առհասարակ պատերազմների վարման մեթոդները սովորական միջոցներով պատերազմում և միջուկային պատերազմում (աշխարհի ռազմական տեսարանները վերջինս չեն բացառում):

*Առաջին դեպքում*, օրինակ, դա կարող է լինել հակառակորդի պինված ուժերի խմբավորումների հետևողական ջակջախումը նրա տարածքի նվաճմամբ: *Երկրորդ դեպքում*՝ միաժամանակյա միջուկային հարվածներով հակառակորդի խոցումը նրա տարածքի ողջ խորությամբ, այնուհետև նրա կտրևոր շրջանների նվաճումը (եթե դա հնարավոր լինի):

Չպետք է մոռանալ նաև ռազմաճակատային, բանակային և այլ օպերացիաներում պինված ուժերի գործողությունների մասին: Դրանցից յուրաքանչյուրը, անկախ ստորակարգությունից, պետք է բացահայտի հակառակորդի պորբերի կոնկրետ հնարներն ու կիրառվող պորաշարժերի բնույթը:

**Ռազմական գործողությունների ձևը** որոշակի նպատակների հասնելու համար պինված ուժերի կիրառման որոշակի կարգն է: Այս կամ այն ձևով անցկացվող ռազմական գործողությունները, որպես կանոն, կանոնակարգվում են տարածական և ժամանակային շրջանակներով, իրականացվում են մեկ-միասնական դեկրավորությամբ՝ ըստ որոշակի մտահղղացման ու կոնկրետ սղանի:

Ռազմական գործողությունների առավել տարածված ձևերից մեկն է *օպերային*: Օպերայինները տարբերվում են ըստ մասշտաբի, անցկացման ժամանակի (առաջին, հաջորդող), կախված կի-

րառվող ուժերից՝ լինում են համապորային, համատեղ, ինքնուրույն: Ըստ իրենց նպատակների օպերայինները կարող են լինել պաշտպանական և հարձակողական (հակահարձակողական):

Պատմականորեն ըստ ռազմական գործողությունների ձևերի ու մեթոդների տարբերում են տեղային պատերազմների երկու խումբ:

*Առաջին խմբին* են դասվում այն պատերազմները, որոնք մղվում են պորբերի խոշոր պորայնների և պայքարի ժամանակակից միջոցների կիրառմամբ: Դրանցում ռազմական գործողությունները ծավալվում են համեմատաբար լայնատարած ռազմաճակատում, պատերազմող կողմերը նախապատրաստում և իրականացնում են օպերայիններ ու մարտեր՝ դրանց դասական ըմբռնմամբ:

*Երկրորդ խումբը* բնութագրվում է ՌԳԹ-ում տիրող հատուկ ցամաքային պայմաններում (լեռներ, անապատներ, ջրնոցներ) կամ համաշխարհային օվկիանոսի ջրատարածությունում տեղի ունեցող պինված պայքարով: Այսպիսի պատերազմներին բնորոշ է հատկորեն արտահայտված համատարած ռազմաճակատների բացակայությունը, ոչ մեծաթիվ պորայններով (ուժերով) խնդիրների լուծման ժամանակ (ընդամենը՝ հաճախ հեռավոր շրջաններում) գործողությունների ոչ ավանդական ձևերի և մեթոդների կիրառումը:

*Հարձակողական գործողություններին* բնորոշ է հանկարծակի հարվածներ հասցնելը (ցամաքից, օդից կամ ծովից), դրանց արդյունքների արագ և հուսալի ամրապնդումը:

*Պաշտպանությունն* ավելի հաճախ կիրառվում է կարճ ժամանակով՝ հակառակորդի հարվածը կասեցնելու և գրավված տարածքները պահպանելու նպատակով: Առավել երկարատև պաշտպանական գործողություններ մղվում են ռազմածովային բազաները, օդանավակայանները, այլ կարևորագույն ռազմավարական օբյեկտներ պահպանելու համար: Պաշտպանությունը բնորոշվում է

մեծ ակտիվությամբ և զորաշարժությամբ:

Տեղային պատերազմների ու բախումների ընթացքում կիրառվում է նաև գործողությունների մի այնպիսի հատուկ ձև, ինչպիսին է *ռազմական շրջափակումը* (ավելի հաճախ՝ ծովային և օդային): Շրջափակման գործողությունների նպատակն է հակառակորդի մեկուսացումը արտաքին աշխարհի օգնությունից, նրա վրա ուժային ճնշման գործադրումը և հարկադրումը կապիտուլյացման (Ալժիրի, Եգիպտոսի, Կուբայի, Ֆոլկլենդյան կղզիների, Իրանի, Վիետնամի շրջափակումները, դա կարելի է տարածել նաև Հայաստանի վրա՝ Ադրբեջանի և Լոռուից իրագործվող միջոցառումների առումով):

**Պատերազմի հնարավոր պարբերացման** հարցը բննարկելիս անհրաժեշտ է.

— պարզել մարտում համաշխարհային և տեղային պատերազմների պարբերացման վերաբերյալ ներկայումս ընդունված տեսակետների փոփոխման հնարավորությունը (նախնական, հաջորդող և ավարտական փուլեր),

— պարզել բացահայտելու յուրաքանչյուր փուլի բովանդակությունն ու հնարավոր շրջանակները, ընդամին՝ հիմնականում ուշադրություն դարձնելով սրատերազմի առաջին օրերին և ժամերին ծավալվող ռազմական գործողությունների հնարավոր բովանդակության վերլուծությանը:

**Ռազմական գործողությունների առանձնահատկությունները** վերլուծելիս պետք է որոշել այն ռոտրտները, որոնցում առավել հավանական է պինված պայքարի ծավալումը, այն է.

— ռազմական գործողությունների այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են առհասարակ պինված ուժերի և դրանց առանձին կորատեսակների կիրառությանը վերաբերող՝ հակառակորդի կողմից ընդունված դոկտրինի և ռազմավարական հայեցակարգի համապատասխան դրոշմներով, ինչպես նաև կիրառվող վինատեսակներով, գործողությունների ձևերով ու մեթոդներով: Այս հարցն ուսումնասիրելիս անհր-

րաժեշտ է կանխատեսել խոյման օբյեկտների վրա հնարավոր ներգործությունների բնույթը՝ կախված դրանց տեսակներից և դիրքերի խորությունից,

— վորքերի գործողությունների յուրահատկությունները ԱԿ-ների, քիմիական արդյունաբերության օբյեկտներին, խոշոր հիդրոտեխնիկական կառույցներին սովորական վինատեսակներով պանգվածային հարվածներ հասցնելու ժամանակ,

— վորքերի ու պինված ուժերի այլ տեսակների կիրառման առանձնահատկությունները:

**Հնարավոր հետևանքները** վերլուծելիս կարևոր է գնահատել.

1. հակամարտող կողմերի պինված ուժերի և բնակչության հնարավոր կորուստները,

2. տնտեսական օբյեկտների ավերման բնույթը պատերազմի սանձազերծման պահից մինչև տվյալ պահը, ընդ որում չափազանց կարևոր է գնահատել ռազմատնտեսական օբյեկտների ավերման աստիճանը,

3. պայքարի տարբեր փուլերում ռազմական գործողությունների ակտիվ վարման հնարավորությունը,

4. այդ հնարավորությունը վերականգնելու համար պահանջվող ժամկետները, եթե այն կորցված է:

Քննարկելով սովորական լայնամասշտաբ պատերազմի բնույթը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ պինված պայքարի միջոցների վարգայումն արդի փուլում այն աստիճանի է հասել, որ բարձր ճշգրտության խոյման սովորական միջոցների կիրառմամբ պատերազմն իր ավերիչ հետևանքներով դարձել է միջուկային պատերազմի հետ համեմատելի: Սովորական սպառազինության կիրառմամբ ռազմական գործողությունները նույնպես բնորոշվում են պինված ուժերի ու բնակչության մեծ կորուստներով՝ ռազմավարական շրջանի ողջ խորությամբ:

ԱԿ-ների և ՀԿ-երի, թունաքիմիկատների վերամշակման ձեռնարկությունների, ինչպես նաև տնտեսության առավել վտանգավոր օբյեկտների ավե-

րումը (ոչնչացումը) կարող է հանգեցնել վարակի, ավերածությունների, ջրհեղեղների և հրդեհների տարածուն գոտիների առաջացման: Չեռնոբիլի ԱԿ-ի վթարն ու նրա հետևանքները դրա վառ ապացույցն են: Բայի այդ, սովորական պատերազմի նմանօրինակ հետևանքները կարող են հրահրել միջուկային զենքի կիրառում:

**Պատերազմի տևողությունը** շատ դժվար կանխատեսելի ցուցանիշ է: Այն որոշելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել պատերազմի սանձադեբման մեթոդներին, պատերազմի ընթացքում կիրառվող զինատեսակների բնույթին, հակամարտող կողմերի հնարավոր ուժերի և միջոցների հարաբերակցությանը, հակամարտող կողմերի գումարային կարողությունների ու նրանց բնակչությունների հոգևոր ներուժին:

Վերջին մի քանի տասնամյակում տեղի են ունեցել տարբեր տևողության պատերազմներ՝ սկսած 6-7 օր տևողությունից (1967 թ. արաբա-իսրայելական պատերազմը) մինչև տասնյակ տարիներ տևած պատերազմները (1946 — 1975 թթ. Վիետնամի պատերազմը):

Մի շարք պատերազմներ բնորոշվում են իրադարձությունների սրընթաց զարգացմամբ և, որպես կանոն, հակամարտության մեծ լարվածությամբ: Այսպիսի պատերազմները սովորաբար ուղեկցվում են պայքարի բարձր տեխնոլոգիական միջոցների կիրառմամբ, մեծ կորուստներով, անկանխատեսելի հետևանքներով և տարածաշրջանային ու համաշխարհային մասշտաբի պատերազմների վերաճելու մեծ հավանականությամբ: Այլ պատերազմներն ու բախումներն առանձնապես են իրենց ինտենսիվությամբ և պինված պայքարի համեմատաբար երկար տևողությամբ: Գրանք սովորաբար քաղաքայինական, ազգային-ազատագրական և այլ պատերազմներն են: Գրանք հետևանքների բնորոշ գծերն են՝ հակա-

մարտող կողմերի նյութական միջոցների լիակատար սպառումն ու բարոյական հյուծումը, կարգավորման անհեռանկարայնությունն ու բարոյությունը (հայ-ադրբեջանական բախումը Լեռնային Ղարաբաղում):

**Այսպիսով՝** տեղային պատերազմներն ու բախումները ռազմավարական բովանդակության առումով աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ, ուստի պորբերի և հրամանատարական կադրերի պատրաստությունը այդպիսի պատերազմներին (բախումներին) պահանջում է հատուկ մոտեցում: Հատուկ (մասնագիտական) մշակման կարիք է պահանջում պինված պայքարի տեսությունը, որը պետք է հաշվի առնի հնարավոր ՌԳԹ-ի առանձնահատկությունները, կողմերի ուժերի ու խմբավորումների հավանական կազմը, դրանց կողմից լուծվող խնդիրների առանձնահատկությունները:

Հարկ է հաշվի առնել և բազմակողմանիորեն վերլուծել այն հանգամանքը, թե որ պետությունն է սահմանակից տեղի երկրին և ինչ շահեր է հետապնդում նա: Անհրաժեշտ է հստակորեն որոշել, թե ինչ շահեր պետք է սրաջուպանեն սեփական պինված ուժերը:

Շատ կարևոր է սահմանել, թե ինչ պատերազմի պետք է պատրաստվեն զինված ուժերը, ինչ հակառակորդի դեմ պետք է պատրաստ լինեն մարտական գործողություններ վարելու: Նկատի ունենալով նախկին պատերազմների փորձը՝ զինված ուժերը պետք է բազմակողմանիորեն նախապատրաստել այն հնարավոր պատերազմներին, որոնք հագեցած կլինեն ամենաարդիական զենքերով ու վարման նոր ձևերով՝ համակողմանիորեն հաշվի առնելով ռազմարտադրական իրադրության կանխատեսման արդյունքները, հավանական հակառակորդների առանձնահատկությունները:

## СТРАТЕГИЯ

ХАРАКТЕР И СОДЕРЖАНИЕ ЛОКАЛЬНЫХ ВОЙН  
И ВОЕННЫХ СТОЛКНОВЕНИЙ*М. Г. ГРИГОРЯН, генерал-майор*

## РЕЗЮМЕ

Локальная война, в отличие от мировой, охватывает относительно малое число государств и ограниченный географический район (регион). Но в любом случае локальная война характеризуется определенным состоянием хотя бы одной воюющей страны—кардинальными изменениями в сфере деятельности институтов государственной структуры.

Военное (вооруженное) столкновение является разновидностью локальной военной обстановки и характеризуется деятельностью некоторого ограниченного контингента вооруженных сил, тогда как остальная часть страны продолжает жить мирной жизнью. Вследствие этого, та же локальная военная обстановка для вовлеченного в нее государства (группы государств) может рассматриваться в качестве локальной войны (для Кувейта и Ирака в январе-феврале 1991 г.), а для других государств—как вооруженное столкновение.

В качестве еще одной характеристики используется понятие интенсивности военных действий, которая бывает высокой, средней и низкой.

Кроме того, войны бывают двух типов: обычные и ядерные (с применением ядерных и иных средств массового поражения), однако по мнению ведущих военных теоретиков вероятность использования ядерного оружия в локальных войнах ничтожно мала.

Под характером войны понимается совокупность ее наиболее существенных характеристик и показателей. В нем отражаются ее социально-политический и стратегический (военно-технический) аспекты.

Содержание войны характеризуется такими показателями, как: цель, задачи, условия, метод развязывания, масштабы, вид и особенности военных действий, возможные последствия, длительность.

Знание теоретических основ стратегии локальных войн позволяет разработать концепцию подготовки вооруженных сил и обеспечения их боевой готовности к возможным военным столкновениям.

## STRATEGY

CHARACTER AND ESSENCE OF LOCAL WARS  
AND MILITARY COLLISIONS*M. G. GRIGORYAN, Major-General*

## SUMMARY

The local war, unlike global ones, envelopes rather small number of states and limited geographical area. But in any case the local war is characterized by the certain condition even of one struggling country—cardinal changes in sphere of activity of state institute structure.



The armed conflict is a version of local military conditions and is characterized by activity of some limited quota of the armed forces, whereas other part of the country continues to live in peace. Thereof, same local military conditions for the state, involved in it (group of the states) can be considered as local war (e.g., Kuwait and Iraq in January—February, 1991), and for other states—as the armed collision.

Recently as one more characteristic for classification of wars the concept of intensity of military actions is used which happens of three degrees: high, average and low.

Besides the wars are of two types: usual and nuclear (with application of nuclear and other means of mass defeat), however in opinion of the leading military theorists the probability of use of the nuclear weapon in local wars is insignificantly small.

Character of war is understood as set of its most essential characteristics and parameters. In it its social-political and strategic (military-technical) aspects of the contents are reflected.

The contents of war is characterized by such parameters, as: the purpose, task, conditions, method of cancellation, scales, kind and features of military actions, probable consequences, duration.

The knowledge of theoretical bases of local wars strategy allows to develop the concept of preparation of the armed forces and maintenance of their battle readiness to possible military collisions.

# ՍՊԱՅԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍ. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ բանակի բարձր մարտունակության ապահովման հիմնական պայմաններից է նրա բոլոր հրամանատարների, նրա սպայական անձնակազմի մասնագիտական բարձր մակարդակը, գաղափարական կոփվածությունը: Քաջ գիտակցելով այս ճշմարտությունը՝ ՀՀ ՊՆ ղեկավարությունը մեծ ուշադրություն է դարձնում սպաների դաստիարակության հարցերին: Մեր հանդեսը շատ անգամ է անդրադարձել այս թեմային: Մակայն կարիք կա էլ ավելի ընդլայնելու և խորացնելու այս ուղղությամբ կատարվող աշխատանքները, դրանք դնելու գիտական հիմքերի վրա: Կատարելով հանդեսի խմբագրական խորհրդի նախագահ Վ. Շիրխանյանի ցուցումը՝ խմբագրությունն այս համարից սկսում է «Սպայական կորպուս. կադրերի պատրաստություն» խորագրով հոդվածաշարի հրապարակումը: Հոդվածներում կվերլուծվեն սպայական կադրերի պատրաստման ինչպես մեր պատմական, այնպես էլ տարբեր երկրներում կուտակված փորձը, կքննվեն հայկական բանակի սպայակազմի պատրաստության ու դաստիարակության հետագա կատարելագործման հիմնահարցերը: Կարծում ենք, որ այս թեման ոչ միայն կհետաքրքրի մեր զինված ուժերի սպաներին, այլև առաջ կբերի ցանկություն՝ մասնակցելու քննարկմանը:

## ՍՊԱՅԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ. ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ

Ս. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, դոցենտ,  
փիլիսոփայական գիտությունների թեկնածու

### 1. ԲԱՆԱԿԻ ՀՉՈՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ բանակի կայացումը համընդհանուր ճանաչման է արժանացել, չնայած նրան, որ բանակը շատ երիտասարդ է՝ ընդամենը յոթ տարեկան: Բանակի ըստեղծումը մեր հանրապետության կարևորագույն նվաճումներից է՝ երևույթի ամբողջացման առումով, թերևս, ամենակարևորը: Եվ եթե հանրապետության ինչ-ինչ հաջողություններ որևէ ոլորտում վիճարկվում են ընդդիմադիր ուժերի կողմից, ապա հայոց բանակի կայացման փաստը ոչ մի առարկության չի հանդիպում:

Ի՞նչ հիմքեր կային այդքան կարճ ժամանակահատվածում այդպիսի հաջողության համար: Անշուշտ կարևոր նախադրյալ էր հայոց ազգի բարոյահոգեբանական այն վիճակը, որ ստեղծվել էր դարաբաղյան շարժման ավիթի վրա: «Բոլորս դեպի մարտի դաշտ» կամ «Ի վե՛ն» կարգախոսները, որ հնչում էին շատերի հոգու

խորքում, կյանքի էին կոչել ֆիդայական մի նոր շարժում: Եվ նույնիսկ այն խավերը, որոնք, թվում է, ապառաղական հոգեբանության գերին դարձած, ազգային առումով դիմացրկվել էին, ամնասն չնւային այս ազգանվեր շարժումից: Այսօր անվարան կարելի է պնդել, որ 90-ական թվականներին մեր հաջողության գրավականը ամբողջ ազգի միավորումն էր ազգային-ազատագրական յոթալների դրոշի ներքո: Այնուամենայնիվ, այս հարցը վիճարկման առարկա է դարձել ըստփյուռքահայ մամուլում: Բեյրութում լույս տեսնող «Արդավ» հանդեսի մի բալետիկ համարում հրապարակված «Հայոց պենի պերճանքն ու թշխառությունը» հոդվածում Արթուր Օվին պնդում է, որ եթե ապատագրական սրայքարի և պետականության գաղափարական հենքը բավականաչափ հզոր է, իսկ գաղափարակիր առաջնորդները՝ անհրաժեշտ աստիճանի հեղինակավոր ու ապնիվ, ապա գործընթացը լինում է համեմատաբար *անցյալ*

և առանց պգալի կորուստների: Ըստ հեղինակի՝ ֆիդայականությանից կանոնավոր բանակին անցումը բնականոն տեղի չունեցավ. «Փորձը ցույց տվեց, որ թե՛ առաջին, և թե՛ ներկա հանրապետությունների պարագայում այս խնդիրը իր լուծումը չի գտել»<sup>1</sup>: Ավելին՝ Արթուր Օվին գտնում է, որ «խորհրդային դպրոցն անցած կադրային սպաների գերակշռող մեծամասնությունը լիարժեք տեղ չգտավ և չէր էլ կարող գտնել նորաստեղծ հայկական բանակում»<sup>2</sup>:

Բանակը չի կայանում հայրենասերների բուռն ձգտումով ու նվիրումով միայն: Բանակը բարդ օրգանիս է, որը, մանավանդ 20-րդ դարի ավարտին, կարող է կյանքին համընթաց քայլել՝ միայն կազմակերպական ու կարգապահական պատշաճ համակարգ ունենալով: Իսկ այդ համակարգի ողնաշարը սպայական անձնակազմն է: Խոսքը պրոֆեսիոնալ պիլվորականի մասին է, որը տիրապետում է ոչ միայն արդիական զենքին, այլև պատերազմ վարելու արվեստին, ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով:

Լարաբաղյան շարժման առաջին փուլում պայքարի ծանրությունն իրենց ուսերին էին կրում ժողովրդի ծուլից ելած ֆիդայիները, ինչպես ճիշտ բնութագրել է Օվին՝ «տարաբնույթ մասնագիտությունների մարդիկ, որոնք, ոչ միայն ռազմական, այլև (որ անչափ կարևոր է) պիլվորականին հատուկ բարոյահոգեբանական նախապատրաստություն անցած չլինելով, ակամա ապատագրական բանակի առաջնային դիրքերում հայտնվեցին»<sup>3</sup>: Արդեն ֆիդայի անվան ոգեկուշումը վերաճում էր որոշակի ավանդույթ: Ակադեմիկոս Գ. Լիխաչովը իրավացիորեն նկատել է, որ անցյալի հանդեպ վերաբերմունքը լինում է երկու տեսակի: Առաջին դեպքում անցյալը դիտվում է որպես փաստաթուղթ կամ դեկոր, որպես «թատրոն», իսկ նրա վերարտադրությունը՝ տե-

սողական պատկերի ձևով: Հիրավի, ֆիդայու անվան հետ մեկտեղ կյանքում ի հայտ եկավ «մորուքավոր կոճողի» պատկերը, որն ընկալվեց (շարժման նկատմամբ հակակրանքով լցված մեր հակառակորդների, այդ թվում նաև միութենական բարձրաստիճան շինովնիկների կողմից) որպես մութ բարբերի ու հետամուտության դրսևորում:

Անցյալի երկրորդ տեսակի ընկալումը չի կառչում տեսողական պատկերից, այլ ենթադրում է ժամանակի պարպպես վկայություն: Եթե անցյալի հանդեպ վերաբերմունքի առաջին կերպը ստեղծում է ուսումնական ձեռնարկի նման մի բան, Լիխաչովի խոսքերով ասած՝ ուսումնական մանրակերտ, որը թելադրում է՝ «Նայեցե՛ք և իմացե՛ք», ապա վերաբերմունքի երկրորդ կերպի դեպքում պահանջվում է վերլուծական կարողություն. «Այն ենթադրում է մտավոր մեծ կարգապահություն ու գիտելիքներ և բացառում է իսկական կյանքի փոխարինումը թատերայնությամբ»<sup>4</sup>:

Թատերայնության հատկանիշներից ոչ վուրկ կոճող տղաների հանրույթը իր հետ բերում էր նաև բարոյահոգեբանական որոշակի որակ, որն անհամատեղելի էր արդիական բանակի պահանջների հետ: Ուստի բանակի ստեղծման նախապայման դարձավ ոչ միայն խստագույն կարգապահության հաստատումը, այլև որոշակի նորմերի ու վարվեցողության ձևավորումը: Խորհրդային բանակում ծառայած պիլվորներն ու սպաները հայոց բանակ բերեցին դա՛ լրացնելով մեր առաջին նվիրյալ ֆիդայիներին: Եվ մեր բանակը կայացավ այդ երկու հոսանքների միախառնումից:

Յուրաքանչյուր ժողովուրդ այնքանով է ապահովագրում իր հարստումը, որքանով ստեղծում է օտարներից իր ինքնությունը պաշտպանելու պատշաճ համակարգ և առաջին հերթին՝ ուժային կառույցներ: Հարկավ, պետությունն է ժողովրդի ապահով գոյության երաշխիքը, իսկ պետությունը առաջին հերթին բա-

<sup>1</sup> Ա. Օվին, Հայոց զենքի պիլվորներն ու թվաբանությունը: «Ազգակ», 1967 թ. սեպտեմբերի 21, էջ 58:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 59:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 59:

<sup>4</sup> Գ. С. Лихачев. Земля родная. М., 1983, с. 68.

նակն է, ուստի կանոնադրությունը և հատուկ ծառայությունները:

Կանոնավոր բանակի ողնաշարը համապատասխան պատրաստություն անցած սպայակազմն է: Հայ ժողովուրդը դարեր շարունակ պահպանել է մի ավանդույթ, որով սերնդեսերունդ ազգին բարձրաստիճան փնվորականներ տված իշխանական տոհմերը՝ Մամիկոնյաններ, Բագրատունիներ և այլք, ոչ միայն մեծարվել, այլև նրանցից երևելի փնվորականները սրբերի կարգն են դասվել: Այդ ավանդույթը հայ մարդու հոգեբանության վրա այնպիսի գորեղ ազդեցություն է գործել, որ մեր ազգը, վերջին 6 հարյուրամյակի ընթացքում պետությունից վերլված լինելով, չի դադարել պորականին մեծարելուց, եթե նույնիսկ նա ծառայել է օտարին: Այդտեղ խոսում է հայի ոգին: Ինչպես ճիշտ նկատել է Գարեգին Նժդեհի փնակից, փիլիսոփայության դոկտոր Հայկ Ասատրյանը, պատմական պայմաններն անցավոր են, «կա միայն հոգու և արյան հավիտենականություն. կենսաբանական որակները՝ ոգին, արյունը, կրնան կազմել գոյիմաստ աշխարհայեցողության մը հիմքը և ոչ թե պատմական կամ ընկերային որևէ մտածում»<sup>5</sup>: Կենսաբանական որակների գերակայությունը ենթադրում է ազգային այնպիսի կազմակերպական կայություն, որն իր կենսապայտությունը, գործելու կամքն ու մեթոդը, բարոյական հրամայականը քաղում է ազգի էաբանական խորքից՝ ցեղից: Հայոց կենսաբանական որակը մեր լեռնաշխարհի ծնունդն է: Ինչպես ճիշտ նկատել է «Արմենիա» երկհատորանոց կոթողային աշխատության հեղինակ Հենրի Լինչը, Հայաստանը երկրագնդի այն եզակի հատվածն է, «որտեղ միանում են շրջակա երկրների շառավիղները», որոնք մինչ այդ կետը տալիս էին խայտանկարային պատկերի ձև, իսկ հավաքվելով մի կիպակետում՝ Հայաստանում, և ենթարկվելով նրա բնության քմահաճույքին, միաձուլվում են մի ամբողջության մեջ: Հայաստանն իր բնությունը ոչ Ասիա է, և ոչ էլ

Եվրոպա, իսկ աշխարհագրական դիրքով սահմանագծում է Արևելքը և Արևմուտքը, ուստի հավիտենական կովախնձոր է եղել Ասիայի և Եվրոպայի միջև՝ ցցված թե՛ մեկի և թե՛ մյուսի դեմ: Հայ ազգը, Հայկական բարձրավանդակի նման, ինքնատիպ է և միշտ դիմակայել է Եվրոպայի և Ասիայի



Ռուսաստանի ցար Նիկոլայ 2-րդը և Ֆրանսիայի նախագահ Պուանկարեն անցնում են ռուսական ծովային զվարդիայի շարքերի առջևով, Պետերհոֆ, 1914 թ. («Великая война в образах и рисунках». Изд. Мамонтова, 1916 թվական)

ծավալապաշտական ուժերին: Եվ եթե միշտ չէ, որ հաջողության է հասել, ապա դա մասամբ պայմանավորված է եղել իմացական և բարոյական որոշակի գործոններով և առաջին հերթին նրանով, որ հետամուտ չի եղել իր էաբանական խորքի իմացությունը: Խոսքը հայոց պատմությունից անցյալը վարող ուժերի դերի ըմբռնման մասին է, նաև այն մասին, որ, երես թեքելով ինքներս մեզսից, մեր էությունից, ոչ խոհեմաբար տրվել ենք եվրոպական հոսանքներին: Ինչպես իրավաբան և փիլիսոփայության դոկտոր Հ. Ասատրյանը, սիրտը թողած, գոռ ենք տվել խեղճին, «բայց խելքը, որի մեջ սիրտ չկա, կենսաբանորեն խապառանկաբար է»<sup>6</sup>: Գարեգին Նժդեհն իր «Հայ

<sup>5</sup> Հ. Ասատրյան, Հողվածների ժողովածու: Ե., 1995, էջ 24:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 54:

զենքի փառքն ու տղերգությունը» հող-վաճը սկսում է հետևյալ խոսքերով. «Բարոյապես սևանկ է անժառը, երբ նրան պակասում է ազգային հպարտանքի լզապուճը—ծուռնո՞ղ՝ ազգային ինքնաճանաչության, որն իր սնունդն առնում է մեր պաշտամունքից դեպի այն ամենը, ինչ որ գեղեցիկ է, վսեմ և հերոսավան Հայրենի պատմության մեջ: Առանց այդ բարձր առաքինության բարոյապես պակասավոր է անհատը որպես մարդ և որպես անգամ հավաքականություն»<sup>7</sup>:

Ինչ միջոցներ կան արտաքին պայմաններով պարտադրված այլասերման դեմն առնելու, ազգի կենսաբանական թափն ու հաղթանակի կորովը դրսևորելու: Թերևս ամենալորեղ միջոցը պատմական լզապուճությունն է, քանի որ բոլոր պարտությունները առաջին հերթին պատմական ոգու ազդեցության արդյունք են: Մեր մեծերը դարեր շարունակ պատգամել են «ապրել մամիկոնյանավայել», ասել է թե՛ հարապատ մնալ վարդանանց ոգուն՝ առանց դույսն-ինչ երկմտանքի: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ այս մոտեցումն իր արդարացումն ունի արդի հոգեվերլուծության նվաճումների տեսանկյունից. պատմության մեջ ենթագիտակցականը և լուսկամայինը իրենց որոշակի դերն ունեն, և ամեն ինչ չէ, որ գիտակցության, բանականության թելադրանքով է կյանքի կոչվում: Պատմությունը ոգու դրսևորման բնագավառն է և նրա հայտնությունը: Հետևաբար, առանց ոգու իմացության հնարավոր չէ նաև հասկանալ պատմության ընթացքը: Մանավանդ պատերազմող կողմը պարտավոր է իր մեջ բացահայտել ազգի ներուժը, բնագանցական ուժերը, հավատի այն տեսակը, երբ մարդ հետևում է իր մեջ թաքուն գործող ուժի գործողությանը: Մարտնչողը մըշտապես ներշնչանքի կարիք է պուճ, և այդ հույսը նրան տրվում է իր ազգի պատմությունը վարող տարերային ուժերի իմաստավորումով: Հայոց պատմության պարագայում այն ներկայանում է որպես մամիկոնյանների բարո-

յականության խտացում: Անդրդվելի հավատ ցեղի ուժի նկատմամբ. այս պետք է լինի հայ մարտիկի ուժի առհավատչյան:

## 2. ԱՐՎԵՍՏԱՎԱՐԺ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՐՔՆՈՑԸ

Հայոց բանակի ու զենքի պատմությունը տակավին չուսումնասիրված բընագավառ է: Բանակի կայսրումը և նրա հետագա զարգացումը ածանցյալ են երկրի ընդհանուր հասարակական զարգացման օրենքներից: Երկար ու ձիգ դարերի ընթացքում պետականությունից լուրջ հայ ժողովրդի պաճակները ռազմական արվեստի նվաճումների և տիրապետելու նպատակով ուսանելու են մեկնել տարբեր երկրներ: Արևելահայերը մեծ մասամբ ռազմական ուսում են ստացել Ռուսաստանում, իսկ արևմտահայերը՝ Բուլղարիայում և այլուր:

Ռուսաստանում ռազմական կրթության հիմքը դրվել է Պյոտր 1-ինի իշխանության օրոք: 1698 թ. Մոսկվայում ըստեղծվում է ռազմական առաջին դպրոցը, իսկ 1701 թ.՝ ցամաքային ծառայությունների ճարտարագիտական-թնդանոթաճգության սպաների պատրաստման դպրոցը: Այնուհետև՝ Հյուսիսային պատերազմի տարիներին հիմնադրվում են մի շարք մասնագիտական ռազմական դպրոցներ, որտեղ ուսման տևողությունը տատանվում էր 5-ից մինչև 12 տարի: Ռուսաստանի համար բնորոշ էր, որ այդ դպրոցների շրջանավարտները ստանում էին և՛ մասնագիտական, և՛ հանրակրթական պատրաստություն: Ասկայն երկրում սպայակազմի համալրման հիմնական աղբյուրը մնում էր պիսճառայության տարիներին աստիճանասանդղակով բարձրացումը՝ բարձր գիտելիքների ու փորձառության դիմաց<sup>8</sup>:

Պյոտրի համախոհ Պ. Յագուժինսկին, Պրուսիայում ռուսական դեսպան եղած տարիներին ուսումնասիրելով Արևմուտքում ռազմական կրթության դրված-

<sup>8</sup> Ավելի մանրամասն տես «Уроки трехсотлетней истории Российской военной школы». «Военно-исторический журнал», 1998, № 6.

<sup>7</sup> Ախ. Նոդին: Բնյուրթ, 1968, էջ 370:

քը, կատարությանն է ներկայացնում Ռուսաստանում **կադետական կորպուս** հիմնադրելու նախագիծ: Պրուսիայի օրինակով 1731թ. Ռուսաստանում հիմնադրվում է կադետական կորպուս<sup>9</sup>: 1732 թ. ստեղծվում է Ցամաքային զորքերի, 1743-ին՝ Օռլային, 1762 թ.՝ Անտառաշահության և ճարտարագիտության, իսկ 1797 թ.՝ Գրենադյորական կորպուսները: Այս շրջանից *կադետական կորպուսները դառնում են սպայական կազմի պատրաստման համակարգի հիմնական օղակը*: Սկզբնական շրջանում կորպուս էին ընդունվում ազնվականության 13 – 18 տարեկան հասակի պավակները, իսկ ավելի ուշ՝ 5 տարեկանից ոչ բարձր անձինք: Համապատասխանաբար ուսման ժամկետը ևս 5-6 տարուց հասցվեց 15 և ավելի տարիների: Կադետները ստանում էին վինվորական և լայն հանրակրթական ուսում: Այդ ձևը պատճառաբանվում էր նրանով, որ «ոչ բոլոր մարդիկ են հակված միայն ռազմական գործին», և ուսումնա-վարտելուց հետո թույլատրվում էր անցնել քաղաքացիական ծառայության: Սակայն այդ շինովնիկները որակապես տարբերվում էին մյուսներից, քանի որ անցել էին ռազմահայրենասիրական դաստիարակության բովով:

Մինչև 18-րդ դարի վերջը կադետական կորպուսներն ունեցել են 3500 շրջանավարտ, որը շատ քիչ էր բանակի ու նավատորմի պահանջմունքների համեմատ: Ուստի հետագայում ստեղծվեցին սպաների պատրաստման մասնագիտական ուսումնարանների լայն ցանց և սպայական հատուկ դասընթացներ ու համազորային առանձին ակադեմիաներ:

Հատկապես Ղրիմի պատերազմից (1853 – 1856) հետո արմատական փոփոխություններ կատարվեցին սպայական անձնակազմի պատրաստման ուսումնական համակարգում. ստեղծվեցին վինվորական գիմնապիաներ, որոնց շրջանավարտները համալրում էին կադետական

կորպուսները: 1882 թ. վինվորական գիմնապիաները վերափոխվեցին կադետական կորպուսի, իսկ կադետական կորպուսների բարձր դասարանները կազմեցին նորաստեղծ ուսումնարանների հիմքը: Այդ վինվորական ուսումնական հաստատություններ էին ընդունվում 16-ից ոչ պակաս տարիքի այն երիտասարդները, ովքեր ստացել էին միջնակարգ կամ բարձրագույն կրթություն: Այսպիսով՝ այս ժամանակից սկսած բանակի սպա էին կարգվում միայն վինուսուցման համակարգում կրթություն ստացած անձինք: Սպայակազմի կայացման գործընթացում կարևոր իրադարձություն էր 1863 թ. Ջինուսուցման հաստատությունների գլխավոր վարչության ստեղծումը, որը կոչված էր հսկելու այդ ցանցում ուսման ու դաստիարակության ամբողջ համակարգը, այդ թվում նաև դասախոսների և դաստիարակների ընտրությունը: Վարչության եռանդուն ջանքերի շնորհիվ ստեղծվեցին մանկավարժական բնույթի գրականության հարուստ գրադարան, ռազմամանկավարժական թանգարան, սպարան և այլն, որոնք շատ կարևոր էին նաև սպաների ինքնակարգացում ապահովելու առումով:

Այս և նման կարևոր միջոցառումների շնորհիվ առաջին աշխարհամարտի նախօրեին գոյություն ունեցող 28 կադետական կորպուսներում, 24 վինվորական ուսումնարաններում, ինչպես նաև 7 նախապատրաստական վինվորական դրպրոցներում ամուր հիմքերի վրա դրվեց այդ համակարգը: Այն զգալի քանակությամբ սպայական կադրեր էր տրամադրում ոչ միայն բանակում գործնական աշխատանքի ոլորտին, այլև գործող 7 ակադեմիաներին: Տարիների հետևողական բարեփոխումների շնորհիվ սպայակազմի պատրաստման ռուսական համակարգը դարձել էր համաշխարհային չափանիշներով օրինակելի ուսումնական կառույց: Սակայն 19-րդ դարի վերջից սկսած ռուս երիտասարդության արժեքային կողմնորոշման մեջ տեղ գտան նկատելի տեղաշարժեր ի վնաս ռազմական գործի. կրտուրակ աճեց նույնիսկ կադետական կոր-

<sup>9</sup> «Կադետ» անվանումը (ֆրանսիական cadet — կրտսեր բառից) Ռուսաստանում գործածության մեջ է եղել Աննա Իոսեֆովնայի թագավորության շրջանից. այդպես էին կոչվում մանկական ուսումնական հաստատությունների սաները:

պուսի այն շրջանավարտների քանակը, որոնք նախընտրում էին անցնել քաղաքացիական ծառայության: Եթե դարավերջին դրանց բաժինը կազմում էր շրջանավարտների 6—10 տոկոսը, ապա առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին այն հասավ 18—20 տոկոսի: Եթե 1881—1900 թթ. կադետական կորպուսներն ու պինվորական գիմնազիաները

ստեղծվեցին նաև արագալույս դասընթացներ, որոնց շրջանավարտներն ըստանում էին սպայի կոչում: Նրանց թիվը 1916 թ. կազմում էր 35 հազար:

Ջինվորական ուսումնարանների սաների սոցիալական կառուցվածքը պայմանավորված էր կադետական կորպուսների և գիմնազիաների շրջանավարտների սոցիալական ծագումով. նր-



Ռուսաստանի ցար Նիկոլայ 2-րդը գլխավոր ռազմականայնի մի խումբ բարձրաստիճան սպաների հետ. Մոզիլյով, 1916 թ.  
(«Великая война в образах и рисунках». Изд. Мамонтова, 1916 արևմտից)

տվել էին 26634 շրջանավարտ, ապա 1901—1916 թթ. դրանց թիվը չէր անցնում 20 հազարից: Իսկ ընդհանրապես ռազմատուսումնական հաստատությունների համակարգը տվել է 65 հազար շրջանավարտ սպա: Ինչպես նշվեց, աճել էր նաև կադետական կորպուսների թիվը՝ 1914 թ. հասնելով 26-ի: Կորպուսներ էին հիմնադրվել նաև Ռուսաստանի ծայրամասերում՝ Պոլտավայում, Թիֆլիսում, Տաշքենդում: Հայաստանում, ցավոք, չստեղծվեց պինուսուցման որևէ հաստատություն:

1914 թ. կայսրության մեջ գործում էին 17 համապորային ուսումնարաններ, որոնք ձևավորվել էին յունկերական ուսումնարանների հիմքի վրա: Ամբողջ համակարգը 1900—1914 թթ. տրվել էր 21 հազար սպա, սակայն պատերազմի տարիներին այդ քանակը չէր ապահովում երկրի պահանջները: Ուստի

րանք գլխավորապես ազնվական խավից էին սերվում: Այնինչ յունկերական ուսումնարաններ ընդունվում էին հիմնականում ոչ պինվորական ծառայության մեջ գտնվող սպայական ընտանիքներից: Գարասկզբին կար 10 յունկերական ուսումնարան: Հետաքրքիր է, որ ամենաարիստոկրատականը հրետանային ուսումնարաններն էին: Այդպիսի 2 ուսումնարանում 1904 թ. տոհմիկ ազնվականներից սերված սաները կազմում էին ընդհանուր քանակի 43-45 տոկոսը: Այս ամենը կարևոր էր սպայակազմի բարոյահոգեբանական մթնոլորտի, ազգային իդեալների ձևավորման տեսակետից: Սպայակազմի որակը աճանցյալ է, ոչ միայն ուսումնական հաստատությունում ստացված կրթությունից ու դաստիարակությունից, այլև ընտանիքներից բերված ավանդույթներից ու սովո-

րույթներից և ընդհանրապես շփման միջավայրից:

Այսպիսով՝ 20-րդ դարի սկզբին Ռուսաստանում պիևկրթության համակարգը ստացել էր ամբողջական և համընդգրկող տեսք, ինչպես նաև աստիճանակարգված, տրամաբանորեն արդարացված բնույթ: Զինուսումնական հաստատության դասընթացով անցնելը դարձել էր սպայական կոչում ստանալու պարտադիր պայման: Գոյություն ունեին նաև սպայի մասնագիտական հետագա վարժացումն ապահովող վերաորակավորման և կարգի բարձրացման ուսումնական հաստատություններ: Ստեղծվել էր նաև Գլխավոր շտաբի ակադեմիա, ինչպես նաև մասնագիտացված այլ ակադեմիաներ: Բոլոր դեպքերում կադետական կորպուսների շրջանավարտները կազմում էին սպայակազմի միջուկը, նրանք էին մթնոլորտ ստեղծողը:

Չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանի բնակչության համեմատ պիևուսումնական հաստատությունների շրջանավարտները չնչին տոկոս էին կազմում, այնուհանդերձ նրանք, իրենց կրթական մակարդակով բավարարելով մարտունակ բանակի պահանջները և երկրի պաշտպանության հիմնախնդիրը, միաժամանակ իրենց ընդհանուր վարժացմամբ որոշակի ապրեցություն էին գործում շրջապատի վրա՝ հասարակությունը պահելով հայրենասիրության և ազգային իդեալի բարձր ոլորտում: Ուստի հասարակության մեջ կադետի և յուևկերի դիրքն ու պատիվը շատ բարձր էին:

3. ՍՊԱՅԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ  
ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ռուսական սպայակազմի սոցիալական, ժողովրդագրական և ազգային կազմը որպես հատուկ ուսումնասիրության առարկա տակավին չի արժանացել մասնագետների պատշաճ ուշադրությանը, չնայած այն բանին, որ երևույթն ինքնին դարերի պատմություն ունի և հարուստ ավանդույթ: Բավական է նշել, որ բանակում 20-րդ դարի սկզբին ծա-

ռայում էր 40 հազար սպա, իսկ առաջին աշխարհամարտի նախօրեին՝ արդեն շուրջ 47 հազար: Շարային և ոչ շարային սպաների քանակական հարաբերությունը կազմում էր հինգը մեկին: Ռուսական սպան, որպես կանոն, սերվում էր ավանական խավից, իսկ ոչ այդպիսիները դասվում էին այդ խավին՝ սպայական առաջին կոչումն ստանալով: Հարկ է նշել, որ տոհմիկ ավանական ընտանիքներից սերված սպաների թիվը տարեցտարի նվազում էր. եթե 19-րդ դարի վերջին այն կազմում էր սպայության ընդհանուր քանակի 52 տոկոսը, ապա 20-րդ դարի սկզբին՝ 40: Կառավարությունը մտահոգված էր այդ դրությամբ, ուստի տոհմիկ ավանական ընտանիքների գավակներին պիևուսումնական հաստատություններ գրավելու նպատակով նրանց համար արտոնյալ պայմաններ էր ստեղծում: Եվ արդյունքը երկար սպասել չտրվեց. համաշխարհային պատերազմի նախօրեին նրանց տեսակարար կշիռը սպայության մեջ մեծացավ: Բարձր սպայական աստիճաններում տոհմիկ ավանականության բաժինը է՛լ ավելի մեծ էր՝ լրիվ գեներալների 98 տոկոսը, գեներալ-լեյտենանտների 96, գեներալ-մայորների 85 և գևդապետների 74 տոկոսը: Տիտղոսավոր ավանականության բաժինը տոկոսային հարաբերությամբ է՛լ ավելի բարձր էր, ինչը արտացոլում էր հասարակության մեջ խավերի բացահայտ անհավասար վիճակը: Այսպես, օրինակ, եթե գեներալների 5 տոկոսն էր այդ խավից, ապա գևդապետների՝ ընդամենը 2 տոկոսը: Բանն այն է, որ նրանք ունեին ծառայության մեջ աստիճանով բարձրանալու ավելի մեծ հնարավորություն, քան սովորական ավանականները: Տիտղոսավոր ավանական սպան գեներալի աստիճանի էր հասնում միջինը 27 տարվա ծառայությունից հետո, ոչ տիտղոսավորը՝ 30 տարուց ավելի: Առաջին աշխարհամարտի նախօրեին բանակում գյուղական և քաղքենի խավերից սերված սպաների թվի համեմատական աճով (30 տոկոս) այդ կայուն հարաբերակցությունն սկսեց խախտվել: Եվս մի



հանգամանք ազդեցություն ունեցավ այդ երևույթի վրա: Հայտնի է, որ մինչև 19-րդ դարի վերջը սպաների ծառայության հասակային սահմանափակում գործնականում գրեթե գոյություն չուներ: Բացի դրանից, դարավերջին իրականացված փնվորական բարեփոխումների հետևանքով բանակում սպաների ըստ կոչման բարձրացման ընթացքը նկատելիորեն դանդաղել էր: Դրա հետևանքով սպայակազմը զգալիորեն ծեղրացել էր: Ստացվել էր այնպես, որ սպաների մեծ մասի համար փնծառայությունը դարձել էր եկամտի հիմնական աղբյուրը: Բանակում սպաների միջին տարիքը (հետևակային կորամասերի հաշվով) հետևյալ պատկերն էր ներկայացնում. գնդապետը՝ 50 տարեկան, փոխգնդապետը՝ 45, կապիտանը՝ 40, պորուչիկը՝ 30, ենթապորուչիկը՝ 25 տարեկան: Գնդապետն իր վերջին կոչումով ծառայում էր միջինը 10—15 տարի, փոխգնդապետը՝ 7—10, կապիտանը՝ 12—15, շտաբս կապիտանը՝ 10—12, պորուչիկը՝ 8—10, ենթապորուչիկը՝ 4—5 տարի: 20-րդ դարի սկզբին գեներալի ծառայության տարիքային սահմանը հետևյալն էր. գեներալ-մայորինը՝ 55 տարեկան, գեներալ-լեյտենանտինը՝ 62 և լրիվ գեներալինը՝ 70: Նշենք նաև, որ 1899 թ. սպաների ծառայության տարիքային սահմանափակում մտցվելուց հետո առաջին աշխարհամարտի նախօրեին սպայական անձնակազմն զգալիորեն երիտասարդացել էր: Եթե սպայակազմի բարոյական համոզմունքների կազմավորման մեջ նրա սոցիալական բազան, ինչպես նաև հասակային գործոնը վճռորոշ նշանակություն ունենին, ապա այդ բանում պակաս էական չէին սպայի ընտանեկան վիճակն ու կացությունը: Դա կարևոր էր նաև այն առումով, որ մինչև 19-րդ դարի վերջը սպայակազմի աշխատավարձի էական բարձրացում տեղի չէր ունեցել, այնինչ գների աճի պատճառով կյանքի մակարդակը զգալիորեն իջել էր: Իշխանությունները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ պայմաններում սպան ամուսնանալու դեպքում հայտնվում է

նյութական ծանր կացության մեջ և հետևաբար վտանգ կարող էր սպառնալ հասարակության մեջ սպայի հեղինակությանն ու դիրքին, սպայի ամուսնանալը արգելակելու և սահմանափակելու մի շարք որոշումներ ընդունեցին: Նախ՝ արգելվում էր մինչև 23 տարեկանն ամուսնանալը, իսկ մինչև 28-ը լրանալը սպան պարտավոր էր հրամանատարության թույլտվությունն ստանալ ամուսնության համար: Դրանից հետո հարյը դրական լուծում էր ստանում նյութական որոշակի երաշխիքի առկայության դեպքում: Այս սահմանափակմանն էին ենթակա կրտսեր սպաներից սկսած մինչև վաշտի հրամանատարը: Մի ուշագրավ փաստ ևս. գեներալների ու գնդապետների 15—20 տոկոսը ամուսնի էր: Այդ խանգարիչ հանգամանքով է բացատրվում բարձրաստիճան փնվորականների ընտանիքներում երեխաների փոքր թիվը (լրիվ գեներալի ընտանիքում՝ 3,3, գեներալ-լեյտենանտի՝ 2,8, գեներալ-մայորի՝ 2,6, գնդապետի՝ 2,6 երեխա): Հարկ է նշել, որ առաջին աշխարհամարտի նախօրյակին իրավիճակը կտրուկ փոխվել էր. ամուսնացած էր սպաների 70 տոկոսը՝ 19-րդ դարի 40 տոկոսի դիմաց:

Այսպիսով՝ ռուսական սպայակազմը բնախոսական տեսակետից ազգաբնակչության ամենից անբնական վիճակում հայտնված խափն էր: Իսկ դա էականորեն ազդում էր նրա բարոյաեռագեբանական վիճակի վրա:

Հետաքրքրություն է ներկայացնում սպայական կորպուսի ազգային կազմը, քանի որ այն ենթադրում է տարբեր ավանդույթների և հոգեբանությունների խաչաձևում: Այդ նյութի լուսաբանումը որոշակի դժվարություն է ներկայացնում, քանի որ ռուսական սպայի անձնական գործում, որպես կանոն, ազգությունը չէր նշվում: Սակայն հիշատակություն կար հավատքի, ինչպես նաև մայրենի լեզվի մասին, ուստի, ելնելով այդ տվյալներից, կարելի է մոտավոր պատկերացում կազմել սպայակազմի ազգային կառուցվածքի մասին: Քանի որ բանակը ռուսական էր,

բնականաբար, սպայության հիմնական վանգվածը ուղղափառ եկեղեցու ծխերից էր: Շատ էին և լյութերականները (մերձբալթյան երկրների գերմանացիներ), կաթոլիկները (լեհեր): Սրանց կողքին նրատելի տոկոս էին կազմում հայ լուսավորչականները, ինչպես նաև մահմեդականները: Ինչ վերաբերում է վրացի սպաներին, ապա նրանք որպես ուղղափառ եկեղեցու հետևորդներ մերված էին ռուսներին, ուստի նրանց մասին որոշակի տրվյալներ չկան: Հետաքրքիր է, որ գերմա-

խաղացումը մեծապես պայմանավորված էր յուրաքանչյուրի անձնական բացառիկ հատկություններով: Այս առումով տիպական է «ռուսական Մյուրատ» անունով հայտնի գեներալ-լեյտենանտ իշխան Մադաթովի անցած փառավոր ուղին: 15 տարեկան հասակից Ռուստոմը (Վալերիան) Ղարաբաղից հասնում է Պետերբուրգ և 1799 թ. դժվարությամբ անցնում է զինվորական ծառայության լեյքգվարդիական Պրեդբաժենյան գնդում որպես ենթապրայպորշչիկ: Ռուս-թուր-

20-ԲԳ ԿԱՐԻ ՄԳՋԲՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՄՊԱՅԱԿԱԶՄԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ<sup>10</sup>

| Կարգավումբ                            | Կրոնական սրտկանկությունը, տոկոսներ |            |              |               |                   |
|---------------------------------------|------------------------------------|------------|--------------|---------------|-------------------|
|                                       | ուղղափառներ                        | կաթոլիկներ | բողոքականներ | մահմեդականներ | հայ առաքելականներ |
| Բանակային հետևազորի բոլոր գեներալները | 84,8                               | 3,8        | 10,4         | 0,6           | 0,4               |
| Լրիվ գեներալներ                       | 81,0                               | 2,3        | 16,0         | —             | 0,7               |
| Գեներալ-լեյտենանտներ                  | 83,0                               | 4,4        | 12,0         | 0,2           | 0,2               |
| Գեներալ-մայորներ                      | 87,0                               | 3,1        | 8,9          | 0,7           | 0,3               |
| Գնդապետներ                            | 84,4                               | 6,1        | 8,0          | 1,0           | 0,5               |
| Կապիտաններ                            | 80,9                               | 12,9       | 4,2          | 0,9           | 1,1               |

նական անուն-հայրանուն և նույնիսկ ազգանուն կրող սպաների համապատասխանաբար 75 և 40 տոկոսը ռուսական ուղղափառ եկեղեցու հետևորդներ էին:

Հայտնի է նշենք, որ ցարական կառավարությունը մեծ տեղ էր տալիս բանակում կրոնի սպասավորներին<sup>11</sup>: Ռուսական բանակի և նավատորմի ավագ քահանան (ober-священник) նշանակվում էր անձամբ ցարի կողմից և ազատ ելումուտ ուներ նրա մոտ: Նա անկախ էր երկրի եկեղեցու ղեկավարությունից (սինոդից):

Հայերի նկատելի բաժինը ռուսական բանակի սպայական կորպուսում և նրանց ծառայությունները անուրանալի փաստեր են: Հատկապես ուշագրավ է բարձրաստիճան պաշտոններում նրանց ունեցած զգալի բաժինը: Նրանց առաջ-

քական 1-ին պատերազմի սկզբում նա կապիտան էր, իսկ պատերազմը ավարտեց փոխգնդապետի կոչումով: Ինչպես գրում է Պոտտոն, «Մադաթովը ռուսական բանակի այն հազվագյուտ սպաներից էր, որ գնդապետի աստիճանում և՛ ադամանդակուտ սուր ուներ, և՛ Գեորգիյան խաչ»<sup>12</sup>: 31 տարեկանում նա գեներալ-մայոր էր: Ռուս-պարսկական պատերազմում աննախադեպ հերոսության համար նրան շնորհվեց գեներալ-լեյտենանտի կոչում: 1828 թ. ռուս-թուրքական պատերազմում տարած իր փառավոր հաղթանակների համար ցարի կողմից պարգևատրվեց Ալեքսանդր Նևսկու շքանշանով՝ որպես քաջության, խիպախության և անվախության համար ցարի բարեհաճության նշան: Մի քանի անգամ վիրավորված 47-ամյա գեներալը վախճանվեց 1829 թ. սեպտեմբերի 4-ին Շուլյայի մոտ՝ ամրոցի պաշարման ժամանակ: Թուրքական մեծ վեպիր Հուսեյին փաշան ի նշան մեծ հարգանքի բա-

<sup>10</sup> Шиш С. Ю. Чинаро. Сиделец в кабаке более офицера получает. Офицерский корпус России на рубеже XIX—XX вв. «Военно-исторический журнал», 1998, № 1.

<sup>11</sup> Шиш «Во главе военно-духовного ведомства России». «Военно-исторический журнал», 1998, № 1.

<sup>12</sup> Шиш Л. Թաղնույան, Խիպախ հուսարը: «Գարուն», 1987, հիվ. 8:

ցեց ամրոցի դարպասը՝ ներս թողնելով հուսարական մի վաշտ, որի պինվորները իրենց ուսերին տարան «քաջերի մեջ քաջագույնի» աճյունը՝ սուրբ Գևորգի եկեղեցու բակում քրիստոնեական բոլոր ծեսերով հողին հանձնելու:

Նույնպիսի փառավոր ուղի է անցել գորավար Միքայել Տարիելի Լոռիս-Մելիքովը: Նա պինվորական կրթություն էր ստացել Պետերբուրգի յունկերական դպրոցում, ապա ծառայության անցել (Մադաթովի նման) լեյբ-գվարդիական հուսարական գնդում: 1863 թ. Լոռիս-Մելիքովը արդեն գեներալ-լեյտենանտ էր: 1876 թ. նա նշանակվեց Կովկասյան առանձին կորպուսի հրամանատար: Նրա հրամանատարության տակ ծառայում էին հայագգի պորավարներ Հ. Գ. Լազարևը, Ա. Ա. Տեր-Ղուկասովը, Բ. Մ. Շելկովնիկովը, Յ. Կ. Ալխապովը, Հ. Ս. Վարշամյանը:

Հանրահայտ է Լոռիս-Մելիքովի դեկավորությամբ Կարսի անառիկ ամրոցի գրավման օպերայիս: 1888 թ. նա նշանակվեց Պետերբուրգի գեներալ-նահանգապետ, իսկ մի քանի ամիս անց՝ Ռուսաստանի ներքին գործերի նախարար և պետական խորհրդի անդամ: Նա ցարի վստահված անձն էր՝ երկրում բարեփոխությունների իրականացման գործում: Նա վերապրեց շարաբաստիկ երրորդ բաժանմունքը, ոստիկանական ահաբեկչությունները, պատրաստեց ռազմական ապարատի արմատական վերափոխումների մի ծրագիր, որն արժանացավ Ալեքսանդր 2-րդի հավանությանը: Սակայն 1881 թ. ցարի սպանությունից հետո իրադրությունը կտրուկ փոխվեց, և Լոռիս-Մելիքովը հեռացավ քաղաքական սապարեկից: Ուշագրավ է,

որ գերմանական հանդեսներից մեկը նրան ներկայացնում էր որպես սպիտակ ազոավ, որին կոչահարում են սև ազոավները:

Փառավոր ռազմական ուղի է անցել նաև գեներալ-լեյտենանտ Թովմաս Նապարեկյանը: Նա ավարտել է Մոսկվայի պինվորական գիմնազիան, ապա՝ Ալեքսանդրյան պինվորական ուսումնարանը: 1915 թ. Նապարեկյանի հրամանատարությամբ ռուսական բանակի պորամասերը ջախջախիչ հարված հասցրին թուրքական պորքերին Գիլմանի ճակատամարտում: 1917 թ. նա ստանձնեց Հայկական կորպուսի հրամանատարությունը: Նրա ընդհանուր հրամանատարությամբ են իրականացվել Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտերը:

Սարդարապատի ճակատամարտի գլխավոր հրամանատար գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը նույնպես ավարտել է Մոսկվայի պինվորական գիմնազիան, ապա՝ Ալեքսանդրյան պինվորական ուսումնարանը: Սարդարապատի հերոսներ գնդապետներ Դանիել և Պողոս Բեկ-Փիրումյանները ևս կրթություն են ստացել ռուսական պինվորական ուսումնարաններում:

Այսպիսով՝ ռուսական պինվորական ուսումնական հաստատությունների բարերար մթնոլորտով անցած հայ սպաները իրենց հետ հայկական միջավայր էին բերում որոշակի ավանդույթներ և պինվորական պահվածք՝ համապատասխան կարգապահական կուլտուրայով, որոնք դարձան հաղթանակների գրավականը հայ ժողովրդի ապստաբրական պայքարում, որի փառապսակն էին 1918 թ. մայիսյան հերոսամարտերը:

*(Շարունակությունը հաջորդ համարում)*

# ՌԱԶՄԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՏՐԻՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՄԲ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՏԵՏԱՎՈՐՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՂՈՒ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ


Մ. Հ. ԹԱԳԵՎՈՍՅԱՆ, փոխգնդապետ, Վ. Վ. ՄԱՐՏԻՆՈՎ, տեխնիկական գիտությունների դոկտոր, Ա. Ա. ՄՈՒՐԱԳՅԱՆ, մայոր

Կարգաբերման աշխատանքի կատարման ռազմավարությունը պետք է ապահովի դրված նպատակային խնդրի կատարումը նվազագույն ծախսերով և առավել կարճ ժամկետում: Կարգաբերումը համարվում է կատարված, եթե բավարարվում է  $P_s(T) \geq P_c^{(0)}$  անհավասարությունը և տեղի ունի  $T \leq T^{(0)}$  պայմանը, որտեղ  $P_c^{(0)}$ -ն արտաբերված արդյունքի որակի չափանիշի որոշակի արժեքով ծրագրային համալիրի ճիշտ գործողության տրված հավանականությունն է,  $T^{(0)}$ -ն կարգաբերման աշխատանքի թույլատրելի տևողությունն է,  $P_s(T)$ -ն և  $T$ -ն համապատասխան ընթացիկ ցուցանիշներն են:

Տեստավորման կարգավորման մեթոդները, որոնք բնութագրում են տեստավորման ռազմավարությունը, հիմնվում են այն գործոնների ու պարամետրերի առանձնացման վրա, որոնք հնարավորություն են տալիս արդյունավետ կերպով բաշխելու ռեսուրսները՝ ծրագրային համալիրի որակի վրա դրանց ներադրման հաշվառումով:

Առաջարկվող մոդելներում օգտագործվում է սխալների բնույթի ու միակցված մոդուլներում դրանց ի հայտ գալու հավանականության վերաբերյալ տեղեկությունը: Եթե  $R(t)$ -ով նշանակենք ծրագրային համալիրի գործողության  $t$  ժամանակահատվածում սխալի ի հայտ գալու հավանականությունը, ապա տեստավորման  $S_1, S_2, \dots, S_k$  տարբեր ռազմավարությունները կլիպմեն կորերի մի ընտանիք (տես գրաֆիկը) և կբնութագրեն կարգաբերման արդյունավետությունը:

Ծրագրային համալիրում սխալները բաշխված են անհամաչափորեն և կապմուն են խմբավորումներ (կլաստերներ): Տեստավորման ընթացքում հայտնաբեր-



Սխալների առաջացման հավանականությունը ըստ ընտրված ռազմավարությունների

ված սխալների թվի աճմանը պոզիտիվ աճում է նաև համապատասխան բաղադրամասերում դեռ չհայտնաբերված սխալների առկայության հավանականությունը: Անհրաժեշտ է համարժեք մասնատման սկզբունքով տեստավորման ռազմավարության ընտրություն<sup>1</sup>, որը հնարավորություն տա տեղայնացնելու խմբավորման սխալները, որոնք ունեն ըստ որոշ հատկանիշի խմբավորվելու միտում:

Ծրագրային համալիրներ ստեղծելիս ծախսավող ընդհանուր ժամանակի մոտ 50 տոկոսը և ընդհանուր արժեքի ավելի քան 50 տոկոսը ծախսվում են տեստավորման ընթացակարգի վրա<sup>2</sup>: Ծրա-

<sup>1</sup> Տես *В. В. Лунаев*. Отладка систем управления алгоритмов ЦВМ реального времени. М., 1974, с. 119.

<sup>2</sup> Տես *Г. Майерс*. Надежность программного обеспечения. М., 1980, с. 43.

գրերի տեստի շտկման ընթացքում միակցված մոդուլներում տեստավորման հետևանքով առաջանում են կառավարման հարողման, տվյալներին դիմելու, դրանց նկարագրման և այլ սխալներ<sup>3</sup>, որոնք կարող են հանգեցնել նախագծի էական վերաձևակումների: Ուստի առաջ է գալիս ծրագրային համալիրի մոդուլների կապակցվածության հետևանքով առաջացող առավել վտանգավոր (միակցային) սխալների առաջնային հայտնաբերման խնդրի լուծման մոդելի կառուցման անհրաժեշտությունը:

Գիցուք,  $T = \{t_i\}$ ,  $i = \overline{1, n}$ -ը տեստերի բազմություն է, և տրված է նրա մասնաբաժանումն ըստ որոշ հատկանիշների (տվյալների մուտքային հավաքածու, նպատակային նախանշանակում և այլն):

$$B = \cup B_k, B_k = \{b_1^{(k)}, b_2^{(k)}, \dots, b_j^{(k)}, \dots, b_p^{(k)}\}:$$

$X = \{x_i\}$ ,  $i = \overline{1, m}$ -ով նշանակենք այն ելքային հատկանիշների բազմությունը, ըստ որոնց բնութագրվում է ծրագրային համալիրի արձագանքը տեստավորմանը (օրինակ՝ սխալների տիպերը, դրանց բաշխումը ըստ առանձին ծրագրերի և ընթացակարգերով և այլն): Այդ դեպքում  $B_k \in B$  դասի յուրաքանչյուր տարրի համար կատանանք համապատասխան  $f$ -դի ելքային հատկանիշի արժեքին (օրինակ՝  $b_j^{(k)}$  տեստով հայտնաբերված  $f$ -դի տիպի սխալների քանակին) հավասարապոր, ամբողջ արժեքներով ֆունկցիաների որոշ բազմության արտացոլումը՝

$$b_j^{(k)} = t_i \rightarrow \varphi_1 \left( y_1^{(i)}, y_2^{(i)}, \dots, y_r^{(i)}, \dots, y_m^{(i)} \right):$$

Համապատասխանաբար,  $t_i \in B_k$  և  $t_j \in B_\lambda$  երկու տեստերի միջև կապակցվածությունը պետք է հաշվարկվի դրանց արտացոլումների համարժեքության գրնահատման հիման վրա ըստ հետևյալ արտահայտության՝

$$C_{ij} = \sum_{(f)} \min \left( y_f^{(i)}, y_f^{(j)} \right):$$

Վերջիվերջո, ընտրելով յուրաքանչյուր դասը միարժեքորեն նույնակտանայ-

նող տեստերը, կարող ենք կառուցել կապակցվածության  $C = \|C_{ki}\|$  մատրիցը, որով որոշվում է դրանց միակցման բնույթը ըստ տվյալ ծրագրային համալիրի:

Իր հերթին յուրաքանչյուր տեստ կարող է ներկայացված լինել մի քանի դասերում, այսինքն՝ վերջիններս խաչվող են՝

$$t_i = \varphi_2 (D_1, D_2, \dots, D_s),$$

որտեղ  $D_i = (\emptyset, B_i)$ :

Բազմակի հարաբերությունների ընտրանքի և կարգավորման ազդորիթմը տալիս է  $N$ -րդ չափման առավելագույն կապակցված ենթաբազմության  $K$  նվազագույն համախումբը, որում ներկայացված են բոլոր դասերը: Այդ ենթաբազմությունների բաշխումը որոշում է այն գերակայության առնչությունը, որի միջոցով  $T$  առավել առաջնային տեստերի բազմությունում կազմվում է  $T'$  շաքանը (կորտեժ)՝

$$T' = \varphi_2^{-1}(K):$$

Ծրագրային համալիրը բնութագրվում է նրա մեջ մտնող մոդուլներից յուրաքանչյուրի դիմացկունությամբ և սուգավոր միակցականությամբ, որով որոշվում է այն բանի

$$P_{ij} = \begin{cases} 0.15(S_i + S_j) + 0.7C_{ij}, & \text{եթե } x_{ij} \neq 0 \\ 0, & \text{եթե } x_{ij} = 0 \\ 1, & \text{եթե } x_{ij} = 1 \end{cases}$$

հավանականությունը, որ  $i$  մոդուլի փոփոխման հետևանքով կփոխվի նաև  $j$  մոդուլը<sup>4</sup> (այստեղ  $S_i$ -ն և  $S_j$ -ն մոդուլների դիմացկունություններն են, իսկ  $x_{ij}$ -ն՝ նրանց միակցությունը):

Ինքնավար կարգաբերման ժամանակ առաջին հերթին պետք է կարգաբերել առավել կապակցված մոդուլները, որպեսզի նվազագույնացվեն ինչպես կարգաբերման ընդհանուր ժամանակը, այնպես էլ ծրագրային տեստերի շտկման

<sup>4</sup> Տես նույն տեղում, G. J. Myers. Reliable Software Through Composite Design. N. Y., 1975, p. 220.

<sup>3</sup> Տես նույն տեղում, էջ 136:

թիվը: Գա բացատվում է հետևյալ գործոններով: Միակցված մոդուլների միջոցով արտադրված սխալները համապատասխան ծրագրերի համար արտաքին սխալներ են և որոշում են դրանց ելակետային դրվածքը: Նման տիպի սխալները կարող են արմատապես փոխել ծրագրի ողջ պարունակությունը, քանի որ համընդհանուր են նրա ամբողջ համատեքստի համար: Ընդամին տեսավորվող մոդուլի համար տեղային հանդիսացող այդ սխալների նախկինում կատարված ուղղումները գործնականում դառնում են անտեղի: Ընդ որում մոդուլի «միակցված» սխալների հետ կապված երկրորդ լրամշակման ժամանակ կարող են մտցվել նոր տեղային սխալներ:

Տվյալ մոդելը հիմնված է կոմպոզիցիոն նախագծման պարամետրների վրա, իսկ այդ նախագծման արդյունքն է լինում կախումների լրիվ մատրիցի կառուցումը<sup>5</sup>: Կատարելով նրա և կապակցվածությունների  $C$  մատրիցի միջև փոխմիարժեք համապատասխանեցում և կիրառելով բավականի հարաբերությունների ընտրանքի և կարգավորման ալգորիթմը՝ ստանում ենք առավել առաջնային ինքնավարորեն կարգաբերվող մոդուլների  $T$  շարանը<sup>6</sup>:

Ըստ  $k$ -րդ չափման  $C = \|C_{ij}\|$  կապակցվածության մատրիցի կառուցվում է  $B = \{b_i\}$  շարանը, որտեղ  $b_i = (x_i^{(1)}, x_i^{(k)})$ ,  $i = \overline{1, n}$ ,  $n = k(k-1)/2$ :  $R$  հիմքային ենթաբավականության մեջ, որի չափումով որոշվում է  $N$ -ակի ընթերցվող ընտրանքը, ըստ  $B$  շարանի կատարվող տեսաձևման հետևանքով, համաձայն

$$(x_i(t) \subset R) \& (x_j(t) \cap R = \emptyset) \cup \\ \cup (x_j(t) \subset R) \& (x_i(t) \cap R = \emptyset)$$

պայմանի, բեռնվում են միակցված մոդուլները: Հիմքի ելակետային և միջան-

կյալ բեռնումները կատարվում են մոդուլներով ըստ  $B$ -ի նկատմամբ նրանց գերակայության կարգի կամ նախորդ  $R$  ենթաբավականությունը լցվելուց հետո:  $K$  մուլտիբավականությանից յուրաքանչյուր ընտրված  $R_m$  ընտրանքի համար հաշվարկվում է կապակցվածության համապատասխան ցուցիչը՝

$$F_m = \sum_{i=1}^{N-1} \sum_{j=i+1}^N C_{ij}^{(m)},$$

իսկ ընտրանքները կարգավորվում են ըստ նրա արժեքների նվազման: Ընտրանքի մեջ  $k$ -րդ մոդուլի գերակայությունը որոշվում է նրա համախումբ կապակցվածությամբ տվյալ  $R_m$  ենթաբավականության բոլոր մոդուլների հետ.

$$f_j^{(m)} = \sum_{i=1}^N C_{ij}^{(m)}:$$

Ուստի  $3 \leq N \leq k-1$ -ի յուրաքանչյուր արժեքի համար կառուցվում է առավել կապակցված մոդուլների համապատասխան ելքային  $T$  շարանը:

Այսպիսով՝ գաղիս ենք այն եզրակացության, որ նշված խնդիրները լուծվում են տեստավորման մշակված ռազմավարությամբ բնութագրվող կարգաբերիչ համակարգ կազմող մասնագիտացված ծրագրերի, մեթոդիկաների և սարքերի համադիրով: Ներկայումս գոյություն ունեն տեստավորման ավտոմատացման տարբեր համակարգեր՝ SDS, ARGUS, ATLAS, AIDES, որոնք ապահովում են տեստերի գեներումը, սխալների տեղայնացումը և շտկումը, արդյունքների արտաբերումը և այլն<sup>7</sup>:

Տեստավորման տվյալ ռազմավարությունը կիրառություն է գտել DOCTOR համակարգում: Բավականի հարաբերությունների ընտրանքի և կարգավորման ալգորիթմը ավելի վաղ ներդրվել է ռադիոէլեկտրոնային ապարատուրային նախագծման ավտոմատացման PRAM համակարգում:

<sup>7</sup> Shu Г. Майерс. Надежность программного обеспечения, с. 310.

<sup>5</sup> Shu G. J. Myers. Reliable Software Through Composite Design, p. 220.

<sup>6</sup> Shu A. A. Мураган. Совместимый многовариантный алгоритм компоновки и размещения. Известия АН АрмССР. Серия ТН, 1988, т. XLI, № 3, с. 35.

## ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

### НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РЕШЕНИЯ ЗАДАЧИ ВЫБОРА ОПТИМАЛЬНОЙ СТРАТЕГИИ ТЕСТИРОВАНИЯ ПРОГРАММНОГО КОМПЛЕКСА С ИСПОЛЬЗОВАНИЕМ МАТРИЦЫ СВЯЗНОСТИ

*М. А. ТАДЕВОСЯН, подполковник, В. В. МАРТЫНОВ,  
доктор технических наук, А. А. МУРАДЯН, майор*

#### РЕЗЮМЕ

Методы упорядочения тестирования, характеризующие его стратегию, базируются на выделении факторов и параметров, позволяющих эффективно распределять ресурсы с учетом их влияния на качество программного комплекса. В результате тестирования в сцепленных модулях возникают ошибки, которые могут привести к существенной доработке проекта. Они распределены неравномерно и образуют кластеры, т. е. встречаются группами. Необходим выбор стратегии тестирования по принципу эквивалентного разбиения, позволяющей локализовать кластерные ошибки, имеющие тенденцию группироваться по какому-либо признаку.

Предложены две модели выбора оптимальной стратегии тестирования программного комплекса на основе кластерной оценки связности его выходных характеристик и установления отношения доминирования между модулями с заданной матрицей сцепления. Приведен алгоритм выборки и упорядочения многоарных отношений, осуществляющий построение выходного кортежа по соответствующей матрице связности.

## MILITARY ENGINEERING

### ON QUESTIONS OF A CHOICE OF OPTIMUM STRATEGY OF TESTING OF A PROGRAM COMPLEX WITH USE OF A COHERENCE MATRIX

*M. H. TADVOSSYAN, Lieutenant-Colonel, V. V. MARTINOV,  
Doctor of Technical Science, A. A. MOURADYAN, Major*

#### SUMMARY

The methods of regulation of testing characterizing its strategy, are based on allocation of the factors and parameters allowing effectively distribute resources subject to their influence on quality of a program complex. As a result of testing coherence modules there are errors, which can result in essential completion of the project. They are distributed non-uniformly and will form clusters, i. e. meet by groups. The choice of strategy is necessary of testing by the principle of equivalent splitting allowing to locate cluster mistakes having the tendency to be grouped to any indication.

Thus offered two models of a choice of optimum strategy of testing of a program complex are on the basis of cluster estimation of coherency of its target characteristics and establishment of the attitude of domination between modules with the given matrix of coupling. The algorithm of sample and ordering multiar attitudes which are carrying out construction of a target cortege on the appropriate matrix of coherence is brought.

# ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

## ԶԻՆՇԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՕՐԳԱՆԻԶՄԻ ՈՉ ՄՊԵՑԻՖԻԿ ԴԻՄԱԴԻՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՌԱՆՄԱՆ ՀԱՐՑԸ

Ա. Ս. ԱՂԱԲԱՅԱՆ, բժ մայր, կենսաբանական գիտությունների դոկտոր,  
Ա. Վ. ՂԱԶԱՐՅԱՆ, բժ փոխգնդապետ, բժշկական գիտությունների թեկնածու,  
Է. Հ. ՀԱԿՈՒԹՅԱՆ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ռազմական բժշկության գլխավոր ինդիքը դինժամադրողների առողջության պահպանումն ու մարտունակության բարձրացումն է: Այս առումով ինչպես հիվանդությունների, այնպես էլ վարակումների առաջացման և տարածման ժամանակ մեծ նշանակություն և ստանում օրգանիզմի ոչ սպեցիֆիկ դիմադրողականությունը: Նրանով է պայմանավորված անձնակազմի ընդունակությունը՝ հարմարվելու փնվորական ծառայությանը, սոցիալ-տնտեսական պայմաններին, որոնք շատ դեպքերում դառնում են տարբեր, այդ թվում նաև վարակիչ հիվանդությունների տարածման պատճառ: Ուստի և առաջ է գալիս փնվորատրոֆ օրգանիզմի ոչ սպեցիֆիկ դիմադրողականությանը շտկման և խթանման եղանակների կիրառման և միջոցների ընտրության անհրաժեշտությունը:

Ձինվորական կոլեկտիվներում վարակիչ հիվանդությունների կանխարգելումը վերջին տարիներին կարևոր նշանակություն է ստացել երկու պատճառով. նախ՝ փոփոխվել է վարակումային ախտաբանության պրոֆիլը (լեգյոնելիոզ, Մարբուրգի և Էբոլի հիվանդություններ, ՋԻԱՀ և այլն), երկրորդ՝ չկան վարակումների սպեցիֆիկ կանխարգելման բազմակողմանիորեն ուսումնասիրված արդյունավետ համակարգեր: Մի շարք վարակիչ

հիվանդությունների կանխարգելման գործում այսօր տարվող սանիտարահիգիենիկ և հավահամաճարակային միջոցառումների համակարգը համարյա թե չի տալիս սպասվող արդյունքը: Այս իրավիճակում, մեր կարծիքով, արդյունավետ կարող է լինել փնվորական կոլեկտիվներում այսպես կոչված իմունախթանիչների լայն օգտագործումը իմունապակսորդի վերաբերման և իմունադիմադրողականության բարձրացման, ինչպես նաև բնական պաշտպանական գործոնների ակտիվացման նպատակով, այսինքն՝ իմունականխարգելման համար:

Եթե օրգանիզմի իմունադիմադրողականության բարձրացման ուղղությամբ միջոցառումները ժամանակին չեն անցկացվում, ապա համաճարակային շտամի ընտրության փուլը կարող է անցնել հարուցիչի համաճարակային տարածման փուլը: Ձինվորական կոլեկտիվներում այս հարցը պահանջում է հատուկ ու շաղկապուն բժշկական ծառայության կողմից:

Ձինժամադրողների օրգանիզմի իմունադիմադրողականության բարձրացման համար ներկայումս կիրառվում են հետևյալ հիմնական մեթոդները.

— ընդհանուր բնույթի միջոցառումներ, որոնք պահպանում և ամրապնդում են առողջությունը,

— իմունականխարգելում,

— արտահերթ կանխարգելում,

— իմունակարգավորում:

Ձինվորական կոլեկտիվներում իմունամոդուլյատորների կիրառումը կապված է այնպիսի համալիր միջոցառումների կազմակերպման հետ, որոնք

<sup>1</sup> Տևա Գ. Вильямс, В. Трефур и др. Питание, окружающая среда и здоровье. «Медицина», 1994, XXI, с. 138; П. Ф. Забродский, В. Ф. Киричук. Изменения песпцифической резистентности организма и иммунитета у воетпослужащих, призванных из экологически неблагополучных районов. «Воспно-медицинский журнал», 1994, № 3, сс. 67–69.



ուղղված են վինժառայողի օրգանիզմի բնական դիմադրողականության բարձրացմանը:

Իմունականիսարգելումը, որը կատարվում է ակտիվ անընկալունակացման միջոցառումների իրագործմամբ, նպաստում է վարակիչ հիվանդություն-

անատրոսիները, ձիու իմունային շիճուկները:

Իմունապակտրոդային վիճակների շտկման, ոչ սպեցիֆիկ դիմադրողականության և իմունային պատասխանի խթանման նպատակով իմունամոդուլյատորների կիրառումը կլինիկական և կանխ-



Հակահամաճարակային պատվաստում ՀՀ ՋՈՒ-ի պորամասերից մեկում

ների նկատմամբ մարդկանց ընկալունակության պզաի իջեցմանը: Մեր կարծիքով, հեռանկարային է պատվաստման ենթակա անձնակազմի անընկալունակացման պանգվածային ձևից ընտրողականին անցումը և պրակտիկայում գիտականորեն հիմնավորված համալիր ու ասոցիացված անընկալունակացման սխեմաների ներդրումը, որը պահանջում է ռիսկի կոնտինգենտների համաճարակաբանորեն հիմնավորված ընտրություն:

Կատարվում է այն անձնանց արտահերթ կանխարգելավորում, որոնք արդեն ենթարկվել են վարակման ռիսկի կամ էլ վարակման բարձր ռիսկի պայմաններում են: Վարակիչ հիվանդությունների կանխարգելումը կատարվում է այնպիսի արագ ապրող դեղամիջոցների կիրառմամբ, որոնց հիմքը կազմում են հակաբիոտիկները, քիմիաթերապևտիկ միջոցները, պատվաստանյութերը,

արգելիչ բժշկության կարևոր հեռանկարային ուղղություններից մեկն է: Իմունաշտկման գործնական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վինվորական կոլեկտիվներում իմունապակտրոդ ունեցող անձանց մինչև 20-30 տոկոսը համարվում է հարույիչների շտեմարաններ, որովհետև, չնայած կատարված բուժման, այդ հարույիչները ընդունակ են այստաաարված հյուսվածքներում գոյատևելու և բավանալու<sup>2</sup>:

Ռազմարժկական ծառայության հակահամաճարակային պրակտիկայում իմունամոդուլյատորների օգտագործման

<sup>2</sup> Stu A. A. Дегтярев, С. М. Фургал. Применение средств стимуляции и коррекции иммунной системы в профилактике инфекционных заболеваний в войсках. «Военно-медицинский журнал», 1990, № 7, сс. 56—58; В. Ф. Корольков, С. М. Фургал, М. И. Ишкильдин. Стратегия и основные направления оптимизации иммунопрофилактики в войсках. «Военно-медицинский журнал», 1994, № 3, сс. 35—39.

հեռանկարները որոշելիս պետք է հաշվի առնել ներկայիս պայմաններում անսուզ մը պոպուլյացիոն հակահամաճարակային մոտեցմանը, որի հիմքը հետևյալն է. համաճարակային գործընթացը մարդու և ոչ միատարր, փոփոխական հարուցիչների փոխազդեցության արդյունք է:

Իմունամոդուլյատորների պանզվածային կիրառման դեպքում փոխվում է ոչ միայն մեկ անձի, այլև մարդկանց պոպուլյացիաների ընկալունակությունը հարուցիչներին նկատմամբ, ինչն իր հերթին հանգեցնում է դրանց փոփոխականության խթանմանը: Պոպուլյացիոն փոխազդեցության այսպիսի ըմբռնումը կարող է տեսական հիմնավորում ծառայել պինդորակյան կոլեկտիվներում իմունամոդուլյատորների օգտագործմանը երկու ուղղություններում՝ պանզվածային և ընտրողական<sup>3</sup>:

Վերջին տարիներին հայտնաբերվել են մեծ թվով միացություններ, որոնք օժտված են իմունամոդուլիչ և իմունակարգավորիչ հատկություններով: Հակահամաճարակային պրակտիկայում առավել նախընտրելի են թիմայինը, թիմոգենը, T-ակտիվինը, նատրիումի նուկլեինատը, ինտերֆերոնը, դիբազոլը, լեվամիպոլը, պրոդիգիպանը<sup>4</sup>: Մեր կողմից առաջարկված է կենսաբանական ծագում ունեցող նոր, բարձր արդյունավետությամբ իմունակայանիչ՝ Ca-պրեյի-

պիտատի ձևով երկթել Ռ-ՆԹ (ռիբոնուկլեինաթթու):

Ca-Ռ-ՆԹ-ն օժտված է արտահայտված իմունաիդանիչ, հակավիրուսային, հակաբորբոքային և թունազերծիչ հատկություններով: Դեղամիջոցը, լինելով ներածին ինտերֆերոնի մակածիչ, խթանում է ֆագոցիտոզը, ուժեղացնում է օրգանիզմում բնական սպանիչների ակտիվությունը, օժտված է նաև հակառուռուցքային և հակաճատագայթային հատկություններով, խթանում է հյուսվածքների ռեգեներացիայի և ռեպարացիայի գործընթացները՝ նպաստելով վերքերի արագ լավացմանը<sup>5</sup>:

Ներկայումս բոլոր հայտնի իմունամոդուլյատորները առաջ են բերում օրգանիզմի բազմագործոն պաշտպանողական հակազդում, որի հիմնական օղակը մակրոֆագային համակարգի ակտիվացումն է: Դրանց ազդեցությամբ մեծանում է T և B լիմֆոցիտների գործառության ակտիվությունը և բարձրանում է հակավարակումային ու հակառուռուցքային պաշտպանության հուսմորալ գործոնների մակարդակը:

Բանի որ ներկայումս իմունամոդուլյատորների օգտագործման կարիք ունեցող անձանց ընտրության չափանիշները վերջնականապես ձևակերպված չեն, ապա իմունամոդուլյատորների պանզվածային օգտագործումը նըպատակահարմար չէ: Չունյաժ դրան՝ պանզվածային ոչ սպեյիֆիկ կանխարգելումը կարող է համարվել արդյունավետ հակահամաճարակային միջոցառում, քանի որ օրգանիզմի դիմադրողականության բարձրացմանը վուզընթաց այն նպաստում է հարուցիչի շար-

<sup>3</sup> Shu B. D. *Беляков. Р. Х. Яфавев. Эпидемиология. М., 1989, с. 356.*

<sup>4</sup> Shu A. T. *Гречко, Р. Р. Садыков, В. П. Хомутов и др. Быстродействующие адаптогены в эксперименте и клинике. «Материалы 5-го Российского национального конгресса: Человек и лекарство». М., 1998, с. 558; А. А. Дегтярев, С. М. Фургал. Применение тималина для профилактики респираторных инфекций. «Военно-медицинский журнал», 1988, № 1, сс. 47–49; А. А. Дегтярев, С. М. Фургал, В. Е. Захаров. Использование тималина для стимуляции иммунного ответа у привитых гриппозной вакциной. «Военно-медицинский журнал», 1988, № 9, сс. 37–39; Р. С. Рахманов, А. П. Назаров, Н. Е. Понамарева и др. Об использовании дибазола для профилактики острых кишечных заболеваний и вирусного гепатита А. «Военно-медицинский журнал», 1989, № 7, сс. 56–58.*

<sup>5</sup> Shu A. C. *Агабалян, О. Я. Давтян, А. А. Багасарян и др. Влияние кальциевых форм РНК на развитие опухолевого процесса. «Доклады АН Армении», 1989, № 1, сс. 31–35; А. С. Агабалян, Л. У. Назаров, Э. Б. Акопян. Стимуляция неспецифической резистентности организма препаратами низкомолекулярной РНК. «Доклады НАН РА», 1996, № 1, сс. 62–67; А. С. Агабалян, Л. У. Назаров, Э. Б. Акопян. ДС РНК как фактор, стимулирующий регенеративные и репаративные процессы в тканях. «Доклады НАН РА», 1993, № 3, сс. 173–177.*

ջանառություն ինտենսիվության նվազմանը<sup>6</sup>:

Ռազմական բժշկության պրակտիկայում իմունամոդուլյատորների կիրառումը կարող է կրել բազմապլան բնույթ, քանի որ, բացի վինժատայոնների օրգանիզմի դիմադրողականության խթանումից, դյաւրք կարող են կանխարգելման նպատակով օգտագործվել նախահամաճարակային շրջանում այն անձանց համար, որոնց անընկալունակությունը ցածր է:

Հարկ ենք համարում նշել, որ տարբեր վարակիչ հիվանդությունների դեմ մարդկանց պատվաստման ժամանակ մեծ է իմունամոդուլյատորների՝ որպես իմունային պատասխանն ակտիվացնող միջոցի դերը<sup>7</sup>:

Հայաստանի Հանրապետության

<sup>6</sup> Шу Т. А. Семенов, В. С. Перепелкин, В. И. Васильева и др. Эпидемиологическая эффективность неспецифической профилактики острых респираторных инфекций в организованных коллективах. «Журнал микробиологии», 1988, № 11, сс. 71—74.

<sup>7</sup> Шу А. А. Дегтярев, С. М. Фургал, В. Е. Захаров. Использование тималина для стимуляции иммунного ответа у привитых гриппозной вакциной. «Военно-медицинский журнал», 1988, № 9, сс. 37—39; Д. Н. Лазарева,

պայմաններում տվյալ պրոբլեմը ձեռք է բերում առավել մեծ կարևորություն՝ կապված տարբեր կլինայական պայմաններում մարդկանց գտնվելու, խրոնիկապես ազդող ազդեցիվ գործոնների ազդեցության, ինչպես նաև սննդի բաղադրիչների ապահովասարակշռման և այլ հանգամանքների հետ:

Այսպիսով՝ վարակիչ հիվանդությունների ոչ սպեցիֆիկ կանխարգելումը հիվանդությունների կանխարգելման միջոցների շարքում համեմատաբար նոր և արդյունավետ ուղղություն է: Ռազմական բժշկության բնագավառում նրա լրիվ ներդրման համար անհրաժեշտ է փնտրել և սահմանադրափոխել հիվանդությունների մասնագետների համագործակցությամբ մանրակրկիտ կազմակերպական աշխատանք տանել կանխարգելման ապահովման և նրա արդյունավետության գնահատման ուղղությամբ: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է վարակիչ հիվանդությունների ծագման և տարածման կանխարգելման նպատակով մշակել համապատասխան միջոցառումների համալիր:

Е. К. Алехин. Стимуляторы иммунитета. М., 1985. с. 250.

## ՏԵՂԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՓՈՒԼԱՅԻՆ ԲՈՒԺՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Վ. Պ. ԱՅՎԱԶՅԱՆ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Ս. Գ. ԳԱԼՍՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր,  
Մ. Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, բժշկական գիտությունների թեկնածու,  
Մ. Է. ՄԿՐՏՅԱՆ

XX դարում մղված բոլոր պատերազմները միմյանցից տարբերվում են ինչպես մասշտաբներով, այնպես էլ կիրառված ռազմական տեխնիկայի և պենրի բնույթով: Անկասկած պատերազմների ժամանակ ռազմական բժշկության կողմից կիրառված սկզբունքները հնարավորություն են տվել փրկելու մեծ թվով վիրավորների կյանքը՝ նրանց շարք վերադարձնելով: Խոսքը մասնավորապես վերաբերում է երկրորդ համաշ-

խարհային պատերազմի տարիներին կիրառված փուլային բուժման համակարգին, որն իրեն լիովին արդարապրոբե՝ ապահովելով վիրավորներին և հիվանդներին ցույց տրվող բուժօգնության բարձր մակարդակը: Այսպես՝ ըստ գրականության տվյալների այդ համակարգի շնորհիվ 1941—1945 թթ. Հայրենական պատերազմի ժամանակ բուժվել և ռազմադաշտ է վերադարձվել վիրավորների 72,3 տոկոսը և հիվանդների 90,6 տոկո-

սը: Դրա հետ մեկտեղ բազմաթիվ փուլերի առկայությունը երկարաձգում էր վիրավորների բուժման ժամկետները, նվազեցնում մի շարք վիրավորումների (գանգի, ծնոտների, կրծքավանդակի և այլն) և հիվանդությունների ժամանակ ցույց տրվող մասնագիտացված բուժօգնության արդյունավետությունը:

Սակայն փուլային բուժման եղանակը, թեև այժմյան տեղային պատերազմների, ռազմական ընդհարումների և բախումների ժամանակ հիմնականում պահպանում է իր արդիականությունը, այնուամենայնիվ լիովին չի արտացոլում ռազմական բժշկության իրական վիճակը:

Հայտնի է, որ յուրաքանչյուր պատերազմի բնույթն ու առանձնահատկությունները պայմանավորվում են ինչպես օգտագործվող մարդկային ռեսուրսներով, այնպես էլ կիրառվող տեխնիկական միջոցներով: Վերջին տասնամյակների ամենադաժան ռազմական ընդհարումներից մեկը աֆղանական պատերազմն էր, որը տևեց շուրջ 10 տարի և ստացավ «ակառնային պատերազմ» անունը: Նման տեսակի և քանակի ռազմամթերքի առկայությունը էական արդեցություն է գործել այդ պատերազմի ընթացքում տեղ գտած սանիտարական կորուստների բնույթի վրա: Խորհրդային փնջված ուժերի գլխավոր շտաբի տվյալներով Աֆղանստանում ԽՍՀՄ կորուստները կազմել են 64118 մարդ, այդ թվում՝ 13833 փոխված, 49985 վիրավոր և 330 անհայտ կորած: Ընդ որում, եթե 1980 թ. գնդակային և բեկորային վնասվածքների հարաբերությունը եղել է 2:1, ապա 1988 թ. այն կազմել է 1:2,5: Երկրորդ աշխարհամարտի առաջին տարում գնդակային վերքերը կազմել են ընդհանուր վիրավորումների թվի 49 տոկոսը, բեկորայինը՝ 51 տոկոսը, չորրորդ տարում, համապատասխանաբար՝ 39 և 61 տոկոսը:

Հնդկաչինի երկրներում մղված պատերազմի ժամանակ գնդակային վիրավորումները կազմել են 51,5 տոկոս, բեկորայինը՝ 48,5 տոկոս, Կորեայում՝ 15 և 85 տոկոս, Վիետնամում՝ 24 և 76 տոկոս:

Գնդակային վիրավորումների թիվը տարբեր տեղային ընդհարումների ժամանակ կազմում է 7—52 տոկոս: Ռազմական բժշկությունը չի կարող հաշվի չառնել այդ պատերազմների առանձնահատկությունները:

Դեռևս առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Վ. Ա. Օպելը առաջարկեց վիրավորների փուլային բուժման սկզբունքը, որը հետագայում վերածվեց մի ամբողջ համակարգի: Ընդ որում, ըստ նրա, բուժտարահանման բոլոր փուլերում առաջնությունը պետք է արվի վիրավորների բժշկական տեսակավորմանը:

Համաձայն փուլային բուժման համակարգի մարտական գործողությունների ժամանակ բուժօգնություն ցույց տալու նպատակով կատարվող բժշկական տարահանման յուրաքանչյուր փուլն ունի իր կոնկրետ խնդիրները: Տարահանման յուրաքանչյուր փուլում ըստ համապատասխան բժշկական ցուցումների իրագործվող միջոցառումների ամբողջությունը կազմում է, ինչպես ընդունված է անվանել, բուժօգնության ծավալը: Կախված պայմաններից՝ բուժօգնության ծավալը ենթակա է փոփոխությունների:

Պետք է նշել, որ փուլային բուժման հասկացությունը և համակարգը ստեղծվել ու ձևավորվել են ռուսական և խորհրդային ռազմական բժշկության ակադեմիկոս գործիչների ջանքերով: Փուլային բուժումն իր կենսունակությունն ապացույց է հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի և հետագա տեղային պատերազմների ժամանակ և Ռուսաստանում որպես այդպիսին պահպանվել է նաև ներկայումս:

Որպես փուլային բուժման հիմնական սկզբունքներ ընդունված են հետևյալները.

1. բուժօգնության շարունակորումը,
2. նրա ցուցաբերումը վիրավորներին և հիվանդներին հնարավորին չափ մոտ,
3. այդ օգնության վաղ ցուցաբերումը,
4. բուժօգնության և տարահանման օրգանական համատեղումը,

5. իրագործվող բուժամիջոցառումների հաջորդականության պահպանումը,

6. սկսած առաջին գծից՝ վիրավորների ըստ նշանակման տարահանման անհրաժեշտությունը:

Բուժօգնությանը նախորդում և ուղեկցում է բժշկական տեսակավորումը: Դրա էությունն է ցույց տրվող բուժօգնության և անցկացվող տարահանման հերթականության և բնույթի որոշումը: Համաձայն տվյալ համակարգի՝ առաջին բուժական, նախաբժշկական և առաջին բժշկական օգնությունից հետո բուժ օգնությունը տարաբաժանվում է երկու հիմնական մասի՝ որակավորված և մասնագիտացված:

Մի շարք հեղինակների կարծիքով, ներկայումս ցույց տրվող բժշկական օգնության բազմափուլությունը, հիմնականում պայմանավորված լինելով պատերազմների վարման արդի եղանակներով, հարկադրական քայլ է, քանի որ այս դեպքում վիրավորը մասնագիտացված օգնության փուլ է հասնում պզալի ուշացումով, երբ հիվանդության ելքի լավագույն արդյունքին հասնելու համար անհրաժեշտ ժամանակը արդեն կորցված է լինում:

Վերջին տարիներին տեղի ունեցած տեղային ընդհարումների ժամանակ վիրավորների տարահանման միջոց եղել է ավիացիան: Այսպես՝ ըստ ամերիկյան գրականության տվյալների կորեական պատերազմի ժամանակ ԱՄՆ-ի կողմից ուղղաթիռներով բուժկետերից հոսպիտալներ են տեղափոխվել մոտ 18 հազար վիրավորներ և հիվանդներ, իսկ ինքնաթիռներով ԱՄՆ՝ 50 հազար մարդ, կամ ընդհանուր սանիտարական կորուստների 44 տոկոսը: Նմանատիպ պատկեր դիտվել է նաև Վիետնամի, արաբա-իսրայելական պատերազմների, Ֆոլկլենդյան կղզիների պաշարման և այլ ռազմական ընդհարումների ժամանակ: Օրինակ՝ ըստ որոշ տվյալների արաբա-իսրայելական պատերազմներում Իսրայելի կողմից օդային ճանապարհով տեղափոխվել է վիրավորների մոտ 82 տոկոսը:

Նմանատիպ պատկեր կամ միտում նկատվում է համարյա բոլոր տեղային

պատերազմների ժամանակ: Ընդհանրապես, օդային տրանսպորտով վիրավորների տեղափոխումը իսկապես ունեցել է և ունի մեծ նշանակություն տեղային ռազմական ընդհարումների ժամանակ: Դրա հետ մեկտեղ պետք է նշել մի կարևոր հանգամանք: Վերջին ժամանակներ-



Ռազմաբժշկական օգնություն կլիմայական ծայրահեղ պայմաններում. Մինսկ, 1991  
(«Military Review», 1995, № 5)

րի պատերազմները հիմնականում տեղի են ունեցել մեծ տերությունների և փոքր երկրների միջև, երբ հակամարտող կողմերից մեկը, ունենալով օդում բացարձակ գերակշռություն, կարող էր իրեն թույլ տալ վիրավորների տարահանում օդային տրանսպորտով:

Մեր փորձը հիմք է տալիս եզրակացնելու, որ վիրավորների տարահանման խնդրում օդային տրանսպորտի դերը իսկապես մեծ է: Մինևույն ժամանակ պետք է նշել, որ բոլոր հարցերի լուծումը չի կարելի տեսնել միայն օդային տրանսպորտի կիրառման մեջ:

Սույն հոդվածում մենք միայն ա-

ռանձնացրին տեղային պատերազմների ժամանակ փուլային բուժման բարդ պրոբլեմի՝ մեր տեսակետից առավել կարևոր առումները: Սակայն, հաշվի առնելով բուն թեմայի կարևորությունը, հուսով ենք, որ հոդվածը կարժանանա այլ մասնագետների ուշադրությանը, գուցեև առիթ կտա օգտակար բանավեճի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Медицинское обеспечение 40-й армии. (Цифры и факты)». «Военно-медицинский журнал», 1991, № 8.
2. Э. А. Нечаев. Перестройка военного здравоохранения, поиск новых путей и решений. «Военно-медицинский журнал», 1990, № 1.
3. А. И. Сидельников. Организация медицинской эвакуации раненых и больных в условиях горно-пустынной местности (сообщение второе). «Военно-медицинский журнал», 1985, № 1.
4. И. М. Чиж. Организационные основы построения современной системы медицинского обеспечения вооруженных сил. «Военно-медицинский журнал», 1996, № 1.

## ВОЕННАЯ МЕДИЦИНА

### К ВОПРОСУ О СТИМУЛЯЦИИ НЕСПЕЦИФИЧЕСКОЙ РЕЗИСТЕНТНОСТИ ОРГАНИЗМА В ВОЕННЫХ КОЛЛЕКТИВАХ

А. С. АГАБАЛЯН, майор м/с, доктор биологических наук, А. В. КАЗАРЯН, подполковник м/с, кандидат медицинских наук, Э. А. АКОПЯН, кандидат медицинских наук, доцент

#### РЕЗЮМЕ

Основными задачами военной медицины являются охрана здоровья военнослужащих и повышение их боеспособности. В связи с этим особое значение приобретает вопрос повышения иммунорезистентности и стимуляции неспецифической резистентности организма военнослужащих. Основными направлениями повышения иммунорезистентности организма, проводимыми сегодня в военных коллективах, являются: мероприятия общего характера, иммунопрофилактика, экстренная профилактика и иммунокоррекция. При проведении тотальной и селективной профилактики инфекционных заболеваний в войсках с целью иммунокоррекции иммунодефицитных состояний и иммунопрофилактики эффективно использование иммуномодуляторов, из которых наиболее современными и перспективными в эпидемиологическом отношении являются: Т-активин, тималин, тимоген, интерфероны, дибазол, продегиазан и другие.

Для профилактики и лечения различных патологических состояний, таких как вирусные заболевания, воспалительные процессы, гнойные поражения кожных покровов различной этиологии, раны различного происхождения, ожоги, в качестве высокоэффективного средства предлагаются низкомолекулярные двухспиральные рибонуклеиновые кислоты (дс РНК) биологического происхождения. Этот препарат обладает также радиопротекторным эффектом, стимулирует процессы регенерации пораженных тканей, повышает активность макрофагов и процесса фагоцитоза, усиливает первичный и вторичный иммунные ответы организма и т. д.

К ВОПРОСУ ОБ ЭТАПНОМ ЛЕЧЕНИИ ВО ВРЕМЯ ЛОКАЛЬНЫХ ВОЙН

*В. П. АЙВАЗЯН, доктор биологических наук, профессор, С. Г. ГАЛСТЯН, подполковник м/с, доктор медицинских наук, М. Г. МАРГАРЯН, кандидат медицинских наук, М. Э. МКРТЧЯН*

РЕЗЮМЕ

Принципы, использованные военной медициной в войнах XX века, позволили спасти жизнь большому числу раненых. В частности, это относится к принципу этапного лечения, благодаря которому в годы ВОВ излечились и вернулись на фронт 72,3 % раненых и 90,6 % больных. Согласно этому принципу на всех этапах эвакуации предпочтение отдается медицинской сортировке, предполагающей после первой медицинской, доврачебной и первой врачебной помощи оказание собственно помощи двух типов: квалифицированной и специализированной. В основе системы этапного лечения лежат следующие принципы: эшелонированность медпомощи; ее приближение к больным и раненым; раннее оказание; органическое совмещение с эвакуацией; соблюдение последовательности в осуществлении лечебных мероприятий; необходимость эвакуации раненых, начиная с первой линии, согласно предписаниям.

Однако военная медицина обязана учитывать как масштабы войн, так и характер применяемых в них военной техники и вооружения, в частности, широкое использование разного рода мин. Поэтому, по мнению некоторых авторов, многоступенчатость медицинской помощи является вынужденным шагом, поскольку раненый достигает этапа специализированной помощи со значительным опозданием, когда время, необходимое для достижения наилучшего исхода болезни, бывает в значительной мере упущено.

В последнее время основным средством эвакуации раненых во время локальных войн служила авиация. Опыт показывает, что, хотя роль авиации при обеспечении эвакуации раненых велика, однако решение этой проблемы нельзя видеть лишь только в ее использовании.

Поднятые в статье вопросы, удостоившись внимания специалистов, могут стать основой для дискуссии, что, несомненно, будет способствовать разработке в наших ВС военно-медицинской концепции, соответствующей современному уровню военной медицины.

MILITARY MEDICINE

ON QUESTION ABOUT STIMULATION OF NONSPECIFIC RESISTANCE OF AN ORGANISM IN MILITARY COLLECTIVES

*A. S. AGHABALYAN, Major of Medical Service, Doctor of Biological Sciences,  
A. B. GHAZARYAN, Lieutenant-Colonel of Medical Service, Candidate of Medical Sciences,  
E. A. HAKOBYAN, Candidate of Medical Sciences, Docent*

SUMMARY

The basic tasks of military medicine is protection of health of military men and increase of their fighting capacity. In this aspect the problem of increase of immuno-resistance and stimulation of non-specific resistance of military men's organisms become especially important. The main directions of immuno-resistance of organism increase being nowadays carried out in military collectives are measures of general character, immunoprophylaxis, urgent preventive mainte-

nance and immunocorrection. While carrying out total and selective prophylaxis of infectious diseases in troops with the purpose of immunocorrection of immunodeficit conditions and effective immunoprophylaxis in military collectives are examined, which from the point of view of epidemiology the most modern prospective immunomodulators are regarded: T-activin, timalin, timogen, interferon, dibasol, prodegiasan and others.

The high effectiveness of ds RNA is especially emphasized during prophylaxis and treatment of pathological conditions; such as virus diseases, inflammation, purulent affections of cutaneous integuments of different etiology, wound of different organisms, burns. This preparation has also radioprotector effect, it stimulates the process of regeneration of affected tissues, increases the activity of macrophages and process of phagocytosis, increase the primary and secondary immune answers of organism etc.

#### ABOUT PHASE TREATMENT DURING LOCAL WARS

V. P. AYVAZYAN, *Doctor of Biological Sciences, Professor, S. G. GALSTYAN,*

*Lieutenant-Colonel of Medical Service, Doctor of Medical Sciences,*

M. G. MARGARYAN, *Candidate of Medical Sciences, M. E. MKRTCHYAN*

#### SUMMARY

The principles used by military medicine in wars of XX century have allowed to rescue lives of a great number of the wounded. In particular, it concerns to a principle of phase treatment, owing to which during the Great Patriotic War 72,3% of the wounded and 90,6% of the patients have been recovered and returned to front. According to this principle at all stages of evacuation the preference is given to medical sorting which supposes after first medical, preprofessional and first medical assistance rendering to actual help of two types: qualified and specialized. following principles lay in a basis of phase treatment system: echelon-type medical assistance; its approach to the patient and the wounded; early rendering; organic overlapping with evacuation; observance of condition in realization of medical measures; necessity of evacuation of the wounded from the front line, according to the instructions.

However military medicine should take into account both scales of wars, and character used in them of military engineering and arms, in particular, wide use of different sort of mines. Therefore, in opinion of some authors, multi-phase medical help is a compelled step, as the wounded achieve a stage of the specialized help with significant delay, when the time necessary for achievement of the best outcome for illness, sometimes happens to be much missed.

Recently basic means of evacuation of the wounded during local wars was served by aircraft. The experience proves, that, though the role of aircraft with maintenance of evacuation of the wounded is great, however solution of this problem cannot be seen only in its application.

The questions, risen in the article, taken into consideration by the experts, can become a basis for discussion, that, undoubtedly, will promote development of the military-medical concept in our Armed Forces, which corresponds to a modern level of military medicine.



# ՌԱԶՄԱՃԱՐՏԱՐԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ՀԱԿԱԶԳՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՈՐՈՇՈՒՄԸ  
ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ  
ԳԻՏԱՓՈՐՁԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Վ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, կապիտան

Հայտնի է, որ մասնագիտության հետ կապված վտանգներից պաշտպանվածությունը կախված է, ի թիվս այլ գործոնների, ավյալ անձին հատուկ հոգեբանական հատկանիշներից, որոնցից առավել կարևորներն են այնպիսի կայուն հատկությունները, ինչպես խառնվածքը, ուշադիրությունը, շարժումների համաձայնեցվածությունը, հուզական կայունությունը: Կարևոր է նաև մարդու ունակությունը՝ արագ ու ամբողջովին ընկալելու և իմաստավորելու բարդ և վտանգավոր իրավիճակները, հարթահարելու դրանց հետ կապված նյարդային գրգռումները: Դրա հիմնական ցուցանիշը գրգռունեքին մարդու հակազդման ժամանակն է: Ասվածը լիովին վերաբերում է նաև վարորդներին<sup>1</sup>: Գոյություն ունեն հակազդման ժամանակի որոշման տարբեր մեթոդներ, որոնցից առավել հեռանկարային է նմանակումային մեթոդը<sup>2</sup>: Վարորդական կազմի ընտրության համար անհրաժեշտ է ըստանալ հակազդման ժամանակի նորմատիվ հավասարումը, որում հաշվի առնված լինեն մի շարք փոփոխական գործոններ: Որոշման խնդիրը էապես կպարզեցվի, եթե հնարավոր դառնա չափումները կատարել ստացիոնար պայմաններում, իսկ այնուհետև ստացված արդ-

յունքներն արտարկել երթևեկության ռեալ պայմաններում մեքենայի վարման դեպքի վրա: Դա նշանակում է, որ պետք է գտնել ստացիոնար պայմաններում չափված և ռեալ պայմաններում որոշվելիք (ինչպես առանց ստրես-գործոնի, այնպես էլ նրա առկայությամբ) հակազդման ժամանակների միջև համահարաբերակցային գործակիցը: Այս խընդիրը լուծելու համար մենք ՀՀ ՁՈՒ-ի պորամասերում կատարեցինք մի շարք գիտափորձեր, որոնցում կիրառվեց վարորդի հակազդման ժամանակի չափման մեր կողմից մշակված և պատրաստված սարքը<sup>3</sup>:

Նման կարգի գիտափորձերը սովորաբար կատարվում են երկու փուլով՝ նախնական և վերջնական:

*Նախնական փուլը* ներառում է այնպիսի հիմնարար քանակական գործոնների դիտարկումը, ինչպիսիք են՝

- ավտոմեքենայի տեխնիկական արագությունը՝  $V$ , կմ/ժ,
- վարորդի տարիքը՝  $S$ , տարի,
- վարորդի որակավորումը (վարորդական կարգախումբ)՝  $N$ ,
- վարորդի թույլ տված սխալը՝  $U_{խ}$ ,
- վարորդի ստաժը՝  $U_{տ}$ , տարի:

*Վերջնական փուլը* ներառում է քանակական գործոնների հետ մեկտեղ նաև այնպիսի գործոնների դիտարկումը, ինչպիսիք են.

- հուզական ֆոնի մակարդակը (յաճր, միջին, բարձր)՝  $\zeta$ ,

<sup>1</sup> Տես Վ. Հ. Մարգարյան, Ջինված ուժերում վարորդական կազմի մասնագիտական ընտրության հարցի շուրջ: «ՀԲ», 1998, հմ. 1:

<sup>2</sup> Տես Վ. Հ. Մարգարյան, Ռեալ երթևեկության պայմաններում ստրես-գործոնի առկայությամբ վարորդի հակազդման ժամանակի չափումը: «ՀԲ», 1998, հմ. 4:

<sup>3</sup> Սարքի մտփն ավելի հանգամանորեն տես նույն տեղում:

— վարորդի վարքը (կոնկրետ խընդորի լուծման ժամանակ՝ հունդարտ, այսինքն՝ հավասարակշռված, վիճակ և շփոթվածություն)՝ Վ:

**Գիտափորձերի պլանավորման մաթեմատիկավիճակագրական մեթոդները**, որոնք լայն կիրառություն են ստացել վերջին տարիներին, հնարավորություն են տալիս ոչ միայն կրճատելու գիտափորձերի թիվը, այլև ստանալու տվյալ գիտափորձի մոդելը: Բացի այդ, պլանավորման մաթեմատիկավիճակագրական մեթոդները (ՄՎՄ) թույլ է տալիս փորձերը դնել նախապես կազմված 2<sup>n</sup> կամ 3<sup>n</sup> տիպի սխեմայով (այստեղ *n*-ը գործոնների թիվն է): Մեր դեպքում եթե առաջին փուլում դիտարկվում են *n*=5 գործոններ (*V*<sub>1</sub>, *S*, *Ո*, *Սի*, *Սի*), ապա երկրորդ փուլում դիտարկվում են *n*=6 գործոններ (*S*, *Ո*, *Սի*, *Սի*, *Հ*, *Վ*):

Առաջին խնդիրը լուծում ենք 3<sup>n</sup> տիպի գործոնային պլանավորմամբ (այն նպատակով, որ կարողանանք որոշել, թե ինչպիսին կլինի հետապոստովոյ ֆունկցիայի գրաֆիկը. այս տիպի պլանավորման դեպքում առավելագույն և նվազագույն կետերից բացի որոշվում է նաև հեռակետային, կամ միջին, կետը): Երկրորդ խնդիրը լուծում ենք 2<sup>n</sup> տիպի գործոնային պլանավորմամբ: 3<sup>n</sup> տիպի գործոնային գիտափորձը ցույց է տալիս, որ շուրաքանչյուր գործոն կարող է վերցվել 3 մակարդակներում, ընդամին շուրաքանչյուր գործոնի մակարդակների միջև գոյություն ունեն ապատության 2 աստիճան: Եթե այս տիպի գիտափորձերում գործոնների մակարդակները հավասարաբեթ են, ապա գծային և քառակուսային էֆեկտների դուրսբերման և ըստ արժեքավորման դրանց ստուգման համար կիրառվում են հատուկ մեթոդներ<sup>4</sup>: Երկրորդ փուլում կատարում ենք 2<sup>n</sup> տիպի գործոնային գիտափորձ, քանի որ 3<sup>n</sup> տիպի պլանավորումից հետո գծա-

յին ֆունկցիայի տեսքն արդեն հայտնի է դարձել:

2<sup>n</sup> տիպի գործոնային գիտափորձը ներառում է *n* թվով գործոններ, որում դրանցից յուրաքանչյուրը վերցվում է միայն 2 մակարդակում, ընդ որում դրանք դիտարկվում են որպես ֆիքսված: Դա այն բանի հետևանքն է, որ երկու մակարդակներն ընտրվում են ոչ թե պատահական ձևով, այլ սահմանային արժեքներին մոտ կետերում, օրինակ՝ վարորդի ստաժը կամ տարիքը:

3<sup>n</sup> տիպի լրիվ գործոնային գիտափորձը մեր դեպքում բաղկացած է  $N=3^5=243$  փորձից, որոնցում միաժամանակ փոփոխվում են *V*<sub>1</sub>, *S*, *Ո*, *Սի*, *Սի* գործոնները երեք ֆիքսված մակարդակներում, այն է՝

- V*<sub>1</sub> ⇒ {20, 25, 30} կմ/ժ,
- S* ⇒ {18, 39, 60} տարի,
- Սի* ⇒ {1, 16, 31} տարի,
- Ո* ⇒ {C(3), BC(4), BCD(5)},
- Սի* ⇒ {0,41 (կուպ.), 0,68 (միջ.), 0,95 (թ.)}:

*Ո* գործոնը դիտարկվում է երեք գնահատականներով. *C*՝ բավարար (3), *BC*՝ լավ (4), *BCD*՝ գերազանց (5), *Սի* գործոնը նույնպես երեք՝ կոպիտ սխալ՝ 0,41, մասնակի, կամ միջին, սխալ՝ 0,68, չնչին, կամ թեթևակի, սխալ՝ 0,95:

Այսպիսով՝ խնդիրը ձևակերպվում է մոտավորապես հետևյալ կերպ. որոշել վարորդի հակադրման նորմատիվ ժամանակը՝ կախված 5 գործոնից, ընդամին այդ խնդրի մաթեմատիկական մոդելն ունի հետևյալ գծային տեսքը.

$$t_{hi} = C_i \cdot V_i^{-1} \cdot S^{-2} \cdot \text{Սի}^{-3} \cdot \text{Ո}^{-4} \cdot \text{Սի}^{-5}, \quad (1)$$

որտեղ *z<sub>k</sub>*-ն գործոնների աստիճաններն են, իսկ *C<sub>i</sub>*-ն գործոնների բնույթը հաշվի առնող գործակիցն է:

Վատարելով անհրաժեշտ մաթեմատիկական գործողությունները<sup>5</sup>, որոնք

<sup>4</sup> Տես *М. В. Касьян, Г. Б. Баргасарян, Г. А. Арутюнян. Методы планирования экспериментов в области создания металлов и математической обработки результатов. Е., 1976. с. 192.*

<sup>5</sup> (1) հավասարման լուծման մեթոդների մասին տես *М. В. Касьян, Г. Б. Баргасарян, Г. А. Арутюнян. Оптимизация технологических факторов при резании методом многофакторного планирования экспериментов. Е., 1990, с. 161.*

բավականին բարդ են և հոդվածի ծավալի սահմանափակության պատճառով այստեղ չեն բերվում, ստանում ենք ռեգրեսիայի հավասարումը հետևյալ տեսքով.

$$y = \ln t_{hi} = b_0 F_0 + \dots + b_5 F_5 + E_{U\mu}, \quad (2)$$

որտեղ  $b_k$ -ն ռեգրեսիայի գործակիցներն են,  $F_k$ -ն բավանդամներ են, իսկ  $E_{U\mu}$ -ն՝ գիտափորձի վիճակագրական սխալը: Ընդ որում հարկ է նշել, որ անհրաժեշտ գիտափորձերի թիվը էապես կրճատվում է՝ հասնելով 9-ի:

**2<sup>ն</sup> տիպի գործոնային գիտափորձը** մեր դեպքում բաղկացած է  $N=2^6=64$  փորձից, որոնց ընթացքում միաժամանակ փոփոխվում են 6 գործոններ՝  $S, \Omega, U\mu, U\mu, \zeta, \psi$ , երկու ֆիքսված մակարդակներում, այն է՝

- $S \Rightarrow \{18...25\}$  տարի,
- $\Omega \Rightarrow \{C, BC\}$ ,
- $U\mu \Rightarrow \{1...7\}$  տարի,
- $U\mu \Rightarrow \{0,01...0,99\}$ ,
- $\zeta \Rightarrow \{\text{միջին} + \text{բարձր} \cdot 4, \text{ցածր} \cdot 2\}$ ,
- $\psi \Rightarrow \{\text{բավարար} \cdot 3, \text{անբավարար} \cdot 2\}$ :

Ազդող գործոններից չի դիտարկվում ավտոմեքենայի  $V_r$  արագությունը, քանի որ այն տեխնիկական պարամետր է և չի մտնում մեր հետազոտությունների շրջանակի մեջ:

Կատարված հետազոտությունների բնութագրական առանձնահատկությունն այն է, որ կիրառվում է  $2^{6-3}$  տիպի կոտորակային գործոնային գիտափորձի պլանը, այսինքն՝ կիրառվում է  $2^6$  տիպի լրիվ գործոնային գիտափորձի ռեպլիկաների  $1/8$ -ը: Ուստի կատարվում է 64 փորձի փոխարեն ընդամենը 8 փորձ<sup>6</sup>:

Ռեգրեսիայի հավասարումը կարելի է ստանալ՝ ելնելով  $2^6$  պլանի մաթեմատիկական մոդելից՝

$$t_{hi} = C_z \cdot U\mu^{\alpha_1} \cdot \Omega^{\alpha_2} \cdot S^{\alpha_3} \cdot U\mu^{\alpha_4} \cdot \zeta^{\alpha_5} \cdot \psi^{\alpha_6}, \quad (3)$$

որտեղ  $U\mu, \Omega, S, U\mu, \zeta, \psi$ -ն հետազոտման փոփոխական պարամետրները կամ գործոններն են,  $z_k$ -ն այդ գործոն-

ների աստիճաններն են,  $C_z$ -ը՝ նշված գործոնների բնույթը հաշվի առնող գործակիցը: Ուստի ռեգրեսիայի հավասարման լուծումը ունի հետևյալ տեսքը.

$$y = \ln t_{hi} = b_0 + b_1 x_1 + \dots + b_6 x_6 + E_{U\mu}, \quad (4)$$

որտեղ  $b_k$ -ն ռեգրեսիայի գործակիցներն են,  $x_k$ -ն՝ բավանդամներ:

Հետազոտության հաջորդ քայլն է ռեգրեսիայի գործակիցների և բավանդամների որոշումը:

**Հետազոտության առաջին փուլում** դիտարկվում է 5 գործոնների ներգործությունը վարորդի հակադման ժամանակի վրա:  $t_{hi}$ -ի արժեքները արձանագրված են հետևյալ երեք դեպքերի համար.

1. երթևեկության ռեալ պայմաններում առանց ստրես-գործոնի ազդեցության՝  $t_{h1}$ ,

2. երթևեկության ռեալ պայմաններում ստրես-գործոնի ազդեցությամբ՝  $t_{h2}$ ,

3. ստացիոնար պայմաններում՝  $t_{h3}$ :

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ մոդելը ((1) հավասարումը) փնտրում ենք գծային տեսքով, կարելի է կապել  $3^{5-3}$  պլանավորման մատրիցը կոդային մասշտաբում<sup>7</sup>, ընդամենն այստեղ  $t_{hi}$ -ի արժեքները գրանցված կլինեն լրգարիթմական տեսքով՝ կատարելով  $F_k \rightarrow X_k$  փոխարինումը:

Ռեգրեսիայի գործակիցը կարելի է որոշել ըստ այդ այդուսակի տվյալների՝ հետևյալ հավասարման միջոցով.

$$B_j = \frac{1}{N} \sum_{i=1}^9 X_{ij} Y_i, \quad (5)$$

որտեղ  $j=1, 2, \dots, k, i=1 \dots N, N$ -ը փորձերի թիվն է:

Լրիվ մաթեմատիկական մոդելն ստանալու համար անհրաժեշտ է որոշել նաև  $X_k$  բավանդամները: Դրանք որոշվում են հետևյալ հավասարումից<sup>8</sup>.

<sup>7</sup> Шу Ф. С. Новик, Я. Б. Арсов. Оптимизация процессов технологии металлов методами планирования экспериментов. Москва—София, 1980, с. 304.

<sup>8</sup> Шу М. В. Касьян, Г. Б. Багдасарян, Г. А. Арутюнян. Оптимизация режимов резания при решении технологических задач. Е., 1981, с. 181.

<sup>6</sup> Шу Ю. П. Аглер, Е. В. Маркова, Ю. П. Грановский. Планирование эксперимента при поиске оптимальных условий. М., 1976, с. 279.

$$X_i = \frac{2(\ln T_i - \ln T_{max})}{\ln T_{max} - \ln T_{min}} + 1, \quad (6)$$

որտեղ  $T_i$ -ն որոնելի գործոնն է,  $T_{max}$ -ը՝ գործոնի առավելագույն արժեքը, իսկ  $T_{min}$ -ը՝ նրա նվազագույն արժեքը:

Մեր դեպքի 5 գործոնների նկատմամբ կիրառելով այս հավասարումը՝ կատանանք բազմանդամների հետևյալ արժեքները.

$$\begin{aligned} X_1 &= 5 \ln V_i - 16, \\ X_2 &= 1,66 \ln S - 5,8, \\ X_3 &= 0,58 \ln U\mu - 1, \\ X_4 &= 3,85 \ln \Omega - 5,2, \\ X_5 &= 2,38 \ln U\mu - 1,12: \end{aligned}$$

(1) հավասարման մեջ տեղադրելով ռեգրեսիայի գործակիցների և բազմանդամների ստացված արժեքները՝ ռեգրեսիայի հավասարումները երեք դեպքերի համար կարող ենք գրել հետևյալ վերջնական տեսքով.

$$y_1 = \ln t_{h1} = 1,69 - 0,7 \ln V_i + 0,28 \ln S + 0,079 \ln U\mu - 0,46 \ln \Omega + 0,11 \ln U\mu, \quad (7)$$

$$y_2 = \ln t_{h2} = 1,74 - 0,725 \ln V_i + 0,33 \ln S + 0,12 \ln U\mu - 0,42 \ln \Omega + 0,76 \ln U\mu, \quad (8)$$

$$y_3 = \ln t_{h3} = 0,9 - 0,215 \ln V_i + 0,136 \ln S + 0,047 \ln U\mu - 0,15 \ln \Omega + 0,33 \ln U\mu: \quad (9)$$

Ըստ այդ հավասարումների կարող ենք գրել հետապոստորդյան մաթեմատիկական մոդելները հետևյալ տեսքով.

$$t_{h1} = \frac{5,3 \cdot S^{0,28} \cdot U\mu^{0,079} \cdot U\mu^{0,11}}{V_i^{0,7} \cdot \Omega^{0,46}}, \quad (7a)$$

$$t_{h2} = \frac{5,7 \cdot S^{0,33} \cdot U\mu^{0,12} \cdot U\mu^{0,76}}{V_i^{0,725} \cdot \Omega^{0,42}}, \quad (8a)$$

$$t_{h3} = \frac{2,46 \cdot S^{0,136} \cdot U\mu^{0,047} \cdot U\mu^{0,33}}{V_i^{0,215} \cdot \Omega^{0,15}}: \quad (9a)$$

(7ա), (8ա), (9ա) հավասարումների հավաստիության մեջ համոզվելու համար կատարված է վարորդի հավաքման ժամանակի վրա այդ 5 գործոնների ներազդման վարկածի ստուգում դիսպերսիոն վերլուծության մեթոդների կիրառմամբ: Ընդ որում այն կատարված է միայն  $t_{h1}$  դեպքի համար, քանի որ մյուս

երկու դեպքերում վերլուծությունը կլինի նույնական: Գիսպերսիան որոշելու համար կազմվում է գիսափորձերի ցլրման աղյուսակ, այնուհետև դիսպերսիայի արժեքը ըստ Ստյուդենտի չափանիշի հաշվարկվում է

$$t \leq y_{max} - \frac{y}{S_i} = 2,46$$

բանաձևով: Ըստ գիտական գրականության մեջ եղած տվյալների դիսպերսիան կազմում է 5 տոկոս<sup>9</sup>: Մեր դեպքի համար կատարված դիսպերսիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ ստացված մաթեմատիկական մոդելը համապատասխանում է 5-տոկոսանոց վիճակագրության դեպքին, ինչը լիովին թույլատրելի է:

**Հետազոտության երկրորդ փուլում** դիտարկվում է վեց գործոնների ազդեցությունը վարորդի հավաքման ժամանակի վրա: Այստեղ արդեն, ի տարբերություն առաջին փուլից, վարորդի հավաքման ժամանակի նորմատիվ հավասարման դուրսբերման համար վերցնում ենք պարամետրների այն արժեքները, որոնք բնորոշ են ՀՀ ՋՈՒ-ի վարորդական կազմին և որոնք վերը նշել ենք:

Ռվապես 0,01-ի կամ 0,99-ի հավասար սխալի գործակիցը նշանակում է, որ ճիշտ գործողությունը առաջին դեպքում կազմում է 1 տոկոս, այսինքն՝ թույլ է տրված սխալ, իսկ երկրորդ դեպքում՝ 99 տոկոս, այսինքն՝ սխալ գործողություն չի եղել:

$t_{h1}$ -ի արժեքները գրանցվում են վերը նշված նույն երեք դեպքերի համար: Այստեղ նույնպես մենք կատարված գիտափորձերի հավաստիությունը գնահատելու համար վիճակագրական վերլուծության ենք ենթարկում միայն  $t_{h1}$  պայմանում ստացված արդյունքները: Ըստ Ստյուդենտի չափանիշի դիսպերսիան հավասար է՝  $t \leq (4,88 - 1,04)/S_i = 6,1146$ : Համաձայն գրականության մեջ եղած տվյալների թույլատրելի դիսպերսիան

<sup>9</sup> Տևս, օրինակ, В. А. Мастеров. Практика статистического планирования эксперимента в технологии биметаллов. М., 1974, с. 158.

կազմում է 25 տոկոս<sup>10</sup>: Վիճակագրության տեսակետից գիտափորձերի նման դիսպերսիան շատ մեծ է, բայց թույլատրելի: Դիսպերսիայի արժեքը նվազեցնելու նպատակով, մինևուշյն ժամանակ ստանալով 6 գործոնի համար գործոնային գիտափորձի մաթեմատիկական մոդելը, անհրաժեշտ է 80 գիտափորձերից ըստ 2<sup>5-3</sup> պլանի ընտրել 8 փորձ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս մոդելը (3) հավասարումը պետք է գծային լինի, կազմվում է կողային մասշտաբում 2<sup>6-3</sup> պլանավորման մատրիցը: Ըստ դրա, (5) և (6) հավասարումներից գտնում ենք ռեգրեսիայի և բազմանդամների գործակիցները, որոնց ստացված արժեքները տեղադրելով (4) հավասարման մեջ՝ ստանում ենք ռեգրեսիայի հավասարումները երեք դեպքերի համար հետևյալ վերջնական տեսքով.

$$y_1 = \ln t_{h1} = 2,154 + 0,03 \ln U\mu - 0,41 \ln \Omega - 0,42 \ln S - 0,002 \ln U\mu - 0,12 \ln \zeta - 0,7 \ln \varphi, \quad (10)$$

$$y_2 = \ln t_{h2} = 0,6722 + 0,02 \ln U\mu + 0,21 \ln \Omega - 0,24 \ln S - 0,0043 \ln U\mu - 0,09 \ln \zeta - 0,3 \ln \varphi, \quad (11)$$

$$y_3 = \ln t_{h3} = 0,61 - 0,006 \ln U\mu + 0,03 \ln \Omega - 0,008 \ln S - 0,018 \ln \zeta: \quad (12)$$

Հակադրգարիթմերով այս հավասարումները՝ ստանում ենք տվյալ հետազոտության մաթեմատիկական մոդելը հետևյալ տեսքով.

$$t_{h1} = \frac{8,619U\mu^{0,03}}{\Omega^{0,41} S^{0,42} U\mu^{0,002} \zeta^{0,12} \varphi^{0,7}}, \quad (10 \text{ ա})$$

$$t_{h2} = \frac{1,958U\mu^{0,02} \Omega^{0,21}}{S^{0,24} U\mu^{0,004} \zeta^{0,09} \varphi^{0,3}}, \quad (11 \text{ ա})$$

$$t_{h3} = \frac{1,84\Omega^{0,03} S^{0,008}}{U\mu^{0,006} \zeta^{0,18}}: \quad (12 \text{ ա})$$

Այս բանաձևերի հավաստիությունն ստուգելու համար կատարել ենք վերը նրկարագրվածին համանման դիսպերսիոն վերլուծություն: Դիսպերսիայի արժեքը ըստ Ստյուդենտի չափանիշի ստացվում է՝  $t \leq (0,85 - 0,71)/0,12 = 1,17$ : Ըստ վերլու-

ծույթյան արդյունքի՝ ստացված մաթեմատիկական մոդելները համապատասխանում են 5-տոկոսանոց վիճակագրության դեպքին, ինչը լիովին թույլատրելի է:

Հետադարձության երկրորդ փուլն ավարտելու համար անհրաժեշտ է կատարել պարամետրների լավարկում, որն իրականացվում է ըստ գծային ծրագրավորման<sup>11</sup>: Ընդամին ստացված մոդելը դիտվում է որպես նպատակային ֆունկցիա, իսկ պարամետրների փոփոխման սահմանները՝ որպես անհավասարությունների այդ համակարգերի վրա դրվող սահմանափակումներ: Լավարկումը կատարվում է երեք դեպքերի համար ( $y_1, y_2, y_3$ ) միաժամանակ՝ հաշվի առնելով հետևյալ սահմանափակումները.

$$\ln 1 \leq \ln U\mu \leq \ln 7, \ln 3 \leq \ln \Omega \leq \ln 4, \ln 18 \leq \ln S \leq \ln 25, \ln 0,01 \leq \ln U\mu \leq \ln 0,99, \ln 2 \leq \ln \zeta \leq \ln 4, \ln 2 \leq \ln \varphi \leq \ln 3: \quad (13)$$

Ընտրված են պարամետրների փոփոխման հետևյալ քայլերը.  $\Delta S=2, \Delta U\mu=3, \Delta \Omega=1, \Delta U\mu=0,98, \Delta \zeta=2, \Delta \varphi=1$ : Սահմանափակումներով անհավասարությունների համակարգի լուծումը է՝  $Z$ -ի միջոցով տալիս է հետևյալ արդյունքները.  $S = 20$  տարի,  $U\mu = 2$  տարի,  $\Omega = 4$ ,  $U\mu=0,99, \zeta=4, \varphi=3$ : Ունենալով պարամետրների այս լավագույն արժեքները՝ կարելի է կառուցել  $t_{h1}, t_{h2}, t_{h3}$  մեծությունների վրա  $S, U\mu, \Omega, U\mu, \zeta$  և  $\varphi$  պարամետրների ադեկուության գրաֆիկները:

Տվյալ ուսումնասիրության մեջ հույժ կարևոր է գտնել  $t_{h1}$ -ի և  $t_{h2}$ -ի կապը  $t_{h3}$ -ի հետ: Դրա համար անհրաժեշտ է (10 ա), (11 ա), (12 ա) հավասարումներից բացառել բոլոր գործոնները բացի մեկից, այնուհետև առադրել երեք անկախ մեծությունները: Օրինակ՝ եթե նշված հավասարումների մեջ տեղադրենք  $U\mu, \varphi, \Omega, U\mu, \zeta$  պարամետրների լավագույն արժեքները և  $t_{h1}, t_{h2}, t_{h3}$  մեծությունները դիտենք

<sup>11</sup> Տես *М. В. Касьян, Г. Б. Багдасарян, Г. А. Арутюнян. Оптимизация технологических факторов при резании методом многофакторного планирования экспериментов, с. 161; М. В. Касьян, Г. Б. Багдасарян, Г. А. Арутюнян. Оптимизация режимов резания при резании технологических задач, с. 181.*

<sup>10</sup> Տես նույն տեղում:

որպես ֆունկցիա  $S$  գործակցից, ապա կատանանք՝  $t_{h1}=0,2S^{0,34}$ ,  $t_{h2}=0,18S^{0,53}$ ,  $t_{h3}=0,02S^{0,81}$ : Այստեղից արդեն կարելի է ստանալ որոնելի առնչությունները.

$$t_{h1} = 0,42t_{h3}^{0,66} + 0,19, \quad (14)$$

$$t_{h2} = 0,67t_{h3}^{0,5} + 0,02: \quad (15)$$

Վերը նշված մեր հողվածներում մենք նշել ենք, որ գիտափորձերին մասնակցած վարորդները ենթարկվել են տեստավորման: Տեստն այնպես էր կազմված, որ հնարավորություն էր տալիս որոշելու ոչ միայն տվյալ անհատի հուշակալության մակարդակը, այլև ժողովրդագրական գործոնները, սոցիալական դրությունը, հուշակալության գործոնները, հուշակալության և ժողովրդագրության վրա ներապոդ գործոնները:

Մեր հետազոտությունում անհատի հուշակալության աստիճանի գնահատումը կատարվել է Հանս Այգենլի «Անհատի արտագյուղության-ներգյուղության և նյարդայնության վերաբերյալ» սենսության հիման վրա: Ելնելով հետապնդվող նպատակներից՝ մենք ընտրեցինք հուշակալության ֆոնի հետևյալ երեք մակարդակները՝ բարձր (++), միջին (+), ցածր (0): Որոշելով անհատի հուշակալության մակարդակը ըստ տեստի յուրաքանչյուր կետի՝ մենք գտանք նրա

ընդհանուր հուշակալության մակարդակը (կատարելով ըստ կետերի գումարում): Գիտափորձին մասնակցած բոլոր վարորդների գումարային գնահատականը բաժանելով նրանց թվի վրա՝ որոշեցինք հուշակալության ֆոնի մեկնարկային գործակիցը: Մեր գիտափորձերում այն ստացվեց հավասար 6-ի:

Հետազոտությունների ընթացքում պարզվեց, որ հուշակալության կայունության ցածր մակարդակ ունեցող վարորդների հակադրման ժամանակի թաքնված փուլի տևողության աճումը ստրես-գործոնի ազդեցությամբ հիմնականում գերազանցում է թույլատրելի սահմանները, դրան գումարած նաև այն հանգամանքը, որ արդև նույն վարորդները ծայրահեղ լարված իրավիճակներում ցուցաբերում էին անհավասարակշիռ վարք, ինչի հետևանքով նրանք թույլ են տալիս սխալներ:

Այսպիսով՝ մեր կարծիքով պինված ուժերի վարորդական կազմում պետք է ընդգրկել այն վարորդներին, որոնց՝

ա) հակապոման փաստացի ժամանակը համընկնում է նորմատիվ ժամանակի հետ, ընդ որում պետք է թույլատրելի համարել նորմատիվ ժամանակից +5 տոկոսը չգերազանցող շեղումները,

բ) հուշակալան կայունությունը համապատասխանում է միջին կամ բարձր մակարդակներին:

## ВОЕННО-ИНЖЕНЕРНАЯ ПСИХОЛОГИЯ

### ОПРЕДЕЛЕНИЕ НОРМАТИВНОГО ВРЕМЕНИ РЕАКЦИИ ВОДИТЕЛЕЙ НА ОСНОВЕ ЭКСПЕРИМЕНТОВ, ПРОВОДИМЫХ ПО МЕТОДУ МНОГОФАКТОРНОГО ПЛАНИРОВАНИЯ

В. Г. МАРГАРЯН, капитан

#### РЕЗЮМЕ

Безопасность дорожного движения во многом зависит от индивидуальных качеств водителя-участника движения, в частности, от времени его реакции. Существуют различные методы измерения времени реакции, из которых наибольшими преимуществами обладает имитационный метод. При этом задача существенно упростится, если будет получена корреляционная связь между временем реакции, измеренным в стационарных условиях, с его значениями в реальных условиях движения как без воздействия стресс-

фактора, так и при его наличии. Кроме того, в деле отбора водительского состава большую роль может сыграть вывод нормативного уравнения времени реакции с учетом таких основополагающих факторов, как возраст (В), квалификация (К), водительский стаж (Ст), уровень эмоционального фона (Э) и т. д.

Проведенные в воинских частях исследования с использованием методики многофакторного планирования эксперимента позволили вывести нормативное уравнение времени реакции водителя с учетом различных факторов, а также уравнения корреляции. Эксперименты проводились с использованием созданного нами прибора. Оценка эмоциональности индивида проводилась на основе теории Г. Айзенка об экстравертивности-интравертивности и нервозности личности.

## MILITARY-ENGINEERING PSYCHOLOGY

### DEFINITION OF NORMATIVE TIME OF REACTION OF THE DRIVERS OF MILITARY VEHICLE ENGINEERING ON MULTIPLE-FACTOR TO PLANNING OF EXPERIMENTS

*V. H. MARGARYAN, Captain*

#### SUMMARY

The safety of traffic in many aspects depends on individual qualities of the driver-participant of traffic, in particular, from time of his reaction. There are various methods of measurement of time of reaction, among which the imitating method has the greatest advantages. Thus the task will be essentially simplified, if the correlation of connection between time of reaction measured in stationary conditions, with its importance in real conditions of traffic both without influence of the stress-factor and with its presence are received. Besides for the purpose of drivers' staff a the conclusion of the normative equation of time of reaction can play great role in view of such basic factors, as age, qualification, driver's experience, level of an emotional background etc.

The researches, carried out in military units, with use of a multiple-factor method of experiment planning have allowed to deduce the normative equation of reaction time of the driver in view of the various factors, and also equation of correlation. The experiments were carried out with use of the device, created by us. The estimation of emotionality of the individual was carried out on the basis of H. Eisenk theory about extravertiveness-intravertiveness and nervousness of the person.

# ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

*Ռ. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, սեխնիկական գիտությունների  
թեկնածու, դոցենտ*

Պետականություն ունեցող բոլոր ազգերը սովորաբար աշխատում են պատերազմների միջև ընկած խաղաղության տարիներն առավել արդյունավետ օգտագործել իրենց զինված ուժերի սպառազինություն, անձնակազմի օպերատիվ, տակտիկական պատրաստության և բարոյահոգեբանական հատկությունների կատարելագործման համար:

Բարոյահոգեբանական հատկությունների դաստիարակության գործում էական նշանակություն ունի հայրենիքի պաշտպանի այն հավաքական կերպարը, որն ստեղծվում է զանգվածային լրատվության միջոցներով, արվեստի տարբեր ասպարեզներում (ներկայումս նաև այն ամենով, ինչը կոչվում է շոու-բիզնես): Այս կերպարը կերտվում է ազգի պատմության տարբեր փուլերում հանդես եկած հայրենասեր նվիրյալների կյանքի օրինակների վրա: Ամեն մի ազգի պատմության մեջ փոխհյուսվող կարմիր թելերի պես անցնում են հայրենիքի պաշտպանության ու նահատակության գաղափարները, մի հանգամանք, որն իր կրոնիքն է դնում նույնիսկ խաղաղ պայմաններում գորակոչված երիտասարդի հետագա ողջ բարոյահոգեբանական կերտվածքի վրա:

Այսօր, ինչպես երբեք, հրատապ հարց է դարձել հայրենիքի պաշտպանի կերպարի ավգային նոր ըմբռնման մշակումը, քանի որ ամեն օր, ամեն ժամ արևմտյան զանգվածային լրատվության ու պատերազմական թեմաներով նկա-

րահանված կինոնկարների միջոցով մեզ բարոյվում է օտար կտրծրատիպ:

Մեզ պետք է ֆիզիկապես լավ կոնվիված, իր զենքին գերազանց տիրապետող, ամեն տեսակի փորձություններ ու արհամիրքներ հաջողությամբ հաղթահարող հայ զինվոր: Այս խնդիրը լուծելի է, բայց մեր այսօրվա քննարկման նյութը չէ: Մեզ հետաքրքրում են հայրենիքի պաշտպանի հոգեկան վիճակը և այն ներքին գաղափարական լուսավոր հենքը, որի վրա 18-ամյա երիտասարդի մեջ պետք է դաստիարակվի իր հայրենիքի, իր ընտանիքի, հարապատենների ու ընկերների նկատմամբ հավասարական, միավորող, եռանդուն գործունեության կոչող սերը: Այդ սերն է, որ, համակելով երիտասարդի ողջ էությունը և վերածվելով հավատի, նրա մեջ կսերմանի և գերակայություն կհաղորդի մաքառելու և լուսավոր վաղվա մասին մշտապես մտածելու փրկարար գաղափար:

Բանակ գորակոչված երիտասարդի անմիջական պետք, թեև նրան դաստիարակում է ըստ բանակի ստանդարտներին բավարարող պահանջների, սակայն մեծ մասամբ հնարավորություն չի ունենում ծանոթացնելու հայ քրիստոնյային վայել մտայած բարեմասնություններին: Բանակում ծառայության համար նախատեսված երկու տարին լրիվ բավարար ժամկետ է, որ հայրենիքի պաշտպանների համապզգեստ կրող երիտասարդների հոգեբարոյական դաստիարակության այդ ստպարեզը աչքաթող չարվի:



Մեր երկրի բոլոր ազգային տոների օրերին միշտ էլ կարելի է մեր բանակի փառապանծ հրամանատարներին տեսնել մեր եկեղեցու սպասավորների հետ մեկտեղ: Սակայն, ինչպես հայտնի է, կյանքը միայն տոներից չի բաղկացած, այլ առավելագույնս պահանջում է ամենօրյա տրնաջան, իսկ երբեմն նույնիսկ շատ ծանր ու հոգեմաշ աշխատանք, որը հաճախ հանգեցնում է ներհոգեկան ճգնաժամների և հուսալքության: Ահա այսպիսի դեպքերից խոսափելու, դրանք հաղթահարելու համար էլ հասունացել է Հայաստանի Հանրապետության պինված ուժերում բանակային հոգևորական ծառայության հիմնադրման անհրաժեշտությունը:

Այս սուգարեկում նոր հայտնագործություններ անելու կարիք չկա, պարզապես պետք է օգտագործել ինչպես մեր սեփական պատմական, այնպես էլ ժամանակակից համաշխարհային փորձը:

Հայ ժողովրդի պատմությունից մեկ հայտնի են բազմաթիվ հոգևորականներ, որոնք խաչը մի ձեռքում, սուրը՝ մյուս, կռվել են հանուն իրենց հայրենիքի անկախության, հանուն իրենց ազգի գոյատևման: Ավարայրի հերոս Ղևոնդ երեցի անունը դարձել է ազգանվեր հոգևորականի խորհրդանիշ: Ոչ հեռու անցյալում ևս մեր հոգևորականները դրսևորել են հայրենիքին ամեն գնով ծառայելու ձրգտում: 1918 թ. հայ ազգի համար բախտորոշ մայիսյան ճակատամարտերում հանդես եկան նոր ղեկավարներ: Թվե՛նք դրանցից մի քանիսին՝ Գարեգին և Մեսրոպ եպիսկոպոսներ, Զավեն վարդապետ, որոնք ոչ միայն ժողովրդին կոչ էին անում ոտքի ելնելու ընդդեմ արյունառուշտ ոսոխի, այլև անմիջականորեն մասնակցում էին մարտավան գործողություններին՝ առաջին գծում ոգեշունչ խոսքերով մարտիկներին քաջալերելով կռվի, նրանց առաջնորդելով դեպի թըշնամու պիրքերը: Մի շարք հոգևորականներ, կազմելով կամավորական ջոկատներ, կռվում էին հանուն հայրենիքի. տեր Հովհաննեսը, տեր Զարարը, տեր Սահակը՝ Սարգարապատում, տեր Գրի-

գորը՝ Բաշ-Ազարանում, տեր Կոմիտասը՝ Ղարաբիխայում: Կան մարտական գործողություններին հայ հոգևորականների մասնակցության նաև ավելի թարմ օրինակներ: Այսպես՝ արցախյան պատագրական պայքարում հարապատ հողի պաշտպանների հաջողության մեջ փոքր չէր Արցախի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Պարզև սրբապանի ներդրումը:

Ինչ վերաբերում է համաշխարհային փորձին, ապա կարելի է ուսումնասիրել, օրինակ, Մեծ Բրիտանիայի պինված ուժերում այս ծառայության վերաբերյալ կուտակված փորձը:

Մեծ Բրիտանիայի պինված ուժերում բանակային հոգևորականների (կապելանների) ծառայությունը հիմնադրվել է 1796 թվականին: Սկզբնական շրջանում այդ ծառայությունն իրականացնում էին միայն անգլիկյան եկեղեցու ներկայացուցիչները, իսկ 1892 թվականից՝ նաև ռաբբիները: 1995 թվականից սկսած բանակի այդ ծառայությունը ղեկավարում է իռլանդական եկեղեցու հոգևոր հովիվ Դոբլին: Մեծ Բրիտանիայի պինված ուժերում ներկայումս ծառայում են 400 հոգևորականներ, ընդ որում՝ ցամաքային զորքերում՝ 147, տարածաշրջանային բանակում՝ 109 և կադետային համավարգում՝ 100 հոգևորականներ<sup>1</sup>:

Չինվորական հոգևորականների ուսուցումն իրականացվում է հատուկ կենտրոնում, որտեղ ընդունում են մինչև 30 տարեկան երիտասարդների: Թեկնածուն պետք է լինի աստվածաբանական ուսումնական հաստատության շրջանավարտ, ունենա աստվածաբանության բակալավրի աստիճան և իր եկեղեցու թույլտվությունը՝ ուղեգրի ձեվով: Ավարտելով ռազմական պատրաստության դասընթացները Սանդհերստի թագավորական ռազմական ակադեմիայում՝ ապագա բանակային հոգևորականները ծանոթանում են պինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում

<sup>1</sup> Տես A. Гарбуз. «Служба капелланов в армии Великобритании». «Зарубежное военное обозрение», 1998, № 6, с. 6.

ծառայության ատանձնահատկություններին: Բացի կենտրոնի դասատուներից նրանց դասավանդում են նաև համալսարանների և այլ ուսումնական հաստատությունների դասախոսներ ու պրոֆեսորներ:

Զինվորական հոգևորականության

լոր խոշոր պորամիավորումներում ու բանակատեղիներում: Դրանց գործունեությունը լուսաբանվում է վինվորական պանզավաժային լրատվամիջոցներում, ինչպես նաև հատուկ տեղեկատրվական բյուրոներում: Դաշտային պայմաններում ծառայությունն իրակա-



75-ամյա քահանա Տ. Գրիգոր Դարալազյացիին իր կամավորական ջոկատով մտնում է Վան. 1915 թ. (Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդերից)

հիմնական խնդիրներն են. վինվորականների հոգևոր հովանավորությունը և հոգեբանական նեցուկ լինելը, նրանց դուրսբերումը ստրեսային իրավիճակներից, որոնք հիմնականում բացատրվում են ծառայության ընթացքում հաճախ առաջացող բարդություններով: Բանակային քահանաները պարտավոր են կատարել կիրակնօրյա եկեղեցական ծեսերը, կապմակերպել անհատական ու խմբակային պրուցներ հավատքի թեմաներում, այցելել վինվորական հոսպիտալներում ապաքինվող վինվորականներին, կալանատներում (հաուպտվախտներում) ժամանակավորապես մեկուսացված վինծառայողներին, մշտական կապի մեջ լինել վինծառայողների ընտանիքների անդամների հետ:

Զինվորական եկեղեցիներ կան բո-

նացներու համար գոյություն ունեն երթային խորաններ:

Բրիտանական վինված ուժերի կանոններով կանոնակարգվում է բանակի ամեն տեսակի ծառայությունների ու հրամանատարների կողմից աջակցությունը վինվորական հոգևորականությանը: Ինչպես անգլիական բանակում, մեր վինված ուժերում ևս յուրաքանչյուր պորակոչիկ (ըստ իր ցանկության) պետք է ձրի ստանա ավետարան, որը պետք է դառնա նրա կյանքի ուղեկիցը նաև ծառայությունն ավարտելուց հետո: Ընդհանուր առմամբ, անգլիական բանակային կապելանների գործունեությունը նպաստում է այն բանին, որ պորակոչիկները առանց բարդությունների և սեղմ ժամկետներում հարմարվեն ծառայության դժվարին պայմաններին և ավելի

արդյունավետ կատարեն իրենց պարտականությունները:

Շաբաթը մեկ անցկացվում են պարամունքներ, որոնց միայն թվարկումը կարող է ընդհանուր պատկերացում տալ ընդգրկվող հարցերի մասին.

1. քրիստոնեության աղբյուրներն ու նրա էությունը,

2. ավետարանը, նրա հիմնական բաժիններն ու բովանդակությունը,

3. Բրիստոսի ուսմունքի կիրառումը ամենօրյա կյանքում,

4. փաստարկումներ հոգուտ Աստծու գոյության:

Կապելանների երաշխավորությամբ տարեկան շուրջ 10000 վինձառայողներ մասնակցում են քրիստոնեական դասընթացների, որոնց տևողությունը մեկ շաբաթից մինչև մեկ տարի է:

Ըստ գործող կանոնների պատերազմական գործողությունների ժամանակ վինվորական համապատասխան հոգեվորականների տեղը առաջավոր պորամասերում է: Առաջին աշխարհամարտի ընթացքում գոհվել են 172 քրիստոնեական կապելաններ, երկրորդ աշխարհամարտում՝ 1347<sup>2</sup>:

Նույնիսկ եթե հոգևորականը հնարավորություն ունի խուսափելու գերությունից, նա պարտավոր է մնալ վինվորների հետ և այս նոր դժվարին պայմաններում հնարավորության սահմաններում սատար լինել իր հոգևոր հոտին: Համաձայն Ռազմագերիների իրավունքների մասին Ժնևյան համաձայնագրի, հոգևոր կոչում ունեցող անձինք իրենց կարգավիճակը պահպանում են անգամ թշնամու կողմից գերվելուց հետո, ինչը նրանց հնարավորություն է տալիս իրենց գործունեությունը ծավալել նաև գերության մեջ գտնվելու ընթացքում:

Իհարկե, չի կարելի համոզված լինել, որ մեր առավել հնարավոր ախտյանները, պատերազմական գործողություններ ծավալելով մեր պետության դեմ, չեն ոտնահարի այս միջազգային նորմերը:

1991 թվականին Պարսից ծոցում՝ «Փոթորիկ անապատում» խորհրդանի-

շով ծավալված ռազմական գործողությունների ընթացքում 100 կապելաններ օժանդակում էին վինձառայողներին, որպեսզի վերջիններս դաշտային պայմաններում էլ կարողանան կատարել իրենց հավատի ծառայություններն ու ծեսերը:

Ջինձառայողի պարտականությունների և ավետարանային «մի՛ սպանիր» դրույթի միջև եղած հակասությունը բրիտանական բանակի վինձառայողի՝ «Դաշտային հոգևորականը քո բարեկամն է» հրահանգի «Պատերազմ» գրքի խում լուծվում է այսպես. «Եթե դու կրակում ես հրապանից, արկ ես արձակում հրանոթից կամ էլ գործարկում ես ուրբանետման սարքը, դու պատասխան չես տալիս պատճառած մահվան համար: Ժողովրդավարական երկրում դրա պատասխանատվությունը հավասարապես կիսում են բոլոր քաղաքացիները: Պետությունն է, այլ ոչ թե դու, կրում այդ ամենի պատասխանատվությունը»<sup>3</sup>:

Անգլիական բանակում մեծ է կապելանի դերը նաև վինձառայողների պորայրման ժամանակ: Այս դեպքում նա իր ուսերին է վերցնում բանակային սահմանափակումների և ընտելացած վինձառայողի՝ քաղաքացիական հասարակության սոցիալական բարդություններով լի կյանքին հնարավորին չափ արագ և դյուրին ձևով վերահարմարվելու բարդ գործը: Սա լուրջ պորբեմ է նաև մեզ համար և հետագայում կարող է ավելի լրջանալ, հատկապես եթե երկրի վինադադարի իրավիճակը երբևէ փոխարինվի մնալուն խաղաղության իրավիճակով ու որոշ չափով կրճատվի վինված ուժերի ներկայիս թվաքանակը: Ինչպես փաստում են տվյալները, ըստ քրեածին իրադրության վիճակագրության հատկապես ծանր հանցագործությունների մասնակիցների թվում քիչ չեն բանակից պորայրվածները:

Դեռևս խորհրդային շրջանում մեծ տագնապ էր ներշնչում աֆղանական պատերազմից վերադարձած վինվորների վարքը: Նույն պորբեմն է առաջացել

<sup>2</sup> Տես նույն տեղում, էջ 8.

<sup>3</sup> Նույն տեղում:

նան այսօր Ռուսաստանում՝ կապված Չեչնիայում կռված պինձառայողների պարայրումից հետո քաղաքայինական կյանքում նրանց վարքի հետ: Կարծում ենք, որ այս պրոբլեմը ամենալուրջ հետազոտության կարիք է պզում: Սակայն մեր խոր համոզմամբ հայկական պինված ու-

ժերից ավետարանը թևի տակ զորացրված երիտասարդ հայ քրիստոնյայի վարքագիծը էապես կսարքերվի մեր ժամանակակիցների որոշ մասին հատուկ՝ անկառավարելի բնավորներով թելադրվող ու ավելի նախամարդուն բնորոշ վարքագծից:

## ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

### ИНСТИТУТ ВОЕННЫХ СВЯЩЕННИКОВ КАК СРЕДСТВО ДУХОВНОГО ВОСПИТАНИЯ ВОЕННОСЛУЖАЩИХ

*Р. В. АРУТЮНЯН, кандидат технических наук, доцент*

#### РЕЗЮМЕ

В деле обеспечения высокой боеготовности войск немаловажную роль играют морально-психологическое состояние военнослужащих, степень осознания ими своего долга перед родиной, перед народом. Для воспитания у военнослужащих правильной ценностной ориентации существенную роль может и должен сыграть институт армейских (военных) священников, создание которого в ВС РА представляется насущной необходимостью.

При формировании этого института следует опираться как на исторический опыт армянского народа, так и на современный опыт деятельности армейских священников (капелланов) в вооруженных силах ведущих стран мирового сообщества.

Историческим примером для организации службы военного духовенства могут стать деятельность героя Аварайрского сражения в 451 г. диакона Гевонда, деятельность епископов Гарегина Овсепяна и Месропа, архимандрита Завена, священников Ованеса, Закара, Саака, Григора, Комитаса и других в судьбоносных для армянского народа майских сражениях 1918 г. Они не только вдохновляли бойцов на подвиги, но и сами принимали участие в боях. Немалый вклад в успешный исход борьбы защитников Арцаха против агрессии Азербайджана в начале 90-х годов нашего столетия внес духовный предводитель Арцаха архиепископ Паргев.

В качестве примера для изучения современного опыта организации службы военного духовенства можно взять армию Великобритании. Эта служба, организованная еще в 1796 г., в настоящее время состоит из 400 капелланов. В их обязанности входит оказание помощи военнослужащим в отправлении религиозных обрядов, духовное покровительство, помощь в преодолении духовных кризисов, связанных не только с адаптацией к условиям военной жизни, но и при демобилизации военнослужащих, особенно тех, которые принимали участие в боевых действиях.

## MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

### INSTITUTE OF MILITARY PRIESTS AS THE MEANS OF SPIRITUAL EDUCATION OF MILITARY MEN

*R. V. HARUTIUNYAN, Candidate of Technical Sciences, Docent*

#### SUMMARY

Moral-psychological condition of military men, degree of comprehension of the debt before the native land and the people plays an important role for maintenance of high battle readiness of troops. For education at military men to correctly value orientation the institute of the army priests should and can play an essential role, the creation of which in Armed Forces of RA is an absolute must.

With formation of this institute it is necessary to lean both on historical experience of the Armenian people, and on modern experience of activity of the army priests (chaplains) in the armed forces of the leading countries of world community.

Historical example for organization of a service of military clergy can become activity of a hero of Avarayr battle in 451 deacon Ghevond, activity of bishops Garegin Hovsepyan and Mesrop, archimandrite Zaven, priests Hovhannes, Zachar, Saak, Grigor, Komitas and others in fateful battles for the Armenian people in May 1918. They not only inspired fighters on feats, but also took part in combats themselves. The considerable contribution to successful outcome of struggle of the defense counsels of Artsakh against aggression by Azerbaijan in the beginning of 90-s of our century was brought by a spiritual leader of Artsakh archbishop Pargev.

As an example for study of modern experience of organization of a service of military clergy can be army of Great Britain. This service organized still in 1796, nowadays consists of 400 chaplains. Their duty involves assistance to servicemen leaving for religious ceremonies, spiritual protection, helping to overcome spiritual crises connected not only with adaptation to military conditions, but also with demobilization of military men, especially those, who have taken part in battle actions.

# ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ՀԵՐԱԼԴԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՔԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ա. Ա. ԴԱԲԱՂՅԱՆ

Հայկական հերալդիկան, որպես օժանդակ պատմական գիտություն, գոյություն ունի ավելի քան մեկուկես դար: Այս ժամանակահատվածում տասնյակից ավելի հայագետներ վերականգնել են հայոց արքայական և նախարարական տոհմերի վինանշանները: Վերականգնումները հիմնված են երկու կարգի աղբյուրների վրա՝ մատենագրական և պատկերագրական: Վերջինս խիստ բազմաբնույթ է: Արտաշեսյան և Ռուբինյան արքայատոհմերի վինանշանների վերականգնումների գլխավոր նախօրինակներն այդ տոհմերի ներկայացուցիչների հատած դրամների պատկերներն են, որոնց հերալդիկական նշանակությունը հաստատվում է նաև պատմիչների հարդումներով<sup>1</sup>:

Մեծ դժվարություններ է հարուցում պատկերագրական մյուս աղբյուրը, որը կազմում են հիմնականում Արևելյան Հայաստանի եկեղեցիների, ամրոցների, կամուրջների վրա պահպանված կենդանապատկեր որմնաքանդակները: Այդ կառույցների շինարարական արձանագրությունները թույլ են տալիս ճշգրիտ որոշել թե ով և երբ է կառուցել տվյալ պատկերը կրող շինությունը: Այս տվյալների հիման վրա մի շարք հետազոտողներ որոշել են առանձին վինանշանների բովանդակությունը: Բայց այդպիսի հասցեագրումները միշտ չէ, որ համընկնում են մատենագրական տվյալների հետ, որոշ

կենդանապատկերներ բնորոշվել են որպես վինանշան էլ առանց որևէ մատենագրական հիմնավորման: Այդպիսին է Բագրատունյաց արքայատոհմի առյուծը, որն այժմ պատկերված է Հայաստանի Հանրապետության վինանշանի կենտրոնական վահանակի վերին աջ անկյունում<sup>2</sup>: Դեռևս դարասկզբին Գ. Հովսեփյանը որպես Պոռոչյան, կամ Խաղբակյան, տոհմի վինանշան է դիտել Գեղարդի ժայռափոր եկեղեցու բարդ քանդակը, իսկ Մաթևոսյանն այն կապում է նաև Մամիկոնյանների հետ, որոնց համարում է Պոռոչյաններին ազգակից: 1948 թ. Ղաֆաղարյանը Հովհաննավանքի եկեղեցիներից մեկի վրա քանդակված կաթավ հոշոտող արծվի պատկերը բնորոշել է որպես Վաչուտյան տոհմի վինանշան<sup>3</sup>:

Այս կամ այն տոհմի կամ անձի վինանշանին վերաբերող մատենագրական հարորդումները նույնպես միանըջանակ չեն և, բացի դրանից, սակավաթիվ են: Դրանցից միայն երկուսի դեպքում մասնագետները տարակարծիք չեն՝ Բուպանդի երկու հարորդումները Մամիկոնյանների «... արծու է նշանք» լինելու և Մանվել Մամիկոնյանին նվիրված պատվի (գլխանուցի) գագաթին և շիկակարմիր խորանի (վրանի) վրա արծվի նշանի գոյության մասին<sup>4</sup>: Թե՛ Հացու-

<sup>1</sup> Տես Վ. Հացունի, Հայ դրոշները պատմության մեջ: Վենետիկ, 1919, էջ 7-9, 30-34, Մինաս Համթեյի, Ազգաբանություն Հայոց: Վաղարշապատ, 1870, էջ 42, Մովսեսի Խորենացուց Պատմություն Հայոց», աշխատություններ Մ. Աբեղյան և Ա. Յարությունյան (այսուհետև՝ *Խորենացի*): Տիֆլիս, 1913, II, Ը:

<sup>2</sup> Տես Ռ. Մաթևոսյան, Հայկական վինանշաններ, գիրք Ա. Բագրատունիներ, Չարսյաններ, Մամիկոնյաններ: Ե., 1994, էջ 10-37:

<sup>3</sup> Տես Կ. Ղաֆաղարյան, Հովհաննավանք և նրա արձանագրությունները: Ե., 1948, էջ 19-21:


<sup>4</sup> Տես Փավստոս Բուպանդ, Հայոց Պատմություն, բնագիրը՝ Բ. Պատկանյանի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Սո. Մաղխասյանի (այսուհետև՝ *Բուպանդ*): Ե., 1987, IV, Բ, V, ԼԸ, ծանոթագրություն 211:

նին, թե՛ Մաթևոսյանը այս հաղորդումները միանշանակ ընդունում են որպես IV դարի կեսերին Մամիկոնյանների տոհմի հերալդիկական նշանի նկարագիր<sup>5</sup>: Մյուս հաղորդումների վերաբերյալ կան որոշ տարբերություններ: Խորենացու «Եւ վԱրծրունիսդ գիտեմ՝ ոչ Արծրունիս, այլ արծուի ունիս, որք առաջի նորա (Վաղարշակ Արշակունու:—Ս. Դ.) կրէին»<sup>6</sup> հատվածը Հացունին դիտում է որպես Արշակունիների հերալդիկական նշանի նկարագրություն, իսկ Հ. Օրբելին (նրա հետ համաձայնում է նաև Մաթևոսյանը)՝ Արծրունիների տոհմական նշանում արծվապատկերի առկայությունը հավաստող հաղորդում<sup>7</sup>: Մեր կարծիքով, ընդունելի է Հացունու վերականգնումը, և նկատելի է այս հաղորդման մեջ նկարագրված նշանի կառուցվածքային ընդհանրությունը Արտաշեսյանների դրամներին փորագրված արծիվ—արև—արծիվ պատկերի հետ<sup>8</sup>:

Հացունին և Մաթևոսյանը տարբեր կերպ են հասկանում Մինաս Համթեցու երկու կարևոր հաղորդումները: Գրանցիկ առաջինը՝ «Իսկ առաջին թագաւորքն Հայոց, որ ի հիւսիս՝ վԱրծիվ նշան կրէին»<sup>9</sup>, Հացունին վերագրում է Բագրատունիներին, իսկ Մաթևոսյանը՝ Արշակունիներին<sup>10</sup>: Նույն հաղորդման առաջին մասը՝ «Կայսերքն (Բյուզանդիայի և Հռոմեական Սրբազան Կայսրության:—Ս. Դ.) ըստ անուանն (Լևոն Բ Ռուբինյանի:—Ս. Դ.) առմա առաքելիս ամա, Կոր բարձեալ ի վերայ դրօշի իւրոյ, առաջի իւր ընթանայր...», Հացունին դիտում է որպես Կիլիկիայի հայկական թագավո-

րության հերալդիկական նշանի ծագման պատմություն, իսկ Մաթևոսյանը բացատրում է որպես Բագրատունիների Ռուբինյաններին առյուծի հերալդիկական պատկերի անցման ուշացած իմաստավորում<sup>11</sup>:

Անկախ այս հաղորդումների հիման վրա կատարված հերալդիկական վերա-



Արտաշեսյան Հայաստանի դրոշք  
(180 մ. թ. ա.—1 թթ.)  
(վերականգնությամբ Վ. Հացունու)

կանգնումների միջև նկատելի հակասություններից դրանք հիմք են տալիս կասկածի վեր համարելու նախարարական դարաշրջանի Հայաստանում փնանշանների կամ հերալդիկական համակարգի գոյության փաստը: Այլ բան է, որ նման հաղորդումները քիչ են, վերաբերում են իրարից հեռու ժամանակների, և միայն դրանց միջոցով անհնար է պատկերացում կապել ամբողջ նախարարական հերալդիկայի մասին: Այդ նկատառումով մենք, պատկերանշան—տոհմ կապ նշող սահմանափակ թվով հաղորդումներին պուգահեռ, անհրաժեշտ ենք համարել դիտարկել նաև շատ ավելի մեծ թիվ կապմող այլ մատենագրական հաղորդումներ, որոնցում նշվում է «դրոշ», «նշան», «վար»—հասարակական միավոր կապը՝ առանց պատկերանշանի: Այս մտտեցումը մեզ թույլ է տալիս որոշակի չափով փոխհատուցել պատկերանշանով արտահայտված հերալդիկական նշանների և դրանց համապատասխան հասարակական նշանակի միավորների մասին մատենագրական հաղորդումների սակավությունը և եղածների անորոշությունը:

<sup>11</sup> Տես Վ. Հացունի, նշ. աշխ., էջ 36—39, Ռ. Մաթևոսյան, նշ. աշխ., էջ 25:

<sup>5</sup> Տես Վ. Հացունի, նշ. աշխ., էջ 19—28, Ռ. Մաթևոսյան, նշ. աշխ., էջ 53—62:

<sup>6</sup> Խորենացի, II, Ը:


<sup>7</sup> Տես Վ. Հացունի, նշ. աշխ., էջ 19—28, Ռ. Մաթևոսյան, նշ. աշխ., էջ 37:

<sup>8</sup> Տես Ս. Դաբաղյան, Ձիւնանշանի արծիվի մաստաբանության շուրջ. գեկուցման հիմնադրույթներ: «Ազգագրական և բանասիրական հետազոտությունների արդյունքների նվիրված գիտական նստաշրջան», ՀՀ ԳԱՀ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ: Ե., 1995, էջ 11:

<sup>9</sup> Մինաս Համթեցի, նշ. աշխ., էջ 72:

<sup>10</sup> Տես Վ. Հացունի, նշ. աշխ., էջ 30—31, Ռ. Մաթևոսյան, նշ. աշխ., էջ 10—11:

Կարծում ենք՝ այս մտտեցումը ներդաշնակում է նախարարական դարաշրջանում գոյություն ունեցած հայոց հասարակական կազմակերպվածքին: 1902 թ. Հ. Մանանդյանը նկատել է, որ ներքին կյանքի, մասնավորապես՝ հասարակական հարաբերությունների ուսումնա-



Արշակունյաց Հայաստանի դրոշմ (64-428 թթ.)  
(վերականգնությամբ Վ. Հաչունու)

սիրությունը մեկանում պատկերներն հետ է մնում արտաքին քաղաքական պատմագիտությունից<sup>12</sup>: Անցած տասնամյակների ընթացքում այս բացը էապես լրացվել է շատ պատմաբանների աշխատանքով, սակայն բավաթիվ խնդիրներ շարունակում են մնալ չլուծված: Մասնավորապես շատ քիչ են տարբեր դարաշրջաններում անխուսափելիորեն փոփոխված ներհասարակական (ոչ թե միայն քաղաքական-հասարակական) կառույցների համեմատական վերլուծությունները, հասարակական փոխհարաբերություններին, ասենք՝ անհատ—տոհմ, ազատ (կամ «բնիկ հեծյալ»՝ ստորին ավատատեր)—նախարար, ազատ—ռամիկ, ազատ—սեպուհ (նախարարական տոհմի) կապերին վերաբերող հետազոտությունները: Եվ այս բացերը իստկապես նկատելի են հերալդիկական նշանային համակարգի հետազոտման այն հատվածում, որը կապված է միայն պայմանականորեն «նախարարական» կոչված դարաշրջանի հայոց հասարակական և ռազմական կառույցի մանրամասների հետ:

Հիշյալ դարաշրջանի «ներքին պատմագիտության» խնդիրներից հերալդիկայի հետ կապված են հատկապես «սեպ-

հական», կամ «սեպուհական», իրավունքի, հայոց ռազմական կազմակերպվածքի, «ոստանիկներին» դասի ծագման և ներքին կազմակերպվածքի, տարբեր դարաշրջաններում դասակարգային կառուցվածքի խնդիրները: Դրանցից շատերը երկար ժամանակ աշխույժ բննարկման առարկա են եղել հայ պատմագիտության մեջ<sup>13</sup>:

«Դրոշ», «նշան» (տարբերակ՝ «նշանակ») և «վառ» բառերն ամենից հաճախ օգտագործվող գրաբարյան անվանումներն են այն առարկաների տեսակի համար, որոնց հերալդիկական նշանակությունը կասկած չի հարուցում: Հայոց միջնադարյան աղբյուրներում դրանք շատ ավելի հաճախակի են ի հայտ գալիս, քան այնպիսի հաղորդումները, որոնք թույլ են տալիս վերականգնել «պատկեր»—«տոհմ» շրթան: Նույնիսկ հնարավորություն են նաև ունեցել դրանցից որոշ ընտրություն կատարելու և հատուկ ուշադրություն դարձնելու միայն այն հաղորդումներին, որոնցում մյուսների համեմատ ավելի հատակ են արտահայտված դիտարկվող առարկայի հերալդիկական բնույթը և համապատասխան հասարակական միավորը: Նախ համառոտ շարադրենք այդ հաղորդումները, որոնք խըմբավորել ենք ըստ ներկայացված հասարակական միավորների:

Դիտարկումն սկսենք զորամիավոր—դրոշ հարաբերության մասին գրավոր աղբյուրների հաղորդումներից: Հ. Աճառյանը նշել է, որ առանձին պատմիչներ «դրոշ» բառն օգտագործում են «գունդ», «վաշտ» իմաստներով<sup>14</sup>: Նրա

<sup>13</sup> Տես Ն. Աղոնյ, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. քաղաքական կազմությունն ըստ նախարարական կարգերի: Ե. 1987, էջ 267—302, 525—533, **Խույնի**՝ Հայ հին շինականությունը, «Պատմական ուսումնասիրություններ» գրքում: Փարիզ, 1948, էջ 157—205, Հ. Մանանդյան, նշ. աշխ., էջ 7—62, 187—436, К. Юзбашян. Армянские государства эпохи Багратидов и Византия. М., 1988, стр. 43—77.

<sup>14</sup> Տես Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, «Դրոշ»: Ե., 1971, **Եղիշէ**, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ե. Տեր-Մինասյանի (պատկետն) **Եղիշէ**: Ե., 1989, ծանոթագրություն 116:

<sup>12</sup> Տես Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ: Ե., 1981, էջ 7—10:



այս կարծիքը, ըստ երևույթին, հիմնված է Բուլգանդի հետևյալ վերալուծության վրա. «Բայց ուր լինէր հարնդէս ի նշանաւոր տեղիս, գնդի գնդի, դրօշու դրօշու, վաշտուց վաշտուց...»<sup>15</sup>: Սակայն նույն կարգի այլ հաղորդումների հետ առադրման դեպքում, մեր կարծիքով, ճիշտ է փորքինչ այլ մի բացատրություն. իսկապես «դրոշը» պորամասի նշանակն է, սակայն «նշանակ» բառի հենց այն ժամանակվա՝ գրաբարյան, այլ ոչ ժամանակակից իմաստով:

Սեբեոսն ունի համանման մի հատված՝ «Եւ անցեալք ի հանդիսի իբրև հագարք հնգետասանք (15000—*Ս. Գ.*), իւրաբանչիւր գունդք նախարարաց ըստ հարիւրաւորաց, ըստ հազարաւորաց, ըստ գնդից, ըստ դրաշաց իւրեանց», որը նույնպես պորահանդեսի մասին է<sup>16</sup>: Այս հաղորդումներում կարևորն այն չէ, թե պատմիչներն ինչ են նկատի ունեցել «դրոշ» բառի տակ՝ պորամիավորքը, թե՛ այդ պորամիավորի խորհրդանշանը: Հայտնի է, որ «դրոշ» բառի համարժեքները մի շարք լեզուներում վերածվել են որոշ քանակությունների պինվորների ներառող պորամիավորի անվանման: Օրինակ՝ արաբական «ալամը» կարող էր ունենալ 500 հեծյալ, անորոշ թվակալով ունեին վրացական «սադրոշն» կոչվող միավորումները, լեհական «խորուզվը» և այլն<sup>17</sup>: Եթե Հայաստանում նույնպես «դրոշը» վերջնականապես ձեռք բերած լինէր պորամիավորի անվանման իմաստ, ապա այդ դեպքում անորոշ կմնար այդ պորամիավորի քանակական կազմը: Միայն մեկ հայ պատմիչ՝ Ստեփանոս Օրբելյանը, նշում է, որ վրաց Օրբելի իշխաններն ունեին սեփական 12 դրոշ, իսկ յուրա-

բանչուր դրոշի տակ՝ 1000 պինվոր<sup>18</sup>: Այս փաստերի հիման վրա առայժմ դժվար է վերջնականապես լուծել ինչպես «դրոշ» անունով պորամասերի գոյության, այնպես էլ դրանց քանակական կազմի հարցը:

Մատենագրական հաղորդումների ամենամեծ խումբը վերաբերում է նախարար (իշխան) — դրոշ հարաբերությանը: Հաղորդումների այս խմբում նկատելի են որոշ ներքին տարբերություններ: «Պատմիչները հաճախ գրում են «նախարարներ — դրոշներ»՝ հոգնակիով: Այսպես՝ Բուլգանդը հաղորդում է. «Այսպիսի մի ժողով արեալ առ արքայն Արշակ մեծամեծք նախապետք ազգաց ազգաց, տոհմաց տոհմաց, գնդից և դրօշուց տեարք»<sup>19</sup>: Մովսես Կաղանկատվացին, ներկայացնելով Աղվանքի նոր տիրակալի ընտրությունը, նշում է. «Եւ անցեն ամենայն մեծամեծք առհասարակ ցնշան կենդանատեսակ դրօշուց վառելոց»<sup>20</sup>: Որոշ դեպքերում նույնիսկ ներկայացված են այն նախարարների տոհմանունները և անձնանունները, որոնք չնկարագրված դրոշների տերեր էին: Օրինակ՝ Եղիշեն հիշում է, որ Միհրներսեհը մարզպան Վասակից, «այլև դրօշից անգամ իւրաբանչիւրոց (ապստամբ նախարարների: — *Ս. Գ.*) տեղեկանայք», իսկ մեկ այլ տեղում ներկայացնում է արդեն Ավարայրի ճակատամարտի մասնակից նախարարներին՝ քանչևոր տոհմերի ներկայացուցիչներին<sup>21</sup>: Հատկապես ուշագրավ են Սեբեոսի հետևյալ երկու հաղորդումները՝ «Եւ աջտրիկ էին նախարարք և վաւրք, որ գնացին միաբանութեամբ հանդերձ իւրաբանչիւր գնդովք և դրաշուք ի դռնն թագաւորին Պարսից Խոսրովու, յամի վեցերորդի թագաւորութեան նորա: Առաջին՝ Գագիկ Մամիկոնեան՝ որդի Մա-

<sup>15</sup> Բուլգանդ, III, է:

<sup>16</sup> «Պատմութիւն Սեբեոսի», աշխատասիրությամբ Գ. Վ. Արզարյանի (այսուհետև՝ *Սեբեոս*): Ե., 1971, ՇԱ: Հմտո՝ ԽԼ, ԽԸ:

<sup>17</sup> «Թոմվայի վարդապետի Արծրունու ոչ Պատմութիւն Տանն Արծրու նեայ» (այսուհետև՝ *Թ. Արծրունի*): Ս.Պր., 1887, III, ԺԳ, *И. Джорджадзе. История военного искусства Грузии. Тб., 1989, сс. 66, 159; П. К. Корнаков. Вексиллологическая терминология. В кн. «Геральдика. Материалы и исследование».* Л., 1983, сс. 120 — 124.

<sup>18</sup> Տես *Ստեփանոս Օրբելյան*, Պատմութիւն նահանգին Սյաավան (այսուհետև՝ *Ս. Օրբելյան*): Թիֆլիս, 1910, 49:

<sup>19</sup> Բուլգանդ, IV, Գ:


<sup>20</sup> *Մովսես Կաղանկատվացի*, Պատմութիւն Արլուսնից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի (այսուհետև՝ *Կաղանկատվացի*): Ե., 1983, II, 19:

<sup>21</sup> Տես *Եղիշեն*, էջ 194, 200 — 203:

նուէլի, երկրորդն՝ Պապ Բագրատունի, որդի Աշոտայ Ասպետի, երրորդն՝ Խոսրով՝ Վահուկայ տէր, չորրորդն՝ Վարդան Արծրունի, հինգերորդն՝ Մամակ Մամիկոնեան, վեցերորդն՝ Ստեփանոս Միւնի, եոթներորդն՝ Կոտիտ Ամատունեայ տէր, և այլք ընդ նոսա ի նախարարայ» և «Եւ այս են իշխանք նախարարայն Հայոց որ ընդ նմա (մարզպան Սմբատ Բագրատունու հետ:—Ա. Դ.) իւրաքանչիւր գնդաւ և դրաշտու. Վարազշապուհ Արծրունի, Սարգիս Տայեցի, Արտավազ և Վստամ և Հմայեակ Ապահունի, Մանուէլ Ամատունեայ տէր, Վոամ Գողթնեայ տէր, Սարգիս Գիմաքսեան, Սարգիս Տրպատունի, և այլք ի նախարարայն»<sup>22</sup>:

Նույնպիսի հաղորդում ունի Թովմա Արծրունին. «Եւ դրօշք փողփողեալ ըստ միոյ-միոյ գնդի», իսկ քիչ հետո նշում է թե՛ այդ զորագնդերի ընդհանուր քանակությունը՝ 900 այր, և թե՛ Սմբատաբերդի ճակատամարտին մասնակցած նախարարների՝ տոհմաունենեքով և անձնանուններով<sup>23</sup>: Հիշատակվում են 10 տոհմերի 32 նախարար՝ Արծրունի՝ 6 անձ, Գնուկի՝ 6, Գարիկյան՝ 3, Ամատունի՝ 3, Վարաժնունի՝ 3, Ընտրունի՝ 3, Ալեացի՝ 1, Վահուկի՝ 2, Անձնացի՝ 4 և Գավիթ զորապետը: Մեկ այլ ճակատամարտի առիթով կրկին հայտնի են տասնյակ նախարարներ (այդ թվում՝ 16 անձինք Արծրունայ տոհմից), որոնք ունեին դրոշներ<sup>24</sup>: Ցավոք, պատմիչները, մանրամասն ներկայացնելով նախարարներին, որևէ դիտավորություն չեն ունեցել դրոշները նրկարագրելու: Հայտնի չէ անգամ դրոշների քանակությունն այս դրվագներում: Եթե նույնիսկ տեսականորեն ընդունենք, որ նշված հաղորդումների դեպքում նրանք նկատի են ունեցել մեկ նախարար—մեկ դրոշ կամ մեկ տոհմ—մեկ դրոշ սկզբունքը, կրկին դժվար կլինի պարզել հիշյալ ճակատամարտերում հայկական կողմի բարձրացրած դրոշների քանակությունը կամ «Ձորանամակի»

օգնությամբ՝ այդ դրոշների տակ կռվող վինվորների քանակը: Մասնավորապես՝ Եղիշեն Ավարայրի մասնակից նախարարների ցանկի վերջում ավելացնում է. «և ամենայն գործակալքն արքունի իւրաքանչիւր փորքն հանդերձ»: Մի քանի տոհմեր կիսված էին «վասակյանների» և «վարդանանց» միջև: Թվարկված տոհմե-



Բագրատունիների տոհմական դրոշը (վերականգնությամբ Ռ. Մաթևոսյանի)

րի «Ձորանամակում» նշված զորաբաժինների ընդհանուր քանակությունը կազմում է մոտ 20000 հեծյալ, այնինչ ճակատամարտին մասնակցել են 66000 հայ վինվորներ, և պատմիչը չի նշում հեծելազորի և հետևակի քանակությունները<sup>25</sup>:

Այս կարգի հաշվարկումները գուցե և իմաստ ունենային, եթե հավաստի լինեք մեկ տոհմ—մեկ դրոշ սկզբունքը, սակայն դա այդպես չէ: Ստորև կփորձենք ցույց տալ նախարարական տոհմի ոչ «միանշանակ» լինելու և դրա հետ կապված որոշ այլ հանգամանքներ:

«Ձորանամակին» ժամանակագրորեն հարող դարաշրջանը՝ IV—VI դդ., Ն. Ադոնյի կարծիքով հայոց նախարարական համակարգի ներքին վերակառուցման փուլերից մեկն էր՝ կապված միաժառանգության սկզբունքին հակադրվող «սեպհակալության» երևույթի սկզբունավորման հետ: Այդ պատմականորեն անհրաժեշտ գործընթացի առաջին արդյունքները նկատելի էին նաև «Գահնա-

<sup>22</sup> Սեբեոս, ԻԱ, ԻԸ:

<sup>23</sup> Թ. Արծրունի, II, Գ, Ե:

<sup>24</sup> Նույնի՝ III, Զ:

<sup>25</sup> Տես Ն. Ադոնյ, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 267—302, 525—533 (հատկապես՝ «Գահնամակի» և «Ձորանամակի» համեմատական վերականգնումը, էջ 294—295-ում), Եղիշէ, էջ 200—204:

մակում»՝ «այդ Աբեղյանն, այդ Գիմարսեանն» և մոտ մեկ տասնյակ նման տոհմերի ի հայտ գալով: Ադոնցի ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս մեզ շրջանցել այս երևույթի պատճառներն ու առանձնահատկությունները: Հարկ է նաև նշել պատմաբան Վարդանյանի դիտողությունը, որը բացատրում է Թովմա Արծրունու վերոհիշյալ հաղորդումները և նախարարներ—դրոշներ կարգի հաղորդումները. «Եթե վաղ ֆեոդալիզմի շրջանում Արծրունյաց տունն ուներ ընդամենը երկու ճյուղ, ապա արդեն IX դարի կեսերին այդ տոհմը բաժանվում էր ամենաքիչը 16 ճյուղերի»<sup>26</sup>: Նախարարական տոհմը միաժառանգության սկզբունքի թուլացման հետևանքով այլևս չէր կարող լինել միասնական հասարակական (այդ թվում՝ նշանակիր) միավոր: Առանց ուղղակի տվյալների մենք չենք կարող որոշել, թե Թովմա Արծրունու նշած 6 (Ամբատաբերդում) կամ 17 (արաբների դեմ ճակատամարտում, որոնց հրամանատարն էր Մուսա իբն Ջորահան) Արծրունիներից հատկապես որոնք ունեին դրոշներ. հայր, որդի, եղբայրներ միասին էին, թե «յուրաքանչյուրն իր պորթով», ուստի և ճակատագրի «ըստ ազգատոհմերի» մարտական դասավորությունը պետք է դիտել որպես նշված նախարարների լիարժեք ինքնուրույնության հավաստում, իսկ նախարարներին՝ որպես նշանակիր միավորներ: Այս հարցերին հնարավոր կլինի պատասխանել միայն այն ժամանակ, երբ հավաստի դատնա, որ «յուրաքանչյուրն իր պորթով» արտահայտությունը վերաբերում է բոլոր նշված նախարարներին (ըստ անձնանունների): Այլապես հնարավոր է «սեպհականությամբ» պայմանավորված հետևյալ հանգամանքի միջամտությունը. նույն տոհմին պատկանող նախարարների մի մասը (սեպուհները) սեփական տիրույթ, պորթ և, համապատասխանաբար, դրոշ ուներ, իսկ մյուս մասը պարզապես տոհմի կրտսեր ներկայացուցիչներ էին՝ ինքնուրույնու-

թյան ավելի փոքր աստիճանով: Վերջին դեպքում նրանց դրոշ ունենալու փաստը կաակածելի է թվում:

Ինչ վերաբերում է հիշյալ հաղորդումների միջոցով պորամիավոր (նախարարական)—դրոշ հարաբերության քանակական արտահայտման իմաստը պարզելուն և այդ ճանապարհով ինչ-որ արդյունքի հասնելուն, այսինքն՝ թե քանի պինվոր կար ամեն մի պորամիավորի մեջ կամ դրոշի տակ, կարծում ենք՝ ծանոթությունը «Ջորանամակի» սկզբունքին վկայում է այդ քանակության հայտնաբերման դժվարությունը: «Ջորանամակում» նախարարների պինված ուժերի քանակական տվյալները միմյանցից նկատելիորեն տարբերվում են. ընդամենը նշված են 86 տոհմեր, որոնցից 2-ն ունեն յուրաքանչյուրն ավելի քան 10000 հեծյալ («բյուրավորք»), 20-ը՝ 1000 և ավելի («հավարավորք»), 8-ը՝ 500 — 1000 հեծյալ, 42-ը՝ 100 — 500 («հարյուրավորք»), 14-ը՝ 50 հեծյալ: Նախարարական պորաբաժինների թվակազմերի այս խոշոր տարբերությունները պահպանվում են նաև IX — XI դարերում: Գրանք պայմանավորված էին ոչ միայն նախարարների տիրույթի չափերով, այլև գավառի տնտեսական վարձագյման մակարդակով և այլն: Ամեն դեպքում դրոշ—նախարար կապն անհնար է ճշգրտել նաև դրոշ—պորամիավոր կապի քանակական արտահայտության միջոցով, քանի որ վերջինս հաստատուն և կայուն թիվ չէ:

«Սեպհականության» գործոնի և ներքին վարչաիրավական, տնտեսական և այլ գործոնների ազդեցությամբ նախարարական պորամիավորները չէին կարող ունենալ կայուն քանակական արտահայտություն: Գրավոր հաղորդումների մեծ մասում «դրոշ» կամ «նշան» բառերի կողքին ամենից հաճախ հանդիպող «գունդ» բառի քանակական արտահայտություններն ամփածի լավագույն ապացույցն են: Աղբյուրներում «գունդ»-ը հանդիպում է թե՛ որպես մարդկանց փոքրաթիվ խումբ՝ «և վթի. համարոյ ի մոտս իւր պիրաքանչիւր գնդիցն, պոր տեսանէր. էր որ վհավարի, էր որ վերեսուն և վերից,

<sup>26</sup> Վ. Վարդանյան. Վաստիականի Արծրունյաց թագավորությունը: Ե., 1969, էջ 120:

էր որ վերկերիւրոյ և վերերտասանից»<sup>27</sup>, թե՛ որպէս շատ մեծ թվային միավոր. «Տասը հազար բյուրը (10000000:—Ա. Դ.) թվական բարձր հաշիվներում կոչվել է գունդ, տասը հազար գունդը կապել է ավագ գունդ, տասը հազար ավագ գունդը՝ արքա գունդ, տասը հազար արքա գունդը՝ կայսր գունդ»<sup>28</sup>: «Գունդ» բառի այս թվական անորոշությունը, իհարկե, ավելի նեղ սահմաններում, թույլ է տալիս պատկերացնել «դրոշի» տակ միավորված պորամասի քանակական արտահայտությունը:

Այս հաղորդումներն ամբողջությամբ վերցված թեև չեն պարզում հերալդիկական նշանակիչ համակարգը, բայց օգտակար են այդ համակարգի որոշ առանձնահատկությունները ներկայացնելու առումով: Դրանք մասնավորապես թույլ են տալիս հատուկ անդրադառնալ տոհմ—անձ, ավելի ճիշտ՝ նախարարական տոհմ—նախարար, նահապետ—սեպուհ ավգակական բնույթի և արքա—նախարար (ընդ որում՝ «ծառայ», «գործակալ», «կուսակալ»), նախարար—ապատ ավատատիրական բնույթի հերալդիկական կապերին:

Գրոշին կից հասարակական միավորներ նշող որոշ մատենագրական հաղորդումներում նախարար (տարբերակներ՝ արքա, սեպուհ)—դրոշ կապերը ներկայացվում են անձնավորված: Գըրանցից հատկապես կարևոր են Մխիթար Այրիվանեցու և Մխիթար Գոշի հաղորդումները, որոնք հավաստում են դրոշի ժառանգման ավանդույթը նախարարից իր ավագ որդուն կամ կրտսեր եղբորը, այսինքն՝ դրոշի ժառանգական փոխանցման կարգը կրկնում էր «տերություն» փոխանցման մաքրաստային եղանակը. «Փոխեցաւ ի Բրիստոս Վասակ իշ-

խանաց իշխանն և էտտ պրօշայն որայ Նորա քաջն Պոռոշ», «Բսկ պրաւշ Նորա և պիող և վիշխանութիւն տուեալ եղբաւր Նորա, ող իշեցեալ էր Բուրդ»<sup>29</sup>: Հակադիր տեղեկություն է հաղորդում Մատթեոս Ուռնապետի, որը, խոսելով Վասպուրականի Թոռնան գավառի իշխան Խաչիկի մասին, գրում է, որ դրոշ ուներ ոչ միայն իշխանն ինքը, այլև նրա որդին<sup>30</sup>: Անհատական դրոշների մասին են խոսում նաև Վասակ ու Մանվել Մամիկոնյանի և Մեհրուժան Արծրունու «նշանների» մասին Բուզանդի հայտնի հաղորդումները: Այդ անձինք, բացառությամբ Խաչիկ իշխանի որդու, որը տոհմի կրտսերն էր, տոհմերի նահապետներ էին, այսինքն՝ նրանց դրոշները կարելի է դիտել նաև որպէս տոհմական դրոշներ:

Որոշ տարբերություն կա նշված և ստորև բերվող հաղորդումների միջև՝ միևնույն անձ—դրոշ հարաբերության սահմաններում: Բուզանդը հատկապես ուշադիր էր Մամիկոնյան տոհմի սպարապետների նկատմամբ. «Ճւ նա (Վասակ Մամիկոնյանը:—Ա. Դ.) կատարէր վերամանս թագաւորին. չորեքհարիւր հազար զօր կուռ վառեալք... համակ հեծելազօրք պրահաւորք, պատենապէնք, սադաւարտաւորք, դրօշաւորք, կապմ նշանաւորք, բազմաձայն փողաբօքն»<sup>31</sup>: Այս հաղորդումներում Մամիկոնյան տոհմի ներկայացուցիչի հետ կապված «դրոշը» նշվում է հոգնակի ձևով, ինչն ավելի շուտ վերաբերում է սպարապետի հրամանատարության տակ գտնվող զորամիավորներ-

<sup>29</sup> Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, հրատարակիչ՝ Մ. Էմին (այսուհետև՝ Այրիվանեցի): Մ., 1860, էջ 66: Հմտ.՝ Կաղանկատվացի, հատված Բ, էջ 367 (վերջին հատորում մեկ հուշեց հնագետ Հ. Պետրոսյանը):


<sup>30</sup> Մատթեոս Ուռնապետի, Ժամանակագրություն, աշխարհագրա թարգմանությունը և ծանոթագրությունը Հ. Բարթիկյանի: Ե., 1991, էջ 100—103: Հմտ.՝ Քիչ-Քառու շառի և նրա սրբու դրոշների, ինչպես նաև Գողարպի, նրա որդի Գիվի և թոռ Գորպպի՝ առաջինի կենդանության օրոք, դրոշների միմյանցից տարբեր լինելը «Շահնամում» (տես Փարգոյցս, Մախառե. Մ. 1960, II, 52—56):

<sup>31</sup> Բուզանդ, IV, 1:

<sup>27</sup> Եղիշե, էջ 302: Հմտ. Հովհաննես Գրասխանակերտցի, Հայոց Պատմություն, աշխարհագրա թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Թոսունյանի (այսուհետև՝ Գրասխանակերտցի): Ե., 1996, էջ 112:

<sup>28</sup> Տես Անանիա Շիրակացի, Մատենադարանություն, աշխարհագրա թարգմանությունը, ծանոթագրությունները, առաջարկում Ա. Գ. Արքատյանի և Գ. Բ. Պետրոսյանի, ծանոթագրություն 2—4:

րին: Նույն իմաստով կարելի է հասկանալ նաև հաջորդ պատմիչների մի շարք հաղորդումները, որոնցում նախարարները բազմաթիվ դրոշների կողքին հիշված են շնորհիվ իրենց գործակալության, իսկ արքաները՝ որպես ամբողջ պորթի գլխավոր հրամանատարներ. ըստ Եղիշեի՝ պարսից բանակի հրամանատար



Բագրատունյաց պետական պիանշանը: Անի (վերականգնությանը Ն. Մառի և Հ. Օրբելու)

Մուշկան Նիսավաժուրտը «Նշանս բաշխեր, դրօշս արձակեր և ի ձայն մեծի փողոյն պատրաստ հրամայէր լինել»<sup>32</sup>: Պարսիկներին վերաբերող նույնպիսի մի հաղորդում գտնուում ենք Մովսես Կաղանկատվացու աշխատության մեջ. «Ապա և բազումք ի գնդից գնդից դոնապահայ և թիկնապահայ և անուանակրացն դրանն Խոսրովու առեալ վնշան դրօշից իրեանց՝ դիմեցին առ Կավատ՝ որդի նորա»<sup>33</sup>: Ստեփանոս Օրբելյանը հայտ-

նում է, որ վրաց Օրբելիները, որոնք վրաց արքունիքի սպարապետներն էին, բացի իրենց արքայի կողմից հրահանգված հիմնական դրոշից, որի մասին կխոսենք ստորև, ունեին սեփական 12 դրոշ<sup>34</sup>: Թեև այս հաղորդումներն անձնավորված չեն և անհնար է դրանց վրա հենվելով տարբերակել, թե տոհմի սեպուհներն ինչ կապի մեջ են եղել հիշյալ բազմաթիվ դրոշների հետ, դրանք արդեն որոշակի կառուցվածք են ուրվագծում:

Գրեթե նույն բնույթի են ներկայացված նախարար (արքա)—դրոշներ կապերը նաև Գագիկ Արծրունու վերաբերող հատվածում, որտեղ ասված է. «... Եւ բազմութիւնք զօրացն սպառապինեալ յաջմէ և յահեկէ՝... տաւիոք հանդերձ դրօշիւք նշանաց առաջի և վկնի ...»<sup>35</sup>: Այստեղ դրոշներն առկա են ոչ միայն տեղական իշխանավորների շքերթում, այլև կարծես «ճանաչում են» Գագիկ Արծրունու գահերեցությունն այլ Արծրունիների նկատմամբ:

Արբյուրներում գտնուում ենք նաև հաղորդումներ, որոնցում որպես նշանակիր միավոր է հանդես գալիս արքան կամ թագավորը, այսինքն՝ առկա է նաև արքա—դրոշ(ներ) հարաբերությունը: Առաջին այդպիսի հաղորդումը Խորենացու արդեն նշված «արծիւս առաջի նորա կրէին» հաղորդումն է, որում նշանակիր միավորը Վաղարշակ Արշակունի արքան է: Աշոտ Բագրատունու թաղման թափորում էին «և խումբք զօրաց պիտուք և վարդուք, ընտրանօք և նշանակօք շուրջ պաշտպանեալք մեծի կաթողիկոսին...»<sup>36</sup>: Աղվանքի Եսմաղեն թագավորը նույնպես ուներ սեփական դրոշ, որի կրկնօրինակն ուղարկվել էր Սյունիքի Անանիա եպիսկոպոսին<sup>37</sup>:

Եվ վերջապես, մի շարք հաղորդումներում խոսվում է առանձին անձանց՝ նախարարներին և արքաներին, շնորհված դրոշների մասին: Օրինակ՝ Գագիկ Արծրունու շքերթը Ատրպատականի ա-

<sup>32</sup> Եղիշե, 232:

<sup>33</sup> Կաղանկատվացի, II, 94:


<sup>34</sup> Տես Ս. Օրբելյան, 49:

<sup>35</sup> Թ. Արծրունի, III, Ե, IV, 9:

<sup>36</sup> Դրասխանակերտոյի, 146—147:

<sup>37</sup> Տես Ս. Օրբելյան, Է, 89:

միրա Յուսուֆի ներկայությամբ նույնպես դրոշի շնորհման տարր ունի: Սա հատկապես նկատելի է Վարդան պատմիչի հաղորդման լույսի ներքո. Հիսն ամիրապետը Հայոց Չաքարիա կաթողիկոսին թույլատրել է իրեն ընդատաջ գալ խաչապատկեր դրոշով<sup>38</sup>: Այնինչ հայտնի է, որ մահմեդական տիրակալներն արգեն



Մամիկոնյանների պատկանող Գսեղ գյուղի Սբ. Գրիգոր եկեղեցու պատկերաքանդակներից. XII դ.

լում էին իրենց քրիստոնյա հպատակներին կենդանապատկեր կամ խաչի պատկերով դրոշներ կրել: Պատահական չէ, որ Վարդան վարդապետի հիշյալ հաղորդումը նրա ուշ ժամանակակցի համար փոքրինչ այլ իմաստ ունի՝ «Յիսէ՛ Շեխայ որդին, ետ արամ՝ և խաչ՝ ի վերայ Չաքարիա կաթողիկոսին»<sup>39</sup>: Այլ կերպ ասած՝ մահմեդական տիրակալի կողմից նման արտոնությունը քրիստոնյա հպատակներին համարժեք էր դրոշ «շնորհելուն»:

Հաղորդումների հիմնական մասում անձ—դրոշ (շնորհված) հարաբերությունը հանդես է գալիս նաև այլ՝ ավելի լայն իմաստով: Հետևյալ չորս օրինակները հավաստում են վերադասի կողմից դրոշի շնորհման «ինվեստիտորային» բնույթը, որպես վերադասի կողմից նախարարի կամ իշխանի ծառայությունների ճանաչման կամ կարգավիճակի բարձրացման նշանի:

<sup>38</sup> Տես Վարդան Բարձրաբերդի, Պատմութիւն Տիեզերական: Մ., 1861, էջ 116: Հմմտ. Վ. Հայրուհի, նշ. աշխ., էջ 88—89:

<sup>39</sup> Այրիվանեցի, էջ 55:

1. «Եւ ըստ պօրավարաց կարգի տայր նմա (Ջվանշիրին Հազկերտը:—Ս. Գ.) նշանակաւ և փողս ադնայութեան՝ երկուս նիվակա ոսկիս և երկուս վահանս ոսկեքանդակս, փոր միշտ առաջի նորա շրջեցուցանեին...»<sup>40</sup>:

2. «Եւ փի սահման էր թագաւորին սպիտակ լինել վառն և կարմիր նշան ունել, հրամայեցին սոցա (Օրբեյաններին:—Ս. Գ.) կարմիր ունել զվառ դրօշին և սպիտակ նշան՝ ի վերայ...»<sup>41</sup>:

3. «...Եհաս լուր նորա (Գուրգեն Ապուպելճի:—Ս. Գ.) առ կայսր Միքայել, թագաւոր Հունաց, և փութացուց վասն նորա փի անյապաղ առ նա հասցէ, և ի մեծ պատիւս հիւպատոսութեան հասուցէ վնա, և խաչանշան դրօշովք ճոխասցի»<sup>42</sup>:

4. «...Ըստ օրինի թագաւորացն Յունաց (Սմբատ Բագրատունին:—Ս. Գ.)՝ տալ առաջի նորա (Գագիկ Արծրունուն, որը դեռևս սեպուհ էր:—Ս. Գ.) նշանակա խաչադրոշ»<sup>43</sup>:

Որոշ առումով «շնորհված» կարելի է համարել նաև տեղական կենդանապատկեր կամ խաչապատկեր դրոշների մասնակցությունը վերոհիշյալ Արծրունի իշխանների կարգավիճակի բարձրացման արարողություններին:

Այս հաղորդումներն, անկասկած, համահունչ են ավելի վաղ դարաշրջանի վերաբերյալ Ն. Ադոնցի դիտողությանը. «Հայտնի են դեպքեր, երբ ապարոշը և մատանին տրվում էին տանուտերությունը հանձնելու ժամանակ՝ սա մի նշանակալից փաստ է, որ նրանց տալիս էին վեստիտուրային բնույթ: Այդպիսի նշանակություն ունեւր, անտարակույս, նաև դրոշը»<sup>44</sup>:

Դրոշի այս նշանակությունը գրեթե նույնն է արքա—դրոշ (շնորհված) հարաբերությունը ներկայացնող հաղորդումներում, երբ ստացողը նախարարի փոխարեն արքան է, իսկ շնորհողը՝ ավե-

<sup>40</sup> Կադանկատվացի, II, ԺԸ:

<sup>41</sup> Ս. Օրբեյան, ԿԶ:

<sup>42</sup> Թ. Արծրունի, III, ԺԳ:

<sup>43</sup> Նույնի՝ III, ԻԳ:

<sup>44</sup> Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 519:

լի հզոր հարևան երկրներից մեկի տիրակալը: Նշենք Բուզանդի հաղորդումը. «Եւ ետ թագաւորն պարսից տանել՝ ի ձեռն Սուրենայ թագ և պատմուճան, և վճառ թագաւորացն տիկնոջն Չարմանդիստոյ, և թագս մանկանցն որդուցն երկոցունց Արշակայ և Վաղարշակայն»<sup>45</sup>: Նման դեպք ներկայացված է նաև Հովհաննես կաթողիկոսի գրքում. «Ապա միանգամայն իսկ և ուստր վնա (Աշոտ Բ-ին: — Ա. Դ.) մարտիրոսի և որդի սիրելի Կայսր իւր անուանէր. և վարդարէր վնա ծիրանապգեաց փառօք և երևելի ոսկեհուռն հանդերձիւք և ոսկետուռն վառիւք և կամար ականակապ ընդ մէջ ամէր»<sup>46</sup>:

Բերված մատենագրական հաղորդումները թույլ են տալիս որոշ ընդհանրացումներ կատարել IV—XIII դդ. հայոց հերալդիկայի հասարակական ենթակառուցյի վերաբերյալ: Հերալդիկական նշան—հասարակական նշանակիր միավոր հարաբերությունը դրսևորվում է մի քանի հիմնական եղանակով: Նախ՝ ուշադրություն է գրավում դրոշ—վորաբաժին կամ դրոշներ—վորաբաժիններ կապի գոյությունը, որն, իհարկե, արտահայտվում է «գնդից-գնդից, դրօշուց-դրօշուց, վաշտուց-վաշտուց» և նման այլ հաղորդումների միջոցով: Չորաբաժինների քանակական փոփոխականության մասին որոշ պատկերացում են տալիս «Չորանամակի» թվական տվյալները և «գունդ» միավորի թվական նկարագիրը: Մեկ դրոշի տակ միավորված վիևվորների թիվը կարող էր տատանվել մեկ-երկու տասնյակից մինչև մի քանի հազար կամ տասնյակ հազար: Հայտնի է նաև, որ միջնադարյան Հայաստանում գործում էր վորքի համալրման տարածքային սկզբբունքը, այսինքն՝ յուրաքանչյուր վորաբաժին ներկայացնում էր առանձին տարածք, տեղական համայնք կամ նախարարական տիրույթ: Այսպիսով՝ դրոշը նույնպես ներկայացնում էր միանգամայն որոշակի տարածքային միավոր, որը նախարարական դարաշրջանում համապատասխանում էր «տերությունը»:

Ավելի բարդ է հերալդիկական նշանի վերաբերությունը անձ—տոհմ հարաբերություններին: Աղբյուրներն այստեղ վկայում են երկու իրարամերժ միտումների մասին, որոնք նախարարական դարաշրջանում արտահայտվում էին «սեպհականության» և միաժառանգության սկզբունքների հակադրությամբ:



Կիլիկիայի թագավոր Լևոն Ա-ի (1198—1219) վիսանյանը դրամի վրա

յամբ, ինչը հանգամանորեն քննարկված է հայ պատմագիտության մեջ: Այս հակադիր միտումների ազդեցիկությունը հերալդիկայում առայժմ հաստատվում է սակավաթիվ մատենագրական հաղորդումներով. Այրիվանեցիի հայտնում է Վասակի դրոշի՝ նրա ավագ որդու անցնելու մասին (միաժառանգություն), իսկ Մատթեոս ՈՒՌՀԱԿԵՅԿՈՒ հաղորդման մեջ առանձին դրոշներ ունեն Խաչիկ իշխանը և նրա կրտսեր որդին («սեպհականություն»):

Միջնադարյան արևմտաեվրոպական հերալդիկայում այս հակադրությունը լուծվել է հերալդիկական պատկերանշանների կանոնակարգված («հերոլդների» հաստատության միջոցով) բազմազանությամբ: Այնտեղ ընդունված էր տոհմական վիսանյանի միաժառանգությունը. հերալդիկական նշանը հորից անփոփոխ անցնում էր ավագ որդուն, այն դեպքում, երբ մյուս որդիները պարտավոր էին հայրական նշանի որոշ փոփոխության միջոցով «հեռանալ» միազգիժ փոխանցվող նախորինակից: Ընդ ո-

<sup>45</sup> Բուզանդ, V, ԼԸ:

<sup>46</sup> Դրասխանակերտոյի, էջ 286:

րում՝ կիրառվում էին մայրական կամ կնոջ կողմի հերալդիկական նշանների մանրամասները կամ ստեղծվում էին նոր հերալդիկական նշաններ՝ տվյալ անձի ծառայության դիմաց ավատատիրոջ կողմից շնորհված, ըստ պաշտոնի, սխրանքի և այլն<sup>47</sup>: Սակայն հասկանալի պատճառով այս մոդելը չի կարող ընդունելի համարվել աղբյուրներում հայկական հերալդիկայի վերաբերյալ պահպանված տվյալների համակարգման խնդրում:

Եվ վերջապես՝ հերալդիկական համակարգի մաս են կազմում «շտրիվոդ» դրոշները, որոնք կարելի է տարբերել ըստ շտրիհող և ստացող կողմերի՝ արքայից նախարարին կամ վերադասից ստորադասին, և ըստ «գործակալության», կամ «ծառայության»: Անշուշտ այս ստումներն ինչ-որ չափով նույնասուն են: «Շտրիվոդ» դրոշները կարելի է համարել հերալդիկական համակարգի «թարմացման» և «սեպիականության» միտումի նշանավորման միջոց:

Անհրաժեշտ է նաև հիշել դրոշների հասարակական նշանակության վերա-

բերյալ Վիլհելմ Բախմուլի կարծիքը, որին համաձայն է նաև Կոռնակովը. դրոշը ոչ միայն տարբերանշան է հասարակության վերնախավի ներկայացուցիչների միջև, այլև՝ «խիստության և միասնության նշան»<sup>48</sup>: Այսինքն՝ յուրաքանչյուր հասարակական միավորի նկատմամբ դրոշն ունի երկակի՝ ներքին և արտաքին գործառույթ: Հայոց նախարարական դարաշրջանի հասարակական հարաբերությունների դեռևս բավականաչափ չպարզված համայնապատկերում հերալդիկական նշանների այս երկակի գործառույթը նույնպես լիովին պարզ չէ: Սակայն կարող ենք ասել, որ «միաժառանգության» և «սեպիականության» հակադրության դրսևորումից բացի դրոշներին բնորոշ է եղել նաև մեկ այլ հակադրություն՝ «խլիսանության» և «միասնականության» հակադրությունը: Վերջինս դրսևորվել է ինչպես նախարարական տոհմի, կամ «ազգի», այնպես էլ նախարարական տիրույթի՝ «տերության», կամ «աշխարհի», ներսում:

<sup>48</sup> Г. В. Вилинбахов, Знамена как исторический источник и их место в системе геральдических памятников. В кн. «Геральдика. Материалы и исследования», сс. 95–107.

## ВОЕННАЯ ИСТОРИЯ

### ГЕРАЛЬДИЧЕСКАЯ СИСТЕМА КАК СРЕДСТВО ДЛЯ ОПРЕДЕЛЕНИЯ АРМЯНСКОЙ ВОЕННОЙ ОРГАНИЗАЦИИ

А. А. ДАБАГЯН

РЕЗЮМЕ

Армянская геральдика в качестве вспомогательной исторической дисциплины существует полтора века. За это время уже восстановлены три герба царских династий (в нахарарскую—княжескую—эпоху, охватывающую период II в. до н. э.—XIII в. н. э., в Армении правили 4 династии) и более десятка княжеских гербов (в V в. в Армении существовало более 80 нахарарских родов).

Восстановление производится на основе источников двух типов: письменных сообщений и графических изображений (скульптурных, аверсных и т. д.). Однако письменные сообщения не дают исчерпывающей информации не только о сути гербах и знаменах, но и о порядке их наследования и передачи потомству. В частности, до сих пор остается открытым вопрос о том, имели ли право на собственный герб младшие члены княжеских семей или же этим правом обладал лишь глава рода. Данный вопрос представляет суще-

<sup>47</sup> А. Б. Лакиер, Русская геральдика. М., 1990, сс. 35–37.



ственный интерес в связи с заменой майоратного права наследования уделов-останов на «сепхаканутюн», согласно которому правом наследования пользовались и младшие члены семей.

Не менее важным является вопрос о том, обозначал ли термин «дрош» (знамя) только личность (царя, нахарара) или же, одновременно, и определенное воинское формирование, как «алам» в арабском или «хоругвь» в польском.

В письменных источниках содержатся сведения о том, что знамя даровалось вассалу в знак признания его заслуг перед сюзереном, как бы «инвеституруя» определенную независимость и владетельность данной личности. В случае царей дарователем знамени выступал сюзерен более крупного государства (Византии, Халифата, Священной Римской империи).

Эти вопросы представляют интерес как с точки зрения чистой истории, так и уточнения структуры и численности армии средневековой Армении.

## MILITARY HISTORY

### HERALDIC SYSTEM AS A MEANS FOR DEFINITION OF ARMENIAN MILITARY ORGANIZATION

A. A. DABAGHYAN

#### SUMMARY

The armenian heraldics as auxiliary historical discipline exists 1,5 centuries. For this time three emblems of imperial dynasties (in so called «nakharar»—princely—epoch covering the period II c. BC—XIII c. AD in Armenia ruled 4 dynasties) and more than ten princely coat of arms have already been reconstructed (in V c. AD in Armenia existed more than 80 nakharar clans).

The restoration is made on the basis of sources of two types: the written messages and graphic images (sculptural, aversal etc.). However written messages do not give the full information not only about essence of the coat of arms and flags, but also about the order of their inheritance and transfer to posterity. In particular, till now there is an open question on, whether the younger members of nakharar families had the right on the own coat of arms or this right had only the head of the kin. The given question represents essential interest in connection with replacement primogeniture of the right of inheritance of independent principality («ostan») on «sepakanutyun», according to which the younger members of families also enjoyed the right of inheritance.

Not less important is the question on designation of the term «drosh» (flag) only a person (king, nakharar) or, simultaneous interpretation of certain military formation, as «alam» in Arabian or «khorugv» in Polish.

In written sources items of information are contained about the flag granted to a vassal as a token of confession of his merits to a suzerain, as though «proclaiming» the certain independence and ownership of the given person. In case of kings the suzerain of the larger state (Byzantium, Caliphate, Holy Roman Empire) acted as a grantor.

These issues are of interest as from the point of view of a pure history, and specification of structure and strength of army of Medieval Armenia.

Պատասխանատու քարտուղար՝ Գ. Ս. Չիլինցարյան  
Հայերեն տեքստի խմբագիր՝ Վ. Խ. Բաղդասարյան  
Ռուսերեն տեքստի խմբագիր՝ Բ. Պ. Բալայան  
Չնափորող նկարիչ՝ Ս. Հ. Նարազյան  
Տեխնիկական և գեղարվեստական խմբագիր՝ Ռ. Խ. Գևորգյան

Տեքստերի թարգմանությունը՝ Հ. Մ. Ամիրխանյանի, Գ. Ս. Չիլինցարյանի

Համակարգչային ապահովումը՝ Մ. Հ. Թադևոսյանի, Ա. Լ. Զորարովի

Լուսանկարչական ապահովումը՝ «Արմենպրես» գործակալության  
և ՀՀ ՊՆ լրատվության և քարտուղարության վարչության

Հանձնվել է շտրվածքի 08.01.1999: Ստորագրվել է տպագրության 14.02.1999:  
Թուղթը՝ օֆսետային: Ֆորմատը՝ 70×108 <sup>1</sup>/<sub>16</sub>: Հրատարակչական 8,1 մամուլ:  
Տպագրական 6,0 + 2 ներդիր: Պլանմետաղական տպագրական 9,1 մամուլ: Տպարանակր՝ 500:  
Տառատեսակը՝ «Թայմս» և «Բայթիկա»: Տպագրությունը՝ օֆսետ:  
Գինը՝ պայմանագրային: Վկայական՝ 523: Գոտիչ՝ 69263:  
Խմբագրության հասցեն՝ Երևան, Նալբանդյան 20:  
Հեռ.՝ 56-36-88, 56-28-51

Տպագրվել է «Ամարտ» տպարանում

**ՏԵՂԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ԵՎ ՋԻՆՎԱԾ ԲԱՍՈՒՄՆԵՐ**  
**ЛОКАЛЬНЫЕ ВОЙНЫ И ВООРУЖЕННЫЕ КОНФЛИКТЫ**  
**LOCAL WARS AND ARMED CONFLICTS**



Ազգակրոնական զինված հակամարտություն. Լիբանան, 1978  
Этнорелигиозный вооруженный конфликт. Ливан, 1978  
Ethno-religious armed conflict. Lebanon, 1978  
(«Combattre, Photographs of Magnum Photos». Paris, 1998)



Տեղային պատերազմ. Արաբա-իսրայելական զինված բախում. Սուեցի ջրանցք, 1973  
Локальная война. Арабо-израильский вооруженный конфликт. Суецкий канал, 1973  
Local war. Arab-Israeli armed conflict. Suez channel, 1973  
(«Combattre, Photographs of Magnum Photos». Paris, 1998)



Տեղային պատերազմ. Բուվեյթ, 1991

Локальная война. Кувейт, 1991

Local war. Kuwait, 1991

(«Combattre, Photographs of Magnum Photos». Paris, 1998)



Ալբամիցյան զինված հակամարտություն. Բոսնիա, 1993

Международный вооруженный конфликт. Босния, 1993

Inter-ethnic armed conflict. Bosnia, 1993

(«Combattre, Photographs of Magnum Photos». Paris, 1998)



Տեղային պատերազմ. ապաշրջափակումային ռազմական գործողություններ. Ղարաբաղ, 1993  
Локальная война. Военная операция по деблокированию. Карабах, 1993  
Local war. Military operation on deblocking. Karabakh, 1993  
(«Les Nouvelles d'Armenie», 1993, № 2)



Ազգամիջյան զինված հակամարտություն. Չեչնիա, 1995  
Межнациональный вооруженный конфликт. Чечня, 1995  
Inter-ethnic armed conflict. Chechnya, 1995  
(«Combattre, Photographs of Magnum Photos», Paris, 1998)



Բաղաբացիական պատերազմ. Տաջիկստան, 1998  
Гражданская война. Таджикистан, 1998  
Civil war. Tajikistan, 1998  
(Ռեյտեր – Արմենպրես)



Ազգամիջյան զինված հակամարտություն քրդերի և թուրքերի միջև. Թուրքիա, 1993  
Межнациональный вооруженный конфликт между курдами и турками. Турция, 1993  
Inter-ethnic armed conflict between Kurds and Turks. Turkey, 1993  
(«Les Nouvelles d'Armenie», 1993, № 2)



Հերալդիկ կերպարներ Ադրամար կղզու Սր. Խաչ եկեղեցու հարավային պատին (X դ.):  
Վերևում՝ Պասկուջ քոչունը, ներքևում՝ կարավ հոշոտող արժիկ

Геральдические изображения на южной стене церкви Св. Креста (X в.) острова Ахтамар (озеро Ван). Вверху – птица Паскудж, внизу – орел, раздирающий куропатку

Heraldic images of the south wall of Saint Cross's church (X century) on Akhtamar island (lake Van). On the top – Paskudje bird, on the bottom – eagle tearing up partridge

# ՄՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆՄՈՒՇՆԵՐ



9457 «ՈՒՐԱԳԱՆ»  
220-մմ ՅԿՈՂ

Նախանշանակված է կենդանի ուժի և ոչ գրահապատ տեխնիկայի խոցման, մարտավարական խորության վրա տեղանքի հեռահար ականապատման համար:



9458 «ՍՄԵՐՉ»  
300-մմ ՅԿՈՂ

Նախանշանակված է մերձավոր օպերատիվ խորության վրա կենդանի ուժի, ոչ գրահապատ և գրահապատ տեխնիկայի խոցման համար:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՎԱՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

|   | «ՈՒՐԱԳԱՆ» | «ՍՄԵՐՉ» |
|---|-----------|---------|
| Հրածգության հեռահարությունը, կմ՝        |           |         |
| առավելագույն                            | 34        | 70      |
| նվազագույն                              | 8,5       | 20      |
| Համազարկի տևողությունը, վրկ             | 20        | 38      |
| Ուղղորդիչների քանակը, հատ               | 16        | 12      |
| Հիմնական ՌԱ-ի զանգվածը, կգ              | 280       | 800     |
| ՄՄ զանգվածը, տ                          | 20,2      | 43      |
| Անձնակազմը, մարդ                        | 4         | 4       |
| Վերալիցքավորման ժամանակը, րոպե          | 15        | 36      |
| SLU-ի վրա տեղափոխվող ՌԱ-երի քանակը, հատ | 16        | 12      |